



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material



✓ 611



P. Gray  
H. F. Gray's Far Journey w<sup>10</sup>



1999 ՀՊ ահ.

ԾՐԱԳԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ

ԵԿ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ


ԵԿ

ՆԻԱ ԱՅԺՄԵԱՆ ՎԻՃԱԿԻՆ ՎՐԱՅ

ԿԱՐԱԳԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԾՈՀԿԱԶԱՐԵԱՆՑ

(Գաղղիականէն թարգմանուած)



ԱԿԱԴԵՄԻԿՈՍ  
ՀԱԿՈԲ Հ. ՄԱՆՈՒՉՅԱՆ

ՏՓԽՒՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ԳԱՐԵՎԵԼԻ ՄԵԼՔՈՒՄԵԱՆՑ ԵՒ ՀԱՅ ԲՈՐՉՈՒՄԱՅ ԵՆՖԻԾԱՆՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ



611

հ. 8 607

ԵՐԱԳԻՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ

заборонено М.Ю.Т.

ім'яючі позиції

дозволено цензурою.

20-го Августа 1863 года Г. Тифлісъ.

ԱԿԱԴԵՄԻԿԱՆ  
ՀԱՅՈՐ Հ. ՄԱՆԱՎԵՑԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՅ ազգի գոյութիւնն յիրաւի պատմութեան մի սքանչելիք է, որ շատ կողմանէ արժանի է Եւրոպացի գիտնականներուն ու շաղըութեան և խորին քննողութեան :

Հայոց ազգն ամենելին մի օրուայ համար չերեւեցաւ աշխարհիս երեսին վրայ, որ մի անցաւոր պաշտօն կատարելուց յետոյ, շուտով էլ կրկին ոչնչութեան մէջ մտնի :

Եղիպատացիք, Ասորեստանցիք, Քաղդեացիք, Բաբելացիք, Փղշտացիք, Մովաբացիք, Փրիւգացիք, Փիւնիկեցիք, Թրակիացիք, Կողդիսացիք, Լիւդացիք, Մեղացիք, Կապադովկիացիք, Սկիւթացիք և ուրիշ շատ ազգեր, այլևայլ ժամանակ Հայոց ժամանակակից են եղել. այս ազգերու մեծ մասն էլ նրանց հարեան էին և շատերն էլ բազմութեամբ քաղաքակրթութեամբ, յաջողակութեամբ, առևտրական գործունեութեամբ և զինւորական զօրութեամբ նրանցից դերազանց :

Սակայն, միանդամ որ իրանց պաշտօնը կատարուեցաւ, միանդամ որ իրանց վախճանին ժամբ հնչեց, երկրիս երեսն կուրս գնացին և աներեւոյթ եղան թողելով իրանց երկիրը, ազգայնութիւնը, կրօնը ուրիշներուն : Իրանց միջից շատերուն ցեղն անդամ դադարեցաւ, ոմանք էլ զրեթէ և նշմարանք անդամ չժողեցին յիշատակարաններու և պատմութեանց մէջ : Ովկ կարող է այսօր մի Փիւնիկեցի, մի Լիւդացի, մի Կողդիսացի, մի Կապադովկիացի կամ Փիւնիկեցի գլու-

նել : Յաւիտեանս աներեոյթ եղան և նոր սերունդներու մէջ կորան, գնացին ։ Ծնուշակառակն Հայք ։ Նրանց չափ հին լինելով և նրանց պէս ջղակտոր և ջարդ ու փշոր լինելով, էլեկան տակաւին աշխարհիս երեսին վրայ և պահած են իրանց լեզուն, իրանց քրիստոնէական ազգային կրոնը, իրանց հայրենի երկիրը, իրանց Ախատակարանները, սովորութիւնները և օրէնքները, որոնք իրանց ազգայնութեան նման կենդանի են : Այս իրերուն նայելով կարելի է հաստատել և սկզբ, որ այս ազգը տակաւին իր պաշտօնը չէ կատարել և դեռ ջնջուելու և կործանուելու վրայ չէ : Թէ որ Արևելքին սահմանուած է մի օր քրիստոնէութիւնը ընդունելու, թէ որ քաղաքակրթութիւնն այն տեղ պիտի մտնի, թէ որ այն տեղ բարք և վարք պիտի ամրանան՝ Հայք անշուշտ մի մեծ պաշտօն ունին կատարելու այս վերաբարդացման գործքին մէջ : Ասիոյ Թուրքաստանում, Եղիպատոսում և Պարսկաստանում բնակումեն այլեայլ ցեղերէ և ծեսերէ քրիստոնեայք, Հայեր, Յոյներ, Ասորիներ, Խպտիներ, Քաթոլիքներ և Բրոթէսթանթներ : Բոլոր այս քրիստոնեաներու միջից Հայոց կրօնը դաւանողներն ամենից բազմաթիւ են, իրանցից յետոյ կուգան Յոյնք, Խպտիք, Քաթոլիք, Ասորիք, Բրոթէսթանդք : Այս քրիստոնեաներու Ճիշտ թիւնն անյայտ պիտի մնայ, քանի որ Թուրքաստանում քաղաքական վիճակ և կանոնաւոր աշխարհահամար չլինիլ : Սակայն այս երկիրներում երկար ճամբորդութիւն անելով և կոստանդնուպոլսոյ պատրիարքարանում եղած արձանադրերու մէջ արած յետազօտութեամբս, կարող եմ հաստատուն կերպով պիտի կանոնադրութեան մէջ եղող Հայոց թիւը, 3,000,000-ը կանց կենայ, Յունաց թիւն է ոչ աւելի քան 2,000,000-ից, Քաթոլիկներունն է 280,000, որոնցից 150 հազարը Ասորիք են, 40,000 կամ 45,000-ը Հայք, իսկ մնացածներն են Յոյն և Խպտի : Խպտիք որ առ հասարակ Եղիպատոսումն են բնակում, թուով 150,000 կամ 200,000 են, Ասորիք 150,000, Նեստորականք 100,000, Բրոթէսթանթները, որոնց մեծ մասը Հայք են 15 կամ 20,000-ի հազիւ կհասնին ։ Յոյներն առ հասարակ Անատոլի ծովեղերեայ քաղաքներու մն են բնակում, իսկ Հայք ամէն տեղ ցրուած են, ինչպէս

ծովեղերեայ քաղաքներու մը, այնպէս էլ ցամաքայիններու մը, գլխաւորապէս մի միլիոնի կիուռ չափ Երասխ, Տիգրիս և Եփրատ զետերու հովիտներու մն ու ափներու մն են բնակում բուն Հայաստանու մէջ : Մի միլիոնի չափ էլ Փոքր Հայաստանու մէջ : 250,000 կոստանդնուպօլսում ուր տեղ աւելի բազմաթիւ են քան թէ Յոյները և մնացածներն էլ Փոքր Ասիում, Ասորիքում, Պաղեստինում և Եգիպտոսում : Ուռւսաստանու Հայք 500,000—550,000 են : Պարսկաստանու Հայք 120,000-ից մինչև 150,000, Աւստրիոյ Հայք 20,000-ից մինչև 25,000, Հնդկաստանու Հայք 1,200-ից մինչև 1,500 : Իսկ անկախ Կովկասու մն եղող Հայք են 15,000 : Բոլորը մէկանց մօտ չորս միլիոն :

Այս ազդին սկիզբն ամենահին ժամանակներու կհասնի և իր ազդաբանութիւնը կարծես Աստուծոյ ժողովրդեան ազդաբանութենից աւելի հին լինի : Հայաստան, հենց առաջին անգամու մն, Մովսիսի գրքերում կերեայ, ինչպէս Եղեֆն, <sup>1</sup> ուրոյ մէջ առաջին մարդը բնակեցաւ, նոյն գրքին մէջ երկրորդ անգամ ևս երեան է դուրս գալի, երբ Աստուծած Նոյայ պատուպարուելու համար մի տեղ է ցոյց տալի Արարատ լերան գագաթին վրայ : <sup>2</sup> Այն Հայերն որոնք բնիկ են այս աշխարհին մէջ և միշտ այս լերան չորս կողմերու մն են մնացել խումբ խումբ, այնպէս են համոզուել թէ իրանք Նոյայ որդի Յաքեթայ ցեղեցն են : Բայց ըստ Մովսիսի Խորենացւոյն <sup>3</sup> որ մի զդուշաւոր և ճշմարտախոս հեղինակ է, Հայերն Հայկից են յառաջ գալի, որ էր թոռն կամ թէ աւելի ճիշդն ասելով, թոռնորդի Յաքեթայ : Այս ազդը թէ ծանօթ է հին և նոր ազդերուն այլեւայլ անուններով՝ Արմէն <sup>5</sup>, Արամեան <sup>6</sup>, Թոդ-Արմա <sup>7</sup>,

1 Գիրք Ծննդաց Բ. 8—14 .

2 Նոյնը Ը. 4:

3 Խորենացւոյն պատմութիւնը Եւրոպիոյ գլխաւոր ազգերու ամենալեզուովը թարգմանուած է:

4 Մով. Խոր. Հայ պատ Գ. Ա. զշ. Բ.

5 Եւրոպացիններից :

6 Ասորիններից եւ Հրեաներից :

7 Հրեաններից :

Արմենի <sup>1</sup>, Արման <sup>2</sup>, Սոմէխի <sup>3</sup>, սակայն Հայք, իրանք իրանց ու բիշ անուն չեն տալ բայց միայն Հայ անունը, որոյ յոզնակին է Հայք և երբեմն թողարմա և Թորդոմեան <sup>4</sup> ըստ Հայոց ուղղագրութեան և երբեմն էլ Ասքանապեան <sup>5</sup> : Այն ժամանակն որ կարծւումէ Հայկ ապրում լինի, Բարելոնեան աշտարակաշինութեան ժամանակին կհասնի. հետեւաբար Քրիստոսի թշրւականից 2,350 տարի յառաջ: Հայ պատմագրներու խօսքին նայելով այս ժամանակներումն է, որ Հայկ Բարելոնից չու առնելով իր բնտանիքին և իր ուղեկիցներուն հետ միասին, որոնք թուով մինչեւ 300 ե՞ն եղել <sup>6</sup> գալիս է Արարատայ հիւսիսային Արևմուտքն է Հաստատում Երասխ և Եփրատ գետերու հովիտներում Վանայ լճին մօտ և երկրին բուն բնակիչներն իրան հնագանգեցնելուց յետոյ, Հայ կամ Հայկական աղղայնութիւնն է Հաստատում որնոր պիտի պահպանուէր այնպէս սքանչելի կերպով, այնչափ բնական, ընկերական և քաղաքական կործանումներից, փառամոլ աշխարհակալներու ջարդ և մահ սփռող պատերազմներից և Սկիւթացի, Արաբացի և Սարմատացի բարբարոսներու արշաւանքներից յետոյ: Սեսոստրիսներու, Շամիրամներու, Կիւրոսներու, Աղէքսանդրներու, Արշակներու, Սկիւթացւոց, Հռովմայեցւոց, Սասանեաց, Թաթարաց և Թուրքաց աշխարհակալութիւնները այս ազգն ուրիշ ազգերու նման բնածինջ անելու տեղ, ընդհակառակն նրան քաղաքակրթութեան նոր նոր տարերքներ տուին, որոնք նպաստաւոր եղան նրա գրականութեան, Ճարտարութեան և երկրագործութեան և նրա գեղեցիկ արուեստներու յառաջանալուն :

**Եւրոպացի շտո գիտնականներ նորերումս այս երկրին և**

1 Պարսիկներից :

2 Արաբացիներից :

3 Վարացիներից : Սոմէխի Վարաց լեզով նշանակում է հարաւային, հարաւու ժողովուրդ, վասն զի Հայք Վարաստանում հարաւային կողմումն են, Առմիսէթ, Հայտատան:

4 Հայ պատմագիրները

5 Կարիւն, Վարք Արքոյն Մեսրոպաց Մով. Խոր. Գ. Ա. Պ. Ի. Ի. :

6 Նոյնը Գ. Ա. Պ. Ի. Ի. :

նրա պատմութեան ծագմանը վրայ պարապեցան և հատորաւոր դրբեր շինեցին, ամէն մինը նրա ծագումն իրարմէ լաւ մեկնելու և պարզելու մտքով։ Բայց առ հասարակ սրանք առաջնորդ ունենալով իրանց Հայտառանու համար օտարական բանադէտներ և շատ անդամէլ տարակուսական հողւով ուղղուելով։ Իրանց մէջ դանուեցան ոմանք, որ մինչեւ Հայկայ գոյութեան վրայ անդամ տարակոյս ունեցան, իբրև թէ նա մի առասպելական անձն լիներ, ուրացան թէ աւանդական և թէ պատմական զրոյցներն ու կարծիքները, որոնք այս ազգին հոգւոյն մէջ ընդհանրապէս այնչափ տարածուել, բնաւորութեն ։ Հեշտ բան է մի բան մերժելն ու ուրանալը, բայց այն բանն որ կարող չեղան անել, այս ազգին ծագումը մի ուրիշ կերպով ճշգրտելն ու մեկնելն է, վասն զի այս ազգը քրիստոնի ժամանակներում կար, նոյնպէս հինգերորդ, եօթներորդ, տասներորդ, հինգեասաններորդ և իննետասաններորդ դարերումն էլ կար Քրիստոսից յառաջ, նոյն և մի երկրին մէջ, նոյն և մի անունը կրելով իր վրայ, միշտ ամփոփուած Արարատ լերան բոլորտիքը և Երասխ. Եփրատ և Տիգրիս գետերու ակոնքներու մօտ ։

Ամ դիտեցած օտարական մատենագրերու մէջ, Աղէքսանդր Բաղմավէան առաջինն է Հայոց գոյութիւնը մինչեւ քսաններորդ դարն Հասցնողը Քրիստոսից յառաջ, ասումէ թէ Հայք Փիւնիկեցւոց վրայ մի արշաւանք անելով և նրանց վրայ մի յաղթութիւն տանելով Արքահամայքեռորդին զերի տարան ։ ։ Լաւ զիտենք, որ Արքահամ Երրայեցւոց նահապետը նոր թրւականից 2000 տարի յառաջ էր ապրում և որպէսզի Հայք կարող լինելին Փիւնիկեցւոց դէմ այնպէս հեռաւոր տեղեց պատերազմ բաց անել, որոնք ծովային զօրութիւն ունելին և զօրաւոր ու ծաղկեալ ազդէին, զրիթէ քիչ որ տանք Հայոց տէտք է, որ գոնէ երկու դարուայ չափ գոյութիւն տանք Փիւնիկեցիներից յառաջ, այս կերպով կդանենք և Սովոչս Խորենացւոյն Հայոց ազդին ծագման համար նշանակած թուա-

1 Եւսէրիսս Պամիիւղոս, պատրաստութիւն աւետարանական, Յօդ. Բ. Ե. 18. Առերբ զրոց այս պատերազմի մասին պատմածը կտարբերի Եւսէրիսսի պատմածիցը, ուես Ծննդ. ԺԴ.

կանը : Աեսոսատի վերին Ասխա արշաւելիս 1490-ին, Քրիստոս  
սից յառաջ, Արդոնաւորդներու դէպի Կողղիս արշաւելիս 1126  
ին, որնոր սահմանակից է Հայաստանու, Շամիրամայ պատերազ-  
մին 1300-ին և Տրովագայու պատերազմում 1190-ին Հայաս-  
տանու և Հայաստանցոց անունները կրկին կրկին անդամ  
յիշուած են <sup>1</sup> ջակիտոս <sup>2</sup> ասումք, որ Յէրէի հրապարակական  
շինութեանց վրայ փորագրուած արձանագրութեանց մինչ է  
եղել բամազէղ թագաւորի Ախովիոյ, Եթովպիոյ և Հայոց ու  
Ասորոց բնակած բոլոր երկիրներուն յաղթելը :

Այս տեղ առանց կամենալու Հայոց աշխարհին կամթէ  
նրա երկրագրութեան ամբողջ պատմութիւնն անելու, ջանք  
կանեմ միայն նրանց գլխաւոր իրերն յիշատակելու : Այս Ծը-  
րագիր Պատմութիւնը վեց այլեայլ շրջաններու է բաժանա-  
ռում, որոնք իրարից որոշումեն, իրարից աւելի նշանաւոր  
դէպքերով : Առաջին շրջանումը հայկական ազգայնութիւնը  
պատմութեան մէջ երեւումէ և կազմում : Երկրորդումը, Հա-  
յաստան աշխարհը մի նահանգ է լինում Սելեկացւոց պե-  
տութեան : Երրորդումը կրկին անդամ իրեւ անկախ տէրու-  
թիւն է կանգնեում Արշակունեսնց ձեռքով: Չորրորդումը նո-  
րունց Հայաստան աշխարհը ընկնումէ հետպատէ Յունաց:  
Պարսից և Արաբացոց տիրապետութեան տակ : Հինդերո-  
դումը վերստին վերահաստատումէ այլեայլ անկախ տէ-  
րութիւններով և վեցերորդումը Ռուբինեանց թագաւորու-  
թիւնն է ձեւանում : Այս վեց բաժանումներու վրայ մի եօթ-  
ներոդ բէլեմ աւելացրել, որոյ մէջ խօսումեմ Հայոց իրանց  
երկրից չուելը և օտար երկիրներումն գաղթելը և այն վերջին  
դէպքերու մասին, որոնք պատահեցան վերջին գարումն ի-  
րանց երկրում և այս ազդին այժմեան վիճակին վրայ :

1 Ստրաբոն եւ Յուստինոս, Պատ. Փիլիպպոսի Գ. ԽԲ. ՊԼ. Բ. եւ Գ.  
Հայոց մի Եւրոպական ծագում են տալի, վկայութիւն բերելով, թէ մի  
Արմենոս անուն Թեսաղոնիկիցի Յասոնի զօրավարներից այս երկիրը  
նուածեց ու նրան վրայ իր անունը դրաւ Հերոդոտոս Գ. Է. ՊԼ. ՀԳ.  
Հայոց մի Փրիւդիական սկիզբ է տալի, որնոր նոյնպէս Եւրոպական  
ծագում ունենալու կերթայ, որչափ որ քիչ հաւանական երեւայ առա-  
ջին անդամումն Հերոդոտոսի կարծիքը, պատմականօրէն ճշդրառած  
է, որ Հայք իրանք իրանց Ասքանազեան են անուանում, որնոր ցոյց  
է տալի մի յաղորդակցութիւն ծագման կողմանէ Ասքանազներու հետ  
որոնք Փրիւդիայի նախնի բնակիչներն էին.

## ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

(2350—ից մինչև 330 Յիսուս Քրիստոսից յառաջ)

— — — — —

Հ ԱՅ Կ ղարձ է անում բարելոնից իր տնօվն ու տեղովն և երեք հարիւրի չափ մարդիկներով ու գալիս բնակւումէ Վանայ լճի հիւսիսային արեկելեան կողմը, Եփրատ ու Տիգրիս զետերու ակունքներու մօտ : Մի ճակատամարտի մէջ սպանումէ Բէլին կամ Բէղոսին, բարելոնի թագաւորին, որ իրա վրայ էր յարձակել և այնպէս հաստատում հիմնումէ Հայ կամ Հայկական ազգայնութիւնը : Իր ցեղը, որ երբեմն անկախ և երբեմն հարկատու է լինում բարելացւոց, Ասորեստանցւոց, Մեղաց, Պարսից իր ազդը 2,000 տարւոյ չափ կառավարումէ :

Հ ԱՅ Ք, Թէն. ընութեամբ խաղասէր և երկրագործ ժողովուրդ են ըլնում, սակայն Հայկայ սերնդոց մի քանիսը մին ժամանակ իրանց աշխարհից դուրս են գալի և գնումնեն աշխարհակալութիւն անելու, կամ բնակիչներուն աճելուն և բազմանալուն համար, կամ աւարու կողոպուտ անելու ցանկութեամբ կամ թէ իրանց հօտերուն լաւ լու արօտներ ճարելու համար : Հայք իրանց գլուխուննենալով քաջ աշխարհականն Արամ դուրս են գալի բուն Հայաստանից և արևմտեան կողմում Եփրատի և Աղիւսի մէջ տեղ գտնուած երկիրը գրաւում և իրանց ևն իւրացնում: որնոր յետոյ կապադովկիա կոչուեցաւ : Հարաւային կողմումն էլ Միջաղետայ և Մէլիտինի մի մասն, որնոր յետոյ Փոքր Հայք տառեցաւ : Հիւսիսային կողմումն մինչեւ Կիւրո (այս օսուայ կուր անուն զետը) տարածուած երկիրը : Արեկելեան կողմումը մինչեւ կասպից ծով տարածուած աշխարհը Ատրպատականի մի մասն էլ

միասին : Յաստէս է մեր յառաջը բերում Մովսէս Խորենացին Հայաստանու աստիճան առ աստիճան բնդարձակուելը տասներեք դար Յիսուս Քրիստոսից յառաջ<sup>1</sup> : Դիողորոս Սիկիլիացին<sup>2</sup> այս պատմութիւնը մի դար յետոյ կատարուած է մեր յառաջ բերում մի ուրիշ կերպով : Կա ասումէ որ «Նիսոս . . . իր զօրքերը Հայաստան մտցրուց և բնակիչները սարսափեցուց մի քանի քաղաք աւարի առնելով : Բարսանէս նըւրանց թաղաւորը տեսնելով, որ անկարող է դէմ կնել, պարզեցնելով իր թշնամոյն յառաջն է գալի և հպատակութիւն է ցոյց տալի նրան : Նիսոս էլ մեծանձնութեամբ է վարւում նըւրան՝ հետ և նրան Հայաստանի թաղաւորութիւնն է տալի «Նրանցից միմիայն օղնական զօրք պահանջելով» :

Արմաւ իր կամ Արամայ — իր, Ասքնի, Տիղրանակերտ, Ցուլակերտ, Շամիրամակերտ (կամ Շահ — Միհր-ասկերտ, որոնք քաղաքի անուններ են կը ել իրանց վրայ, այն ժամանակն ուրիշ բան չէին, բայց միայն մի քանի հարիւր հեղուղերու խումբեր որոց մէջ ձմեռուան ժամանակն էին անցկացնում և ուր տեղ պատուպարումէին ցրտի դէմ կենդանիներու երամակները էլի նորունց գալնան գուրս թողելու համար : Հայկայ սերունդները երկար ժամանակ իրեւ երկրադործ կամ հովեւ թագաւոր կեանք վարեցին, միմիայն Շամիրամակերտ քաղաքը Հայաստանու Հեղիորողիսը, որնոր հաւանական է արեգակոնն և լուսնին նուիրուած լինի, երեւումէ որ այն ժամանակ զարդարուած լինի խորհրդաւոր անձաւններով, որոնք փարուած են սրածայր սարին մէջ, դերեկմանատեղի լինելու համար, ինչպէս Եղիպտոսի բուրդերը հովեւ թագուորներու ժամանակ Հայքիրանց տիրած երկիրներում, մանուանդ կապագովիիում և Պոնտոսում, կրակապաշտութիւնն ու Անայիտ չաստուածուածին մտցրեցին :

Հայաստան աշխարհը թէե հայկաղանց ժամանակ Ասիոյ ամէնից զօրաւոր և ամէնից ծաղկեալ աշխարհը չէր, ինչպէս էին Սոսրեստան և Պարսկաստան, սակայն միշտ իր կարեւորութիւնն ուներ, իրա զաշնակցութիւնն ու միջնորդուածուածին մտցրեցին :

1 Պատմութիւն Հայոց Աշխարհին Գր. Ա. զւ. ԺԶ. և ԺԴ.

2 ԳՐ. Բ. զւ. Ա.

թիւնը միշտ խնդրեցին մեծամեծ աշխարհականներն ամեն անդամ, որ խնդիր եղաւ այն ժամանակուայ աշխարհիս վիճակին վրայ : Աւստի տեսնումնենք, որ Զարմայր Հայաստանու թաղաւորը, Պրիամու<sup>1</sup> օդնութեան է գնում Տրովադայու պաշտրման ժամանակ 1190 թուին, Հայոց և Ասորեստանցւոց զօրքերով : Պարոյրը, մի ուրիշ Թաղաւոր Հայաստանու, գնում է 620 թուին Կիաքսար Մեղաց թաղաւորին հետ բարելունեան<sup>2</sup> պետութիւնը կործանելու : Հրաշեայ 600 թուին, տալիս է Նարուղողոնոսորին մի զօրաւոր բանակ Երուսաղեմը<sup>3</sup> կործանելու համար : Տիգրան Ա. 535 թուին Կիւրոս Պարսից թաղաւորին հետ գնումէ Մարաստանը<sup>4</sup> և Ասորեստանը<sup>5</sup> նըւաճելու : Հայկական բանակը միանումէ Քսէրքսէսին Յունաստանիը<sup>6</sup> դրաւելու : Վահէ վերջին թաղաւորը Հայկայ<sup>7</sup> հարստութեան, 50,000 հետևակ և 7,000 ձիաւոր զօրքով պատերազմումէ Աղէքսանդր Մակեդոնացւոյն դէմ, Գարեհին ու իր տէրութիւնը պաշտպանելու համար : Արակելացի ճակատամարտումը սպանելումէ Վահէ 330 թուին և Հայաստանն էլ 2,020 տարուայ տեւականութենից յետոյ փոփոխութիւն է կըրում միանգամայն թէ իր սահմաններումը և թէ իր հարստութեամբը և իր կառավարութեան կերպին մէջ, երկումասն բաժանուելով Սելևկացւոյ և Հիւրկանիոյ թաղաւոր Փրատիւնեսի միջում :

Անայ<sup>8</sup> քարաժայուերու մէջ փորուած անձաւները, ան-

1 Մոլ. Խոր. Պատ. Հայ Գր. Ա. դլ. ԺԲ.

2 Երեւմիա Գր. Ա. 27.

3 Մոլ. Խոր. Պատ. Հայ. Գր Ա. դլ. ԽԳ.

4 Նոյնը Գր. Ա. դլ. ԽԶ.

5 Քսենոփոն, Քիրոպէտիա . Գր. Գ. դլ. Ա. Գր. Ը. Ը. Հայկական բանակին թիւը, որնոր Կիւրոսին օդնական եղաւ այս պատերազմում համառամ էր 4,000 հեծելազօր և 40,000 հետեւակ, նոյնչափ դօրք էլ Հայաստանումն էր մնում երկիրը ու պաշտպանելու համար :

6 Հերոդոտոս Գր. Է. դլ.

7 Կտէսիաս Գր. Գ. դլ. Գ. Օրոնտէսի և Միթրոսդէսի վրայ Խոսում է, որոնք ասում է, Արակելացի ճակատամարտին մէջ Հայոց բանակին հրամանատարներն էին,

8 Հայք Շամիրամակերտ են ասում այս քաղաքին, որ նշանակում է

Համար արձանագրութիւները սեղածեն տառերով, որոնք այլ ևսյլ կողմէրից այս ապառաժի վրայ ծածկուած են, ինչ պէս նաև Մանազկերտի և Արտիմէդի<sup>1</sup> ժայռերու վրայ, որոնք հին քաղաքներ են հարաւային Հայաստանում, Դարիոնասի (տաճկացմէ Պայազիտ) և Պտէրիոյ<sup>2</sup> որոնք փոքր Հայաստանում քաղաքներ են Ալիւսի մօտ, և այս վերջերում Համելտոն և Շարլ Տէքսիէր հնապէտներու գտած, Եփրատի վրայ, Անւոյ և Տիգրանտկերտի<sup>3</sup> յիշատակարանները ցոյց են տալի, որ քաղաքակրթութիւնն ու արուեստադիտութիւնը, ինչպէս նաև ճարտարապետութիւնն ու քանդակադորձութիւնը մի կարի նշանաւոր աստիճանի են հասել Հայաստանի մէջ այն հին ժամանակներում, երբ Հռովմհաղիւ դուրս

Շամիրամից շինուած քաղաք, Կերակամ կերդ բառը, Հայ և Զէնդ լեզուներում հասարակ է և պատասխանում է Սլաւեան կրատ և Կորուրաուին, որ կնշանակէ քաղաք: Շահ-Միհր Զէնդ լեզուով կնշանակէ թագաւոր կամ առողուած-արեգակն, Վան քաղաքը երեւում է, որ հնումը արեգական պաշտաման նորիրուած լինի, ինչպէս Արդամմէտ, մի ուրիշ քաղաք նրա կշտին Անահտայ էր նորիրած և Ոստան նոյնպէս մի ուրիշ քաղաք նրա մերձաւոր, Աստղան էր նորիրած կամթէ Լուսոսի. (Լուսոյն) որուն Հայք պաշտում էին Մահիկ անունով, Կապաղովիացիք. Մաա կամ Մէն անունով, որնոր Հռովմայեցիք Մանսիսի դարձրին. Նըրա համար, որ Լուսինն էր ամիսներու բաժանուամը որոշողը: Մոլոչ Խորենացին իր Հայոց պատմութեան մէջ. Գր. Ա. Պ. Ժ. այս քարայրներն իրանց սեղածեւ տառերու արձանադրութիւններովը Շամիրամայ է տալի: Նա կարծում է, որ այս քարանձաւները թագուհւոյ գանձերը պահելու համար ըլնէց, կամ թէ նրա ամսուանոցը, սակայն այս միջոցիս Պ. Շարլ Տէքսիէր քննութիւնները և ուրիշ ճանապարհորդներու խուզարկութիւնները, բաւականին նրանց ինչ բանի համար սահմանուած լինելը յայտնում են, որոնք զերեզմանատեղի լինելու համար են եղել թագաւորներուն և իշխանապետներուն, որոնց Շահ-Միհրիերտ բնակարանն էր: Խոկայն մինչեւ այսօր չկարդացուած արձանադրութիւնները, յիշատակուել են արդէն տասնուերեք դար յառաջ Մովսէս Խորենացից Գր. Ա. Պ. Ժ. առաջին անդամ էլ օրինակուեցան դժբաղդ Շքուլցի ձեռքով որ սպանուեցաւ Քիւրդերից 1827 թուին:

1 Անահիս չատուածւոյն նորիրած քաղաք:

2 Այսօր Պոլաս—քէօյ:

3 Դիար-բէքիր:

էր գալի իր հիւղերից : Հայաստանու բերրի դաշտերն այն ժամանակ առատութեամբ ցորեն գարի, բամբակ, բրինձ, զինի, որդանկարմիր, տորոն էին յառաջ բերում և հովեաներն էլ որոնք լեքն էին երեւելի արօտներով, անհամար ձիաներ, գոմեշներ, ոչխարներ, այծեր, եղներ կովեր և ուրիշ ընտիր ընտանի կենդանիներ էին . սնուցանում : Հայք, որ առհասարակ խելք ժիր և զգաստ են, թէ ցամաքով և թէ ծովով վաճառականութիւն էին անում, դրեթէ այն ժամանակուայ բոլոր ծանօթ ազգերու հետ : Արևմտեան հարաւումը Տիւրոսի և Տարսոնի հրապարակներնում : Հայաստանու ձիաններովն ու ջուրիներովն էր առուտուր ըլնում, որնոր շատ անդամ և սուրբ Գիրքն էլ կյիշատակէ<sup>1</sup> : Արևելեան հարաւումը բարելոն և Նիւուէ, Եփրատ<sup>2</sup>, Տիղրիս գետերից Հայաստանու գինին, միզուզը, վայտը տախտակն ու ուրիշ վաճառքներ էին առնում : Արևելքում, Հայ վաճառականները Երասխ և Կուր գետերից գնում էին կասպից ծովը<sup>3</sup> և այն տեղից էլ Եաքսարդէս և Օքսուս գետերից Բագարիացւոց, Սոկտիանու, Պարթեաց և Հնդկաց աշխարհներուն էին գնում և այս տեղերից ապրանքներ բերելով ղրկում էին յետոյ Սև ծովու վրայով, Յունաստան և Իտալիա : Կովկասու Խորին հիւսիսուն եղած աշխարհներից, Երևումէ, որ Հայ վաճառականներն օգուտ քաղաք լինէին, ու ըսնք յետոյ Մովսէս Խորենացւոյն այնչափ մանրամասն տեղեւիութիւններ հաղորդեցին իր Երկագրութիւնը շինելու համար :

Արևմտեան Հայաստանում, Քսենովոնն<sup>4</sup> ասումէ, թէ «Աւոմէն տեսակ ընտիր պարէն և պաշար զտնուեցաւ, արջառ, ցորեն, պատուական հոտով հին գինի, չամիչ և ամէն տեսակ ընդեղէն . . . նոյնապէս և ցորեն, գարի, բանջարեղէն և դաշտերովէլ լեքը դարեջուր» մի փոքր յետոյ էլ աւելացնումէ որ այս Երկրիս մէջ (Հայաստանու) ձիերը Պարսկաստանու «ձիերից մանր են, բայց աւելի կրակոտ են» : Հայաստանու միշտայն այս մասը տարին 20,000 ձիու մի հարկ էր տալի մեծ արքային :

1 Եղեկիէլ իէ. 14. Ալ. 6.

2 Հերոդոտոս Գր. Ա. Պ. ՃՂ. ՃՂ. Դ.

3 Ընդհանուր աշխարհագութիւն, Մալդ-Բրէօնի. Յօդ. Ա. կր. 444:

4 Անաբազ Գր. Դ. Պ. Դ.

Հայկաղանց ժամանակ Հայաստան եկող այլեայլ գաղթականները նրա բազմամարդ և զօրաւոր լինելուն մի նոր տարիք եղան : Ամէնից հին գաղթականներն երեւումէ, որ Եղիպտացիք ըլնին, որոնք, ըստ Հերոդոտոսի<sup>1</sup> Սեսոստրիու պէտք է լինի բերած, սրանք ֆաղ գետի ափանց վրայ հաստատուեցան, այս ֆաղ գետը հիւսիսային Հայաստանից է դուրս գալի : Մովսէս Խորենացին<sup>2</sup>, որ այս գաղթականներու վրայ խօսումէ նրանց Քանանացի կոչելով, ուրիշ բաներու մասին տարրերում է նրանից : Յետոյ գալիս են Լեվկա-Ասորիքը կամ սպիտակ Ասորիքը<sup>3</sup>, որոնք նոյն աշխարհակալը կամ թէ Ասորեստանեաց մի ուրիշ բռնաւոր տարած է ի Փոքր Հայք : Թէկղաթ-փաղասար, Նինուէի թագաւորը, Դամասկոսն առնելուց և բազինն նոյն երկրին Ժաղաւորը սպանելուց յետոյ, նոյն երկրից դուրս բերաւ բնիկներու մի մասը և տարաւ նրանց Կիւրոս կամ Կուրը<sup>4</sup> գետին եզերքներում բնակեցրուց : Լեվկա-Ասորիք Նիւրատ և Ալիւս գետերու մէջ տեղում դտնուած երկրում հաստատուեցան, որնոր Հնումը Փոքր Հայք կամ Կապաղովիիա էր կոչւում և որուն զլխաւոր քաղաքն էր Պտէրիա : Այս գաղթականներն աճելով և բազմանալով կարի մեծ նշանակութիւն ունեցան : Վեցերորդ դարումը սրանց վրայ յարձակուելով Կրթեսոս և նրանց հետ վատ վարուելով, մի մասամբ նրանցից զերի տարաւ, միւս մասն էլ փախաւ գնաց մեծին Հայոց արեւմը տեան հարաւային նահանգներումը : Այն տեղ միանալով իւրանց աղղակից Ասորեստանոց Ժաղաւոր Սենեքերիմայ<sup>5</sup> Աղրամէլիք և Սանասար որդւոց հետ, սաստիկ բազամացան :

Վասպուրական, Աղձնիք, Ծոփք և Ցուրուբերան (մեծին Հայոց տասնուհինդ նահանգներից չորսը) այս ցեղի սերնդով բազմացան : Սրանք իրանց տէր Հայերից աւելի յառաջացած լինելով քաղաքակրթութեան մէջ, նրանց վրայ տիրացան իրանց կրօնքովն իրանց լեզուվ և դրականութեամբ, սրանց լեզուն

1 Գր. Բ. Պ. Ժ. Ժ. Ժ.

2 Հայ. պատ. Գր. Ա. Պ. Պ. Ժ. Ժ.

3 Հերոդոտոս Գր. Ա. Պ. Պ. Հ. Հ.

4 Ասորիք, Պաղեստին Յուղայաստան, դործ Կառտի-Հաճիի եթ 5:

5 Թագաւորք, Ժթ. 37: Եսայի Աք. 38: Տօրի. Ա. 24:

նոյն ժամանակից Հայք դատաստանական դորձքերումը զործածեցին. նոյնպէս և քաղաքականութեան. իրօնին մէջ, մինչև Քրիստոսի թուականին հինգերորդ դարը<sup>1</sup>:

Ասորւոց դաղթականութեան նման երեելի մի դաղթականութիւն էլ Պաղեստինից եկաւ և հաստատուեցաւ Հայաստան: Մովսէս Խորենացին<sup>2</sup> յիշատակումէ այս առաջին անգամ Հրաչէի ժամանակ, որ իրա Նաբուղողնոսորին արած օդնականութեան վոլտարէն, նրա արշաւանքին ընդդէմ Էզիալտոսի Նիքավով և Երուսաղէմայ Յովակիմ թաղաւորներուն, վարձ էր արել բազմաթիւ Երրայեցի գերիներ և բերել իր տէրութեանց մէջն էր բաժանել: Սակայն մենք Ճիշդ դիտենք որ Նաբուղողնոսորից յառաջ, Սաղմանասար, նրա նախորդ ներից մինը, զարկել էր 750 թուին Խորայէլացւոց թաղաւոր Ովսէին, կարծանել էր Սամարիան և տասը ցեղը Եփրատայ դէնն էր տարել, այսինքն Հայաստանու հարաւային նահանգներումը: Մինչդեռ Նաբուղողնոսոր Երուսաղէմից միայն 100,000 գերի դուրս բերաւ: Այս գերիներու միջին էր դանում Սամբաս, կամ Շամբաս—Բաղրատ, որ նշանաւոր անձն էր և Բաղրատունեաց տան ցեղապետ, որ տանուհինդ դար յետոյ պէտք էր, որ վառաւոր էր Հայաստանու պատմութիւնը, նրան մի թաղաւորական վառաւոր հարստութիւն տալով իր տանից: Եկրատանու, Շօշու, Բարելոնի, Քտէսիփոնի և Նինուէի Հրէայք. տեսնելով Հայաստանցւոց կրօնին մասին ունեցած թոյլարւութիւնները և առեւտրական հաղորդութիւնները, եկան և նրանց հետ միանալով նրանց թիւը աւելացրին: Ցիորան Բ. Քրիստոսից 88 թուից մինչև 63 թիւ յառաջ, Սելևկացւոց վրայ իշխան լինելով, Պաղեստինից նորունց բազմաթիւ դաղթականութիւն դուրս հանեց և բերաւ Հայաստանում տեղաւորեց: Քրիստոսի թուականին երրորդ դարուն վերջերը Հայաստանում հաստատուած Խորայէլացւոց թիւը, որոնք մի մասամբ քրիոտնեայ էին դառել համումէր ըստ Փաւստոս Բուղանդացւոյն 70,000 տնից աւելի և մինչև 400,000 անձն:

1 Մովսէս. Խոր. Հայ. պատ Գր. Ա. զլ. Ը. և Թ. Գր. Բ. զլ. Ժ. Ֆ. Կ. Լ. Թ. Գր. Գ. զլ. ՄԴ.

2 Հայ, Պատ, Գր, Ա. զլ. Իբ, Գր, Բ. զլ. Ժ. Ֆ. Ֆ. Ֆ. Կ.

Հայաստանու բերրի արօտներն ու հարուստ քաղաքները  
Սկիւթացի վայրենի հէներն, որոնք Ռւրալ գետի և Կաս-  
պիանձովու եզերքներում չոր ու ցամաք երկիրներումը բնածինն  
են, իրանց վրայ քաշեցին, Տայք և Սադք կոչուած ժողովրդները  
որոնք Ակիւթացի ցեղեր են<sup>1</sup>, կամ իրանց առաջին չու անելու-  
ցը, կամ թէ ստիպուած Մաստիկթներից, Քրիստոսի թուականից  
624 տարի յառաջ, Մոտիէս թագաւորն իրանց դլուխ ու-  
նենալով մի յարձակում արին Հայաստանու հիւսիսային ա-  
րեւման կողմերում։ 23 տարի շարունակ ամէն տեսակ ա-  
ղէտք և չարիք գործելուց յետոյ, Տայք և Սադք բոլորովին Հա-  
յաստան բնակեցան, և իրանց անունները տուին, առաջինները  
Տայոց երկրին, Քսէնովոնի Տաօք ասած մեծին Հայոց նահանգնե-  
րից մինը, որուն Թուխարք<sup>2</sup> դլիսաւոր տեղն եղաւ, երկրորդները  
Սադաստան գաւառին կամ Մադաշէնի<sup>3</sup>, իրանց դլիսաւոր քա-  
ղաքը, որուն այսօր Շաքի է առւում, Նուխի Ռուսերից, Կուրից  
մի փոքր հեռու։

---

## ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

(330-ից մինչև 150 Յիսուս Քրիստոսից յառաջ)

ՎԱՀԵԻ մեռնելուց յետոյ, որ վերջին թագաւորն եղաւ  
Հայկազանց ցեղին և որուն մահը 330-ին պատահեցաւ, Հա-  
յաստան անտէրութեան մէջ ընկաւ։ մի մասը կողոպուտ եղաւ  
Մակեդոնական պետութեան, միւս մասն էլ չի դիտացուիլ  
թէ ի՞նչ տեսակ իշխանութիւն ունեցաւ։ Մովսէս Խորենա-  
ցին այս միջոցուայ հայրենեացը վիճակին վրայ մի խորին  
լոռութիւն է որահում, միւս ազգային պատմագիրներն էլ նոյնա-

1 Հերոդոտոս Գր. Է. գլ. ՀԴ.

2 Թոկարի, Սկիւթացի աղջ, ըստ Ամիանոսի և Պաղոմէոսի, որոնք  
յառաջնումը Սէրիքայսւմն, հիւսիսային Հնդիկ բնակել։

3 Սադաշէն նշանակում է Յոյն Սադաստնացւոց աւան։

պէս լուռ են կենում այս մասին : Այս շրջանը մի աղօտ լուսով լուսաւորելու համար, ստիպուած ենք գնալ և ուրիշ օտարական աղբիւրներից մի քանի իրեր քաղել որնոր շատ անգամ մոլորական և առանց արժողութեան են : Սակայն մի կարեւոր խնդիր է մնում լուծելու, այն է, Հայաստանու ամբողջ կամ թէ ոչ մի մասամբ միայն նուաճուելը Մակեղոնացի դիւցազնից :

Ըստ ինձ, Հայաստան միայն մի մասամբ նուաճուեցաւ : Դմկարծիքն այն է, որ Վահէի սերունդները, հարաւային արևմտեան Հայաստանը Աղէքսանդրի ձեռին ընկնելուց յետոյ, Հիւսիսային արևելեան Հայաստանու լեռնոտ մասերումն երկար ժամանակ իրանց անկախութիւնը պահպանեցին և թէ յետոյ օդնեցին քաջութեամբ Արշակունեաց ցեղին, երբ նրանք բոլորովին Սելեվկիացիքը Հայաստանից գուրս արին; Նմանապէս կարծումեմ, որ Աղէքսանդր երբէք Հայաստան ոտք չդրեց և թէ որ Գունառոս Կուրտիսս նրան Երասխի ափանց վըրայ է մեղ ցոյց տալի, այն Հայաստանու Երասխը չէ, այլ Պարսկաստանու, որնոր թափումէ Պարսկական ծոցին մէջ, կամ թէ Հիւրկանիոյ Երասխն ուր տեղ դնաց Փրատափերնեսի վըրայ ողատերազմելու : Կուրտիսս իր պատմութեան Զ. զրքումը, Հայաստանը Աղէքսանդրի նուաճած երկիրներու թուումն է հաշւում: Յուստինոս ասումէ, որ Աղէքսանդրի մահուանից յետոյ նրա պետութիւնն իր բանակի զօրավարք իրանց մէջ բաժանելու ժամանակ, Հայաստանը Փրատափերնեսի ընկաւ, որ էր ըստ Սարարոնի Հիտարնեսից, որ էր մինը եօթը Պարսիկ իշխաններից, որոնք Սմերդիս մոգը սպանել էր: Ուրեմն Փրատափերնեսի որդիք իշխացին Հայաստանու մի մասին վըրայ թաղաւորական անունով մի դարուց աւելի, Օրոնտէս վերջին թաղաւորն եղաւ այս ցեղին : Նրա մեռնելուց յետոյ Հայաստանը բաժանուեցաւ Արտաշեսի և Զատրիադի մէջ:

Հարաւային արևմտեան Հայաստանը, Վահէի մահուց յետոյ, վոխարքայի տեղ մի վերակացու ունեցաւ, Միհրան անուն, բնիկ երիրացի, որուն մի շար վերակացուներ յաջորդեցին Սելեկիոյ արքունեաց ձեռքով, երբեմն բուն իսկ Հայերից ընտրուելով և երբեմն էլ Ասուրոց թաղաւորներու դրկած զօրավարներու

միջից։ Ներկազումներին մըրկալից իշխանութենից և մեռնելուց  
յետոյ, Արդուարդ Հայկապն իշխանն իր հայրենեաց իշխանութենը ձեռք ձեռք բերաւ և մեռնելիս Արտաւազդ իշխանին յանձնեց։  
յետոյ եկաւ Արտաշես։ ամենից նշանաւոր անձն այս շրջանումը։ Վեհանձն քաջ և ոլաշտպան արհեստներու, երկրագործութեան և վաճառականութեան և հասարակաց բարեկեցութիւն սիրող մարդ ըլնելով այս Արտաշեսը կամ Արտաշասը ըստ Պողիքոսի<sup>1</sup>, իրաւ խմաստուն կառավարութեամբ իր ազգին սէրը իր վեոյ դրաւեց և մեծին Անտիոքոսին Մաղնիս  
սիոյ մօտ Հռովմայեցիներից յաղթուելուց շահուելով, որնոր  
Քրիստոսից 190 տարի յառաջ էր, մեծին Հայոց ինքնիշխան  
տէր եղաւ։ Հրաւիրելով իր հիւրբնկալ աշխարհումն Ան-  
նիբաղը Կարթաղինեցի զօրավարը նըտ խորհրդին համեմատ  
Հիմնեց 180-ին Արտաշատ քաղաքը, Երասխայ ձախ եղերքին  
վրայ, Արարատ լեռան դիմացը։ Արտաշես տեսնելով, որ Ա-  
սորոց պետութիւնը Սելեկոս Գ. և Անտիոքոս Եպիփանու-  
ժամանակ կործանելու վրայ է, ինքն իրաննը այցից ազտ կո-  
ցուց և շատովեց մի դաշնակցութեամբ Հռովմայեցւոց բարե-  
կամութիւնը ձեռք բերելու։

Միհրդատ այն ժամանակ Փոքր Հայքն էր կառավարում։  
մի դաշնադրութիւն արաւ Եւմենեսի և Պրուսիասի հետ, որ  
էին Պէրկամի թագաւորը և պատերազմեցաւ կապադովիիոյ Ա-  
րիարատ թագաւորին զեմ, և Պէրկամի թագաւորին զօրք  
զրկեց օպնութիւն Ատտաղոսի դեմ<sup>2</sup> կռուելու։

Արտաշես խաղաղութեամբ մեռաւ, երկար ժամանակ իշ-  
խանութիւն վարելուց յետոյ և իր նորածին տէրութիւնն իր  
անարժան Արտաւազդ որդւոյն թողուց, որ իր եղերնազործու-  
թեամբը շուտով իր հպատակները սառեցնելով իրանից, նրանց  
ստիպեցրուց մի աւելի լաւ կառավարութիւն որոնելու հետա-  
մուտ լինել Արշակունիաց ցեղին մէջ, որ Ասիոյ ամենազօրաւոր  
ցեղերից մինն էր։ Հայաստանն էլ Վաղարշակն իրաւ թագաւոր  
ընտրելով, աթոռից վար ձղեց այս տաելի իշխանը։


1 Պողիպոս Գր. իբ. Քաղ. Գ.

2 Նոյնը Գր. ԼԳ. Քաղ. Ժ.

# ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

(Սկսած Քրիստոսից 150 տարի յառաջ, մինչև

433 տարի Քրիստոսից յետոյ)



Արշակունեաց հարստութիւնը՝ որուն տիրապետութիւնն երրորդ շրջանն է կազմում և որնոր ամենափառաւորն է Հայաստանու համար, այս աշխարհին գահին վըայ հաստատուեցաւ առանց մի քաղաքական վնաս տալու և արիւն թափելու :

Արշակ և իր եղբայրը Տրդատ<sup>1</sup>, ազգով Պարթևք, Բակուտրիացւոց երկրումը (Խորասանումը) իրանց ձեռին մի իշխանութիւն ունենալով, արդէն իրանց հայրենիքն ազատելէին 256 թուին (Քրիստոսից յառաջ), Սելևկացի մարզպանները գուրս հանելով : Սելևկոս Գալինոս մի ճակատամարտի մէջ զերի ընկնելով 233-ին Արշակ—Գի ձեռին (Արտարան Ա.) Պարթեաց անկախութիւնն ընդունելէր վաւերական կերպով : Մեծն Անտիոքոս նրանց նիզակակցութիւնն ընդունելով, խաղաղութիւն էր արել նրանց հետ : Միհրդատ<sup>2</sup> Ա. որուն Հըռովմայեցիք և Յոյնք Թէոս կամ Աստուած էին անուանում և Հայք էլ Մեծն Արշակ, Պարթեաց զօրութիւնը վերջին աստիճանին բարձրացրուց, իր տէրութեան տակ նուածեց Մարաստանը, Հիւրկանիան, Եղիմախը, Ասորեստանը, Միջազետքը, Ատրպատականը, մի խօսքով, Երասխ, Եփրատ, Ինդոս և Եաքսարդ զետերու մէջ տեղերումն եղած բոլոր երկիրներն իրաօրէնքներն ընդունեցին :

1 Տիրի-դատ ըստ Յունական ուղղագրութեան, Տրդատ, ըստ Հայոց (Տէր) իշխան, աստուած (դատ), տալ, ուստի Տրդատ նշանակում է Աստուածատուր, (դատէ) Զէնդ լեզուով, (դատ). (դավատ) Սլաւերէն տալ. (տուր) Հայերէն (դօննէր). (դոն) Ֆրանսերէն նոյն և մի նշանակութիւնն ունին:

2 Ըստ Յունաց ուղղագրութեան Միթրի-դատ, Միհրդատ ըստ Հայոց (Միլէ) արեւ, (դատէ), տալ, Միհրդատ, արեգական պարզեւ:

Հայաստան, որ արդէն գարերից 'ի վեր միացած էր Պտրթեաց<sup>1</sup> հետ կրօնով. Լեզուով և հաւանականաբար մի և նոյն ծաղումով, նոյն և մի քաղաքային և ընկերական կարգերու օրէնքներ. մի և նոյն շահ և վարք ունենալով. Միջդատ առաջնից (Արշակ Մեծից) իրանց թագաւոր խնդրեցին նրա եղբայրը Վաղարշակը. ըստ Մովսիսի Խորենացւոյն<sup>2</sup>, նրա որդին ըստ օտար պատմագրներուն : Արշակունեաց հարստոթիւնը Հայաստանի դաշն ելաւ 150 տարի Քրիստոսից յառաջ, և Քրիստոսից 433 տարի յետոյ այս դաշիցն ընկաւ : Ուստի 583 տարի թագաւորութիւն վարեց :

Արշակունեաց ժամանակ, Հայաստան, Պարթեաց ազգից յետոյ հիւսիսային արևմտեան Ասիոյ ամէնից զօրաւոր և ամէնից ծաղկեալ պետութիւնն եղաւ. այս ցեղից շատ թագաւորներ իրանց յաղթանակներով իրանց կարգադրութեամբը և իրանց երկրագործութեան, ճարտարութեան, վաճառականութեան արհեստներու և հասարակաց դարձացման վերաբերած ամէն բաներու համար արած սլաշտապանութեամբն ու քաջալերութեամբն անմահացրին իրանց անունը ; Վազ—Արշակայ, Արտաշէս առաջնոյն, Տիգրան երկրորդին, Արգարայ, Արտաշէս երկրորդին, Մեծին Խոսրովու, Տրդատայ և Վուամշալհոյ անունները . յաւիտեան յիշատակելի պիտի մնան Հայաստան աշխարհի պատմութեանց մէջ,

Միհրգատատ Ա. (Մեծն Արշակ) թաղն իր եղբօր Վաղ-Արշակին տալովքայի Մեծ և Փոքր Հայքից, նրան յանձնեց նաև Ասորեստանու, Միջաղեաց, Օսրէոնի և Ատրպատականի մի մասը, նոյնալէս և երկրորդ կապադովկիան, Վրաստանը, Այզուանքը և Կասպիցը, կամենալով այս կերպով մի զօրաւոր և ամուր տէրութիւն կաղմել և իբրև մի երկրորդ Պարթեական տէրութիւն կանդնել բուն Պարթեաց և Սելեկացւոց տէրութեան մէջաեղ, որնոր զեռ կենդանութեան նշաններ էր ցոյց տալի :

1 Այս երկու աղքերու նոյն եւ մի ծաղումն ունենալը անկասկածելի կերպով հաստատուած չէ, սակայն անհամար բառեր են գտնուում հասարակ եղած, Հայոց, Պարթեաց, Պահլաւաց, Արիաց եւ Պարսկաց մէջ :

2 Հայ, պատմութիւն Գլ. Բ. Պ. Վ.

**Վաղ-Արշակ<sup>1</sup>** իրա բնակութեան համար Մծրին<sup>2</sup> քաղաքն ընտրեց : Իր առաջին գործն եղաւ քաղաքային և զինւորական մի օրինադիրք շինել և իր տէրութեան մէջ կարդու կանոն դնել . որնոր նահանգներու ու գաւառներու վրայ բաժանեց , նմանապէս գործակալաց համար մի դաստիարդութիւն կազմեց և իր թագաւորած երկրին մէջ էլ մի փառաւոր ազնուապետութեան քաստ հաստատեց . այս քաստն է նախարարական կարգը :

**Այսպէս** իր տէրութեան մէջ ընկերական կարդ հաստատելով , ձեռք զարկաւ մի արշաւանք անելու ընդդէմ կազաց և Պոնտոսի , Փրիւդիոյ և Մաժակայ բնակչաց , որոնք Անկացւոց նիզակակից էին և իրանց հրամանատար ունեին Մորփիւղիկէսն : Մի արխւնչեղ պատերազմի մէջ , որնոր աեղի ունեցաւ Վաղարշակայ և նրա նիզակակցաց մէջ-վերջինները ջարդ և բուրդ լինելով հնազանդեցան թագաւորին : Այս յաղթութենից յետոյ Հայաստանու սահմանները տարածուեցան և իր աղղեցութիւնը իրա հարեւան ազղերու վրայ բանեցուց և մինչեւ այն ժամանակ անծանօթ եղած մի զարդացում ստացաւ : Վաղարշակն էլ իր թագաւորութեան 22 տարին այս զարդացումն հաստատելու և ամրացնելու և իր աղդն երջանիկ անելու անցկացուց :

**Արտաշէս** Ա. (115-ից-90) որոյ թագաւորութիւնը 25 տարի տևեց . իր պապ Վաղարշակայ ընթացքով վարուեցաւ . արեւմտեան Ասիոյ մէջ շատ պատերազմներ արաւ և Սև ծով եղերքներու վրայ հաստատուած յունական գաղթականներու երկիրները կործանեց . Արշակունեաց միջից առաջինն եղաւ . իր տէրութեան մէջ Յունաց աստուածները մտցնողը . Արտեմիդայ , Հերակլայ , Ապոլոնի , Արամազդայ , Աթենասայ և

1 Վաղ , Վալ , պատասխանում է Քաղղէացւոց Բալ , Բէղ , Բեղոս բառերուն . Ալաւեանց Բող , Աստուած բառին , Թաթարաց Բողդո , Վեհափառ , Բարձր , բառերուն , որոնք նշանակում են Մեծ կամ Աստուած , Վաղ-արշակ , Մեծն կամ Տէր , Աստուած-Արշակ :

2 Արա ուղղաղբութիւնը վովիոխուռում է Նիսիր , Նիւսիր , Մծրին Հայերէն :

3 Լազիստան Տրաբիզոնի Հարաւային կողմն է :

4 Կեսարիա , մեծ կապադովկիոյ գլխաւոր քաղաքը :

Նիեստեայ արձաններն, որոնք Սկիւտիասայ և Կրետացի Դիբենասայ գլխաւոր գործքերն են։ Արտաշէս յափշտակելով Յոյներից բերաւ խառնեց ազգային աստուածներուն։ Արևուն, Լուսնին, Որմղդայ հետ և մողականութեան պարզութիւնն էլ ապականեց։

Հռովմ չկամենալով կամ թէ չհամարձակելով նրա դէմ պատերազմ բաց անել, բանսարկութեամբ նրան կործանելու միջոցը դտաւ։ Հայկական բանակն Հռովմայեցւոց ոսկւով խարուելով և հրապուրուելով, փոքր Ասիում մի արշաւանք անելու ժամանակ, ապստամբեցաւ և Արտաշէս սպանուեցաւ դաւակցութեամբ։ Տիգրան Բ-ի նրա որդւոյն ժամանակ (90-ից -36) Հայաստան իր զօրութեան, մեծութեան յաջողութեան և փառացը վերջին ծագը հասաւ։ Ասիոյ տիրապետութիւնը և թագաւորաց թագաւորի պատուանունն, որ յառաջ Պարսկաստանու Պարթևաց էր ընկնում։ 114 թուից Արտաշէսն նրանցից այդ պատուանունը յափշտակել էր։ Տիգրան մինչև իր թագաւորութեան վերջին տարիներն, որ 54 տարի տևեց, այս յառաջապատութիւնն իր վրայ պահեց։ Միհրդատ Բ. թագաւոր Պարսից, զէնքով սնդել կամենալով իր պահանջմունքներու մասին, Տիգրանայ դէմ պատերազմելիս, Երասխ դետի ափանց վրայ սպանուեցաւ 88-ին։ Ասորւոց տէրութիւնը տկարանալով Հռովմայ և իրա միջեց ծագած խառնակութիւններից, պատառ պատառ լինելով իրա միջում եղած քաղաքական պատերազմներից և ընտանեկան կռիւներից, իր թագը Տիգրանին տուաւ, նրան Ասիոյ ամենամեծ վեհապետը համարելով։ Տիգրան Ասորւոց և Փիւնիկեցւոց տէր և իշխան լինելով, իր յաղթանակները յառաջ քշեց և նուածեց իր ձեռին տակ ամբողջ կապադովկիան, Կիլիկիան և Միջագետքը և այն տեղաց Պաղեստինու վրայ յարձակեցաւ, ուր տեղաց Հայաստան հազարաւոր խորայէլացիներ բերաւ։ Մի յարձտկմամբ Պտողեմայիս քաղաքն առաւ և Կղէոպատրային սպանել տուաւ։ Նոյնպէս մասնակից եղաւ այն պատերազմին, որ Հռովմ բաց էր արել իրա փեսայ և նիզակակից Պոնտոսի թագաւոր Մեծին Միհրդատայ դէմ։ Հռովմ որ ցանկանում էր Ասորւոց երկ-

ըին տիրել շատ անհանգիստ եղաւ. երբ լսեց, որ 88-ին (Քրութոսից յառաջ), Տիգրան նրա վրայ տիրել էր :

Միհրդատ կամ Միթրդատ Հայոց բանակով պաշտպանուած, պատերազմի սկզբան Մանիոսին և Գոդդային յաղթեց. բայց Ղուկուղղոսից յաղթուելով Տիգրանի մօտ վախսաւ : Երբ Տիգրան մերժեց Միհրդատն Ղուկուղղոսի ձեռին յանձնել Տիգրանակերտի պատերազմը բացուեցաւ Տիգրիս գետին առանց վրայ, Հայոց և Հռովմայեցւոց մէջ. Հայք յաղթուեցան, այն ժամանակ Ղուկուղղոս Հայաստան մտաւ, բայց ինքն էլ Տիգրանից յաղթուելով Եփրատայ մօտերը ետ քաշուեցաւ : Երբ Ղուկուղղոս օգնութիւն առնելով Մծրին պաշարում էր, Տիգրան և Միհրդատ Հռովմայ եցւոց Պաննիոս և Ֆարիոս զօրավարներուն յաղթեցին: Այս համբաւին վրայ, Ղուկուղղոս պատրաստուեցաւ նրանց դէմմիվճառղական պատերազմ տալ, բայց իր բանակումը պատահած ապստամբութիւնն այս քանիս արգելք եղաւ: Պոմպէոս, որ նրա տեղը բռնեց Միհրդատին հետ կոռւելուց և նրան յաղթելուց յետոյ Հայաստան մտաւ, Տիգրանայ որդւոյն Տիգրան-Բի առաջնորդութեամբ, որ մատնեց իր հօրը ուրիշ ապստամբներու հետ: Տիգրան տեսնելով իրան պաշարուած Հռովմայեցւոց ոսկւով և քաղաքականութեամբ զլուխ վերուցած ապստամբներից, առանց կոռւելու խաղաղութիւն արաւ Հռովմայ հետ: Գաղատիոյ, Կիլիկիոյ, Կապադովիկիոյ և Ասրւոց երկիրներում արած աշխարհակալութեանց մի մասից ձեռք վեր առաւ, որոնք Հռովմայեցւոց տէրութեան հետ միացան. Փոքր Հայոց մի քանի նահանգները իրեւ տէրութիւն կանգնեցան, որոնք բնիկ թագաւորներ ունեցան Հռովմայ պաշտպանութեամբ: Այս խաղաղութենից մի քանի տարուց յետոյ, Կրասոս արևելք եկաւ Պարթեաց դէմ կոռւելու: Տիգրան նախ կամեցաւ զէնքը ձեռին չեղոքութիւն պահել, բայց տեսնելով Հռովմայեցի զօրավարի չար դիտաւորութիւններն իր մասին, Որոտէս-Գին<sup>1</sup> հետնիղակակից եղաւ և Հայկա-Պարսիկ բանակը բոլորովին յաղթեց Հռովմայեցւոց բանակին: Այս դորձքին մէջ (39) Կրասոս իր որդւոյն հետ սպանուեցաւ: Երբոր Կրասոսի զլուխն ու ձեռքը Հայաստան բերուեցաւ, որ

1 Արշէս կամ Արտաշէս Հայ պատմագրներից:

տեղ և այն ժամանակ Որոտէսն էր դանուում վասն զի եկել  
էր իր բազոր որդւոյն Տիգրանայ աղջկան հետ ամռանու թիւնը  
կատարելու . Պլուտարդոս<sup>1</sup> ասումէ , որ Արտաւազդ Հայաս-  
տանու թագին ժամանդն այն ժամանակ մի ողբերդութիւն  
շինեց Յունաց լեզուով :

Այս մեծամեծ դեսպերից հետէ , որոնք Հայկական միա-  
պետութիւնը սաստիկ սարսեցրին մինչեւ Արդարայ թագաւո-  
րութեան ժամանակ , որ ժամանակից եղաւ Յիսուս Քրիստոսի  
և առաջին քրիստոնեայ թագաւորը , ոչինչ նշանաւոր բան  
չունինք այս տեղ յառաջ բերելու , այլ միայն այս տէրութեան  
կամաց կամաց տկարանալը : Չեմիսոսիլ այս թագաւորին՝ Մարդ  
Աստուծոյն հետ ունեցած հաղորդակցութեան մասին և իրա  
քրիստոնէութիւնը ընդունելուն , որոնք ծանօթ են քրիստո-  
նեայ աշխարհին : Թադէոս և Բարթողիմէոս առաքեալք բերին  
Հայաստան Աւետարանի լոյսը և երկուսն էլ ուրիշ շատ մար-  
տիրոսներու հետ միասին հաւատոյ ճշմարտութիւնն իրանց  
արիւնով կնքեցին : Արդարից յետոյ Արշակունիք Հայաստան  
400 տարի թագաւորեցին , երբեմն իրեն դաշնակից և հար-  
կատու Հռովմայեցւոց , երբեմն իրեն թշնամի պատերազմելով ,  
բայց ոչ երբէք իրեն հպատակ :

Պարսկաստանումը Արշակունեանց հարստութիւնը , 220  
թուին մի սոսկալի հարուած կրեց , որնոր շուառվ վտիսման  
տուաւ այս իշխանութեան , որ արդէն տկարացել էր բարուց  
ապականութեամբ և ներքին երկպառակութեամբ : Արտա-  
քսերքսես (Արտաշեր ըստ Հայոց) Սասանայ որդին , բուն Պար-  
սիկ , Պարսկաստանը այս հարստութեան դէմ ապստամբեցուց  
Վողոգէս Ե . 220 թուին Ֆիրմանում մեռաւ և Արտաւան ե-  
րեք ճակատամարտումն էլ յաղթուելով բռնուեցաւ և սպան-  
ուեցաւ : Արտաշրի հետ Սասանեաց հարստութիւնը Պարս-  
կաստանու դաշն անցկացաւ , որ նորէն այս պետութիւնը մի նոր  
զօրութեան մէջ մլեց : Բայց այս նոր հարստութիւնը (թա-  
գաւորութիւնը) օտար երկիրներում թագաւորող Արշակունի  
ցեղերուն բնական թշնամի լինելով ուշ կամ վաղ արիւնա-  
հեղ կռիւներ լինելու տեղի պիտի տար այս ցեղին Հայաս-

1 Կրաստոֆ վարքումը :

տանում թաղաւորող շառաւիղին հետ Հայաստանու թառ  
կաւոր Մեծն Խոսրովի իր ամեն ջանքն ՚ի գործ դրաւ Պարս  
կաստանու Արշակունիքն իրանց տեղը վերահաստատելու և  
Սասանեաց Պարսից գահն անցկենալն արդիլիլու ։ սակայն բո-  
լոր իր ջանքն այն հետեւանքն ունեցաւ, որ իրան էլ կորցրուց:  
Արշակունի Անակը, գաւաճան գտնուելով իր ցեղին զէմ, անձ-  
նատուր եղաւ Արտաշըն և եկաւ Խոսրովի մօտ իրքեւ փա-  
խըստական պատսպարուելու : Անակ Խոսրովի արքունեացը մէջ  
իրքեւ ազգական ընդունուելով, վերջապէս 260 թուին որսի մէջ  
սպանեց նրան : Խոսրովայ մահը Հայաստանը անտէրու թեան  
մէջ գցեց, Արտաշըր էլ յարմար ժամանակ գտնելով, Հա-  
յաստանի տէր եղաւ : Այսպէս Հայաստան ընկծուեցաւ 291  
թուից մինչև 286 թիւը Սասանեաց տակ, բայց մի քանի ա-  
մուր տեղուանք մինչև Պարսից Հայաստանից գուրս քշուիլը  
դիմացան : Հայկական Արշակունեաց ցեղը (ըստ դրսց) բնա-  
ջինջ եղաւ : Տրդատ Խոսրովայ որդին զեռ մանուկ, այս ցե-  
ղին վերջին շառաւիղը միայն կարող եղաւ խուսափել մահ-  
ուանից իր գաստիարակին անձնանու իրութեամբը և հռովմէա-  
կան կայսրութեան երկիրներում տարուելով, այն տեղ մեծ իր-  
նամքով մեծացաւ, յետոյ Հռովմէացւոց Եւրոպիում Գոթաց-  
ւոց դէմ և Ասիայում Պարսից դէմ Եփրատոյ վրայ տուած-  
պատերազմներում մեծ անուն հանելով, Աիկիանոսի, Կոստան-  
դիանոսի և Գիովզեախանոսի բարեկամութիւնը ձեռք բերաւ  
իր քահը վերականգնեց, նմանապէս և թագաւորական (աս-  
ուած) Սկիւթացւոց<sup>1</sup> դէմ և հիւսիսային կովկասումն ան-  
համար բարբարոսներու դէմկուուելով՝ յաղթեց և նուածեց նը-  
րանց, որոնք Սարորի (Շապհւոյ ըստ Հայոց) թելազրութեամբ  
Հայաստան աշխարհին վրայ մեծ յարձակումէին անում<sup>2</sup> :

1 Սիթի Բէնիի. Լու.

2 Մով. Խոր. Հայ ուստ. Գր. թ. դլ. ԶԵ.

Երբ որ զահը վերականգնեցաւ և խաղաղութիւնը հաստատուեցաւ, Տրդատ իր ամէն ուշադրութիւնը իր տէրութեան ներքին վեճակին վրայ դարձրուց և շատ բարեկարգեց : Քրիստոնէութիւնը, որ Թագէոս և Բարթուղիմէոս առաքեալները Հայաստան էին մտցրել 39 թուից մինչև 45-ը հալածանքի մէջ էր, սակայն շատ հաւատացեալներ կային : Տրդատ վարքով և բարքով մարդ լինելով և կրօնական զգացմունք ունենալով : յառաջ՝ որ ջերմեռանդ Որմղապաշտ էր, յետոյ սուրբ Գլուխիդոր Պարթեից լուսաւորուելով, բայց երկար ժամանակ դէմ դնելով և հալածելով քրիստոնէութիւնը, վերջատէս ինքն և իր բոլոր ընտանիքն էլ 300 թուին քրիստոնեայ դառան ժամանակ չանցկացաւ, Հայաստան Աղուանից աշխարհը, Վըրաստան և Ատրպատականի մի մասը նրա օրինակին հետեւեցան . քրիստոնէական կրօնը այս կերպով բոլորովին հաստատուեցաւ ամբողջ Հայաստանեայց աշխարհին մէջ և պահպանուեցաւ այն տեղ միշտ մինչև մեր օրերը, ընդդէմ այն ամէն հալածանաց, որ իրա դէմ յարուցին Պարսկաստանու մոգուաշտութիւնը և Արաբստանու Խալամութիւնը : Բայց ցաւալի է ասելն, որ Տրդատ Հայաստանեայց աշխարհին ամենափառաւոր և ամենալաւ թաղաւորն իր թաղաւորութեան 57 տարին շարունակ իր հպատակներուն լուսաւորութեան և երջանկութեան համար նուիրելուց յետոյ՝ 342 թուին թունաւորուած վախճանեցաւ : Իրան յաջորդող թաղաւորներու կեանքը միդար շարունակ ուրիշ բան մեր յառաջը չեն հանել բայց միայն գաղանութիւն, անդ թութիւն և խայտառակութիւն : Այս վայրենի հրէշները Արևելցւոց հասարակ եղած մոլութեանց հետ խառնելով և Հռովմայ սոսկալի վարքն ու բարքը, իրանց կեանքին և քաղաքականութեան մէջ բարուց կատարեալ ասպականութեան մի ողբալի օրինակ ցոյց կտան . իրանց ցեղը 435 թուին գահից ընկաւ Արտաշրի օրովը, որ էր վերջին թաղաւոր այս հարստութեան : Այս ժամանակուայ Հայաստանու նախարարներն իրանց փառք համարեցին Պարսկաստանու թաղաւորից իրանց մեծը վերացնելու և իրանց աղատութիւնը ցնջելու համար խնդրելը :

Բայց այս անարգ Արշակունեաց մէջ, պատմութիւնը փա-

ուառումէ առաքինի Վռամ—շապհւոյ դպրութեանց և դիտութեանց սկաշտպանին, որ հասարակաց կրթութեան հոգ տարաւ և իր աղջին երջանկութեան համար աշխատեց։ Մարդկային աղջի բարերար և առաքինի կաթուղիկուներ<sup>1</sup>, սուրբ Գրիգոր Լուսաւորչի ցեղեց մեղմառացնել կտան վերջին Արշակունի թագաւորներուն վատութիւնները։ Հայաստան աշխարհին առաքեալ<sup>2</sup> սրբոյն Գրիգորի, (Լուսաւորիչ անուանեալն Հայքն ու Աղուանիք լուսաւորելուն և քրիստոնէացնելուն համար) իր որդւոյն Վրթանիսի, Մեծին Ներսիսի (մահուան գեղով սպանուած,) Աստուածաշնչի թարգմանիչ, Մեծին Սահակայ անունները յաւիտեան պիտի անջնջելի մնան Հայաստանու պատմութեան մէջ։ Քրիստոնէութիւնն ինչդէս ամէն տեղ, նոյնպէս և Հայաստան մի նոր քաղաքակրթութեան, նոր բարոյականութեան և նոր գաղափարներու բողբոջն ու տարերքը բերաւ։ Քրիստոնիայ եղող Հայոց նոր զղացմունքեր շնչեց, հասարակաց լեզուով Աստուածաշնչի թարգմանութիւնն այս հետեանքն յառաջ բերելու շատ նպաստաւոր եղաւ։ Այսպէս մեղսպատմումէ Դաղար Փարուեցին, որ հինդերորդ դարու մատենադիրէ։ Հայաստանեաց եկեղեցւոյն մէջ աստուածային սկաշտոնը Ասորի և Յոյն լեզուով էր կատարուում մէկ ու կէս դարուց հետեւ։ Հաւատացեալք ոյս լեզուներն չդիտենալով բարոյական և իրօնական կրթութենից և ուսումից զուրկէին մնում։ Սուրբ Մեսրովով վարդապետը կատարեալ առաքելական մարդ, հաւատով ազդուած և այս ժամանակուայ դիտուններից մինը 504 թուին Հայոց, Աղուանից և Վրաց լեզուներուն տառերն ստեղծեց։ Անոնիջապէս ամբողջ Պարսկա—Հայոց մէջ անհամար դպրոցներ բացուեցան (Յոյնք թոյլ շտուին Հայոց Հայաստանի տյն մասին մէջ, որ իրանց ձեռնին էր) և շատ երիտասարդ Հայեր կոսդանդնու պօլսոյ, Եղեսիոյ, Անորիոքայ Աղէքսանդրիոյ և Աթենքի բարձր դպրոցներում դրկուեցան իրանց, Հայաստանում սկսած ուսմունքը կատարելու համար։ Իրանց դար-

1 Ծայթադոյն զլուխ Հայաստանեաց Եկեղեցւոյ։

2 Հայոց ամէն կարդ եկեղեցականաց մէջ մինչեւ հինդերորդ դարը ամուսնութիւնը կար, մինչեւ այսօր էլ աւագերեցները քահանաներն ու սուրկաւաղները ամուսնացած են։

ձին զիտնականոց մի ընկերութիւն կաղմաւ եցաւ ուրբ Ատահակ Պարթևայ զլիստորութեամբ, որ քաջ և խորն էր իմաստում Յունարէն լեզուն : Այս ընկերութիւնը Աստուածաշունչ զրոց և ուրիշ անթիւ Յոյն Հռովմայիցի և Ասորի հեղինականերու Փիլիսոփայական, բանասանեղծական, ուսումնական, աշխարհագրական, պատմաբանական, վարդապետական և բարոյական կրուածքներու թարգմանութեան ձեռք զարկաւ, այնպէս որ քրիստոնէութեան Հինգերորդ դարը Շշմարտապէս Հայկական զրականութեան ոսկի դարն եղաւ և սրբոյն Սահակայ և սրբոյն Մեսրովսայ դպրոցը ամենաընտիր մատենագիրներ յառաջ բերաւ այս լեզուին մէջ : Մօլուստ Խորենացին, Մամբրէն, իր եղբայրը Դաւիթ անյաղթ Փիլիսոփայ անուանեալը, Եղիշէն, Ղաղար Փարապեցին, Եղնիկ Կողբացին, Կորիւն սքանչելի անուանեալը, Յովհաննէս Մանղակունին, Գիւտը, Ղեօնզը, Արձանը, Խոսրովիկն ու ուրիշ շատեր : Քոլոր այս մատենագիրները իրանց զրականական աշխատանքներով, Հայկական զրականութեան Հիմունքները հաստատեցին, որ այն ժամանակից սկսեալ ամէն գարերից անցկացաւ, սակայն տռանց ժողովրդային լինելու այս երկրին բնակիչներուն մէջ :

## ԶՈՐԾՈՐԴ ՇՐՋԱՆ

(433-ից մինչև 885 Քրիստոսից յետոյ)

**ԱՅՍ շրջանս մեր առջևն անիշխանութեան, երկպառակութեան, կրօնական պատերազմներու, Հայաստանից գուրս տեղափոխուելու, զերդաստանաց աքսորուելու և ամէն տեսակ թրշուառութեանց տրամելի և աղիողորմ մի տեսարան կհանէ, կարելի է ասել որ բոլոր իր էջերը քրիստոնէութեան մարտիրոսներու և Հայկական անկախութեան Համար թափուածարիւնով ներկուած են :**

**396 Թուից սկսած, Հայաստան Յունաց կայսրութեան և Պարսից թագաւորութեան մէջ բաժանուեցաւ : Արփա-Զայն**

Մասեաց շղթան, վանայ լիճը և կորդուաց (այսօրուայ քըրտերուն) լեռները, գրեթէ սահմանի տեղ է ին բռնել այս երկու տէրութեանց մէջ : Սակայն այս բաժանումը միշտ անփոփոխ չմնաց, գրեթէ ամէն քսան տարուայ մէջ նոր նոր փոփոխութիւններ կրեց, մանաւանդ Յունաց ձեռին եղած Հայաստանի մէջ, որնոր անդադար յարձակումներ էր կրում թէ Պարսիկներից և թէ Արաբացիներից :

Յունաց ձեռին եղած Հայաստանը, որ երբեմն Յոյն զօրավարներու և երբեմն Հայոց միջից ընտրուած, դըսերու, կիւրապաղագներու և պատրիկներու ձեռքով էր կառավարվում, մինչև տասներորդ դարուն վերջը փոքր ինչ խաղաղութիւն վայելեց : Այս ժամանակից յետոյ Յունաց ինքնակալներու բռնակալական լուծը, որոնք աւելի անկարգ էին Արաբացիներից և Պարսիկներից, քանի դնաց անտանելի եղաւ : Պարսկահայքը, որ յառաջ անբարոյականութեամբ անարգուած մի քանի Արշակունի թագաւորներու ձեռքով էր կառավարուում: 433-ին Պարսից մի հասարակ նահանդ դառաւ : Քրիստոնէաւթիւնը, որ Պարսկահայքը միւս Հայոց հետ կապումէր և մասնաւանդ Յունաց կայսրութեան մէջ եղած քրիստոնէից հետ.կարծիք էր տալի Պարսից Սասանեան թագաւորին: Խաղէկերդ (Յազկերտ ըստ Հայոց) ունայն տեղ Հայոց մեծամեծներուն յուսալի և հրապուրիչ խոստմունքներ, զինուորական և քաղաքային պատիւներ տալուց, ոսկի և արծաթ վանելուց և շատ էլ բանսարկութիւններ բանեցնելուց յետոյ այս կապը խորածակելու համար, որոշեց որ իր կամքը զինու զօրութեամբ դլուխ տանի, ինչպէս իր պապերն արել էին բռն Պարսկաստանու, Բարելաստանի և Կտեսիխոնի քրիստոնեայներու հետ: Եօթն ութ հարիւր մոգ կամքուրմ զօրքերով միասին, 445 թը ուին Պարսկահայք դրկուեցան քրիստոնէութեան տեղ Որմզդայ աղանդը հաստատելու համար, վասակ Ախոնեաց իշխանը Պարսիկ արքային խորհրդները կատարելուն օգնական էր ըլնում: Մի զօրաւոր բանակ Հայաստանու սահմաններու մօտեցաւ Պարսկաստանու կառավարութեան զործադրելու հնարքները պահպանելու համար : Հայք տեսնելով, որ իրանց կրօնը վտանգու մն է, Մարկիանոս կոյսեր դեւպան յուղարկեցին օգնութիւն

լնդրելու որնոր մերժեց<sup>1</sup> : Վեց աշխարհը Հայտսատնու հառեան և յառաջուց էլ իր հարկատուն էր, այս միջոցին իրանիղակակից էր եղել. բայց ինքն էլ Պարսից ահիցն ու բացել էր քրիստոնէութիւնն ու ընդունել էր մոդութիւնը : Հայաստանու քրիստոնեաց Աղուանքը, զրկուելով այսպէս ամէն օդնութենից մինակ մնացին Սասանեաց զօրութեան դէմ, որնոր ահ և սարսափ էր տալի Յունաց կայսեր անդամ :

Հայոց զլիուոր բարձր աստիճան աշխարհականներն ու եկեղեցականները Արտաշատումն, որ այն ժամանակ զլիուոր քաղաքն էր Հայաստանու, 450 թուին մի քնդհանուր ժողովք արին և վճռեցին որ բոլոր աղջն զէնք առնելու կանչեն հաւատոքը պաշտպանելու և մի ժամանակուոր կառավորութիւն կազմելու : Վարդան Մամիկոնեանն, որ հաւատով մի մարդ էր և մեծ հայրենասիրութեամբ քաջ և հմատ զօրավար, հըրամանատար եղաւ : Հոյք որ առ հասարակ հանդարտարարոյ են, մեծին Վարդանաց առենախօսութեամբը վարուելով և քաջութերուելով. զէնք առին իրանց ձեռին և զրօշակներու տակ դիմեցին թուով 66,000 : Աղուանք որ այս միջոցին Պարսիկներից մեծ վտանգութն էին ընկել. իրանց օդնութեան կանչեցին Վարդանին, որ իր զօրքերու մի բաժնով նրանց օդնելու դիմեց և Կուր զետին եղերքներում Քալքալ քաղաքին մօտերը Սեբուզում: Պարսից տուած մի ճակատամարտում բոլորովին յաղթեց նրանց, այս երկրումն եղած ամաւը տեղուանք ամէնքն էլ առնուեցան, Պարսից զօրքերն ու մողերը ամէնքն էլ սրից անցկացան, կրակատները կործանուեցան և Աղուանից աշխարհն էլ մաքրուեցաւ պիղծ աղանդից, նոյն չափ էլ Պարսկահայոց մէջ արին և Պարսից մեծ բանակը մինչեւ այն ժամանակ Աւտրակատական դաւառին մէջ անշարժ մնացած սկսաւ Հայոց աշխարհին վրայ դիմել : Մամիկոնեան Վարդանն այս լուրը լսելով. շտապեց գնաց իր հայրենիքը վտանդից աղատելու, Երասխից անցկացաւ ու գնաց Աստապատ փոքրիկ քաղաքին մօտերը պատերազմելու պատրաստուեցաւ : Ի վերջոյ 451 թը-

1 Այս մերժումն եղաւ զլիսաւոր պատճառ Յունաց և Հայոց մէջ նոյն ժամանակից եղած թշնամութեան, ու ու համար Հայք մի փոքր յետոյ քաղկեդոնի ժողովն էլ չընդունեցին :

ւին Տղմաւտ գետին եղերքներում Երասխի մօտ, այն մեծ և  
անմռանլի ճակատամարտն եղաւ, ուր տեղ Քրիստոսի Խաչը  
կըկին անգամ յաղթութիւն տարաւ Որմզդայ դենին դէմե  
Քրիստոնէութիւնը բոլորովին աղատուեցաւ Հայաստանեայ ց  
աշխարհին մէջ : Վարդան Մամիկոննանը 1.036 զինակից ընկերու  
ներով փառաւորապէս պատերազմի դաշտի մէջ մեռաւ, Հայաս-  
տանեայց եկեղեցին էլ նրանց իր սուրբ մարտիրոսաց զասը դրաւ :  
Վահան Մամիկոննեանն իր քեռւոյն Վարդանին տեղը բռնեց և  
երկար ժամանակ իր հայրենի երկիրը պաշտպանեց, մինչև որ  
ստիպեցուց Վաղարշ Պարսից ամբարտաւան թագաւորին 485  
թուին Հայաստանին հետ խաղաղութիւն անելու հետեւեալ  
պայմանաց վրայ : Ա. Քրիստոնէութիւնը պէտք էր պահպանէր  
Հայաստանում իր յառաջուայ վայելած ամէն աղատութիւն-  
ները : Բ. մագութեան մեհեանները պէտք էր, որ բոլորովին  
կործանուէին : Գ. թագաւորաց թագաւորը պէտք չէր դա-  
տապարտել և ոչմի աղատանի Հայ, մի ուրացողի կամ մի Պար-  
սիկ վերակացուի ամբաստանութեամբը, մինչև որ յանցաւորը  
յառաջուց իր յանցանքին համար չդատուէր :

Այս երեւելի դէպքերից մինչեւ 661 ոչենչ չունիք նշա-  
նաւոր այս «Ծրագիր» պատմութեան մէջ նշանակելու . այս  
շրջանիս մէջ ժամանակներ եղան, որ Հայաստան խաղաղ մը-  
նաց հարկ տալով Պարսից և ուրիշ ժամանակներ էլ, որ նրանց  
դէմ գլուխ վերցուց, վերջապէս մահմետականութիւնն երեւ-  
ցաւ եօթներորդ դարումն Արարիայում և վերջ դրաւ բոլոր  
այս կռիւներուն : Պարսկաստան Հայաստանի հետ մէկ տեղ  
նահանգ դառաւ Խալիֆաներու իշխանութեան : Որմզդայ ա-  
ղանդը կորաւ Պարսկաստանում իր մեհեաններու աւերակնե-  
րու տակ : Քրիստոնէութիւնն արհամարհելով Արարիոյ որդ-  
ւոց հալածանքները պահպանուեցաւ Հայաստանում, զետնդ  
այս ժամանակուայ պատմիչը, որնոր նորերումս հրատարակե-  
ցինք, երկարօրեն պատմած է այս դէպքերը, ուստի մենք էլ ա-  
ւելորդ կհամարենք այս տեղ նորունց կրկնել :

## ՀԻՒԳԵՐՈՐԴ ՇԲՁԱՆ

(885-ից մինչև 1079 Քրիստոսից յետոյ)

— առաջակա հաջող առաջակա հաջող —

ԱՅՍ ՄՐՁՈՒՄԸ պիտի տեսնանք, Հայոց ազգին իր կործանուած վիճակից վեր կանգնելու և նորունց իրքեւ անկախքաղաքական մարմին կազմելու համար արած մի քանի ջանքերը բայց պիտի տեսնենք էլ որ բոլոր այս ջանքերը մի կարծէ ժամանակուայ ընդդիմագործութեան մէջ ևն կայանում։ Հայաստան վեր է կանգնում նորունց աւելի խոր անդնդոց մէջ ընկնելու համար։

Աշխարհային յեղափոխութիւնները կրօնական հերձուածները և քաղաքական պատերազմներն արդէն սաստիկ սարսկելու զրգուել էին Մարգարելին (Մուհամետին) յաջորդներուն պետութիւնը, որոնք իններորդ դարուց հետեւ դեպի իրանց անկման էին դիմում։ Այնչափ երկար ժամանակ իրանց լուծին տակ նուաճուած ազգերն, այս անկումը տեսնելով իրանց պղատութիւնը ձեռք բերելու ետելից եղան։ Այս ժամանակուայ խալիֆայինները իրանց ապարանքներում փակուած և կանանի հեշտութեանց մէջ ընկղմած, էլ ահաւոր չեին երեւում։ Անց էր կայսեր առաքինի Էօմիր և Աբու-Բէքիր խալիֆայներուն ժամանակիը։ Այս ժամանակին Հայաստան, իններորդ և տասներորդ դարերում մի քանի մեծահոգի և աղնուասիրու մարդիկներ էին դանուում այս աշխարհիս վերանորոգութեան և զարդարման անձնանուէր ըլլող։ Աակայն Հայաստանու վայ տիրապետողներուն մօլորութիւններն ու կորքերը ամբողջ ազդը ապականել էին։ Խականութեան և երկապառակութեան հոգին Հռովմայեցիք, Յոյնք և Պարսիկ այնպիսի վարպետութեամբ տարածել էին ամեն տեղ, որ Հայոց ազգին վրայ բնաւորուել էին։ Բաղրատունեաց ցեղը որոնց սկիզբը

Հրեայ էր և տանու չորս դարուց հետեւ Հայաստանին էր պատկանում իրա Համեստութեամբը, առատաձեռնութեամբը ու իր քաջազրութեամբը պատերազմի դաշտին վրայ, մեծ համբաւ էր ստացել: Հայկազունեաց և արշակունեաց ժամանակ, քաղաքական և զինուորական պաշտօններու մեջ ընդունուելով, այս ցեղը մեծ հաւատարմութիւն և անհնանուիրութիւն էր ցոյց տուել իր ընկունած հայրենեացը համար և ամեն բարձր տսահճաններու էր հասել:

Վաղարշակ, հայկական Արշակունեաց հարստութեան զբուխը, Բաղրատունեաց ցեղին Հայաստան աշխարհին թագաւորներուն թագակիր լինելու արտօնութիւնն էր տուել: Այս ցեղեց շատերը այլեւայլ ժամանակ Հայաստանու զինուորական զօրութեան հրամանատար էին եղել: Բաղրատունիք, Խորացէլացւոց շատերու նման խնայող, նախատես, չափաւոր և իմաստուն լինելով, ահազին հարստութիւն ձեռք բերին և Աւրարատայ և Տայոց երկրին կէս մասիցն աւելի զնեցին, լինեծին Հայոց նահանգներից երկուսը: Բացի սրանցից Տուրուրերան, Բարձր Հայոց և Գուգարաց երկրին մեջ մեծ կալուածներ ունեն, նոյնպէս, ութերորդ դարումը այս ցեղին կալուածներում էր Դարիոնք, Բաղարան. Մուշ, Կողք, Կարս, Շիրակաւան, Անի, Սրեր, Ալղյուս, Արդուին, Արդահան, և ուրիշ քաղաքներ կային: Խոլիֆայներու ժամանակ, այս ցեղը Հայաստանը կառավարեց Ոստիկանի կամ Անդեսուի պատուանունով<sup>1</sup>. Աշշոտ Ա. վերջապէս 885 թուին զրեթէ մի անկախ տէրութիւն կազմեց, որոյ մայրաքաղաքն եղաւ մի փոքր յետոյ, Անի, որնոր մինչև իր աւերակներուն անգամ տակաւին վառաւոր է: Բաղրատունեաց ցեղը Արարատ նահանգին մեջ իր տիրապետութիւնը հաստատելուն պէս, միւս իշխանազն ցեղերն էլ թագաւորական թագի ետելից լնկան: Ինչպէս որ հետեւ ետլ զարուն մեջ էլ տեսնում էնիք, որ Հայաստանում հինգ վեց թագաւորութիւն է կազմուում: Արծրունեաց ցեղն առաջինն եղաւ, որ 908 թուին Վասպուրական աշխարհին մեջ իր տէրութիւնը հաստատեց<sup>2</sup>: Մի փոքր յետոյ, Կարս, 968-ին,

1 Վեստ կամ Ռեսող, արքունական տարինան, Խան, Պետ հրամանապահ:

2 Այսօր Վանայ վաշայութիւնը.

Սիւնիք, 970-ին, Կորի 988-ին : Աշտունիք, Անձեւացիք անկախ կացուցին իրանց և ստորին ազնուական իշխաններն ամենքն էլ իրանց զլուխը թաղ դնելու պատիւն կամեցան ունենալ :

Հայաստանու նման մի սահմանաւոր երկրի մէջ այս չափ բաժանում և պատերազմ զլիսաւոր պատճառ եղան բոլոր իր քաշտծ թշուառութեանց, սրա հետեւանքն այն եղաւ, որ մետասաններորդ և երկուասաններորդ դարերուն վերջերում բոլոր ոյս թագաւորութիւններն իրանց անկախութիւնը կորցրին և Հայաստան նորունց օտարներու լուծին տակ ընկաւ : Բայց ինչպէս, որ Հայք այս բոլոր թագաւորութեանց մէջ օրինաւորը միայն Բաղրատունեաց ցեղին հաստատածը կը համարին, նրա վրայ և ես մի հարեւանցի հայեցուածք կդարձնեմ :

Աշոտ Ա. 859-ից մինչեւ 885-ը Հայաստան կառավարեց իրեւ մեծ դուքս : Աշոտ տէր լինելով մի ահաղին ժառանգութեան, որոյ մասին մի փոքր յառաջմի գաղտփար տու ինք, և կարող լինելով պատրաստի ունենալ 40,000 մարդով մի բանակ բռն իրա յատուկ երկիրներից ժողովուած : բնականաբար պէտք էր, որ մի մեծ նշանակութիւն ունենար Արաբացի Ճիափէր թագաւորին մօտ և Սա էլ չկարողանալով Աշոտին մի հաստրակ հապատակի տեղ դնել, նրան թագաւորական թաղ զըրկեց, որնոր Աշոտ չհամարձակեցաւ մերժել : Վասիլ Մակեղոնացին էլ նոյնը արաւ : Այսպէս Աշոտ, թագաւոր պսակուելով, էլ աւելի ժրութեամբ իր տէրութեան վրայ դարձրուց իր մտաղրութիւնը : Մի քանի քաղաք մի քանի հարիւր աւանով և գիւղով բնակու թեան տեղի հաստատեց բիւրաւոր գաղթականներու, որ իր հայրաբարոյ տիրապետութիւնը քաշում էր իր տէրութեան մէջ : Վաճառականնութիւնն էլ հեշտացնելու համար, ճանապարհներ, կամուրջներ, իջևաններ շինել տուաւ և Երկրագործութիւնը, արուեստագիտութիւնը և կենազանաբուծութիւնը յառաջ տանելու հոդ տարաւ, մի քանի տարի յետոյ եւաւ դնաց կոստանդնուպոլիս, ուր տեղ Վասիլ կոյսեր հետ մի դաշնակցութիւն հաստատեց, նմանապէս և վաճառականութեան համաւ, էլ մի դաշնաղրութիւն, 889 թուին մեռնելիս իր որդւոյն Սմբատին թողուց թէե մինուրածազիկ տէրութիւն: սակայն բռւականին զօրաւոր :

Ամբատ Ա. իր սիրական հօր Աշոտի մահուան համար  
Երեք տարի ամբողջ սուդ անելուց յետոյ, թագաւոր օծուեցաւ  
892 թուին : Իր տերութեան հետ միացրուց Դուին քաղաքը,  
որնոր Արարացի Կմիրներուն բնակուած տեղն էր. երկար ժա-  
մանակ խոյս տալուց յետոյ պատերազմ անելու Ատրպատա-  
կանի Կմիր Օշինին դէմ Դողի մօտ մի արիւնահեղ պատե-  
քազմի մէջ բոլորովին յաղթեցնրան : Մի փոքր յետոյ էլի զէնք  
առաւ ձեռին Միջաղէտքի Կմիր-Ահմետի դէմ բայց յետ քաշ-  
ուեցաւ իր զինուորներից մեծ մասը կորցնելուց յետոյ ոմանց  
մասնողութեամբ : Յետոյ Սմբատ անձամբ Վրաստան գնաց և  
այն տեղ իր ձեռքով իր մուերիմ բարեկամին ու Հաւատարիմ  
դաշնակից Ատրներսեհին թագաւոր պսակեց : 894-ին զոհ մե-  
ռաւ Վասպուրականի թագաւոր Գագկայ և իր Հսկատակ իշ-  
խաններու մի քանիսին նախանձութեամբը : Ատրպատականի  
Կմիր Յուսուփի իր նախորդ Օշինի յաղթուելու վրէմն առ-  
նելու համար, մի մեծ բանակի զլուխն անցկացաւ և Հա-  
յաստան մտաւ, Գագկայ և Հայ իշխաններու առաջնորդու-  
թեամբ :

Սմբատ մինակ մնալով երեսի վրայ թողած իրաններից,  
Կապոյտ բերդումը ապաւինեցաւ, որնոր Յուսուփ անմիջապէս  
պաշարեց : Պաշարումը մի տարիի չափ տեսեց. բերդապահ զօրքը  
ողեւորուած իրա թագաւորիներկայութեամբը, որու համար իր  
կեանքն էր տալի, ամէն տեսակ զրկանք և նեղութիւն տարաւ  
և քաջութեան հրաշքներ զործեց, Յուսուփի մի քանի յար-  
ձակմանցը դէմ դնելով քաջութեամբ և նրա բանակին ճակատն  
որ քրիստոնեայներից էր բաղկացած, մեծ ջարդ և բուրդ անելով :  
Մի տարուց յետոյ Սմբատ ստիպուելով սովիցը՝ և քրիստո-  
նեաններուն արիւնը թափուիլը ինայելով, անձնատուր նղաւ այն  
պայմանաւ, որ իրա զօրքերուն կեանքը ապահով մնայ :  
Երդմնաղանց Յուսուփը մի անդամ որ թագաւորին անձն իր  
ձեռին ձգեց, մոռացաւ իր խոստմունքը և իր երդումը և  
սպանեց Սմբատին մի անարդ կերպով նրա թագաւորութեան  
քսան և երկրորդ տարումը :

և Աքազած կամ Ալակալալ լեռան ստորոտը Մասփսի դէմուզէմ,

Աշոտ Բ. Երկաթ մականուանելոյն թաղաւորութեան ժամանակին Հայաստանումը շարունակ պատերազմէր լինում թուրքմէններից. Պարսիկներից և աւելի իրա հպատակ իշխաններից, որոնց պատճառով և Հայաստան քարուքանդ եղաւ, ամէն տեղ աւեր և կործանում սփռուելով : Այս աւերման և կործանմանը վրայ հասաւ և մի սոսկալի սովոր որ ժողովրդեան աղէտքն ու չարիքը աւելի սաստկացրեց՝ ամբողջ քաղաքներ անբնակ անելով : Յուսուփ Սմբատայ անձը ձեռք բերելով, առ ժամանակ Հայաստանի տէրն էր եղել և մի քանի բերդեր օտար զօրքեր էին բռնել : Աշոտ, որ իր հօրը պատահած վտանգիցն ազատուել էր, մի փառաւոր վրէժինդրութեամբ եղած միասուն մի դարման անելու էր մտածում, մանաւանդ երբոր լսեց իր հօր աղէտալի մահը, էլ կարող չեղաւ չափ դնել իր բարկութեանը : Իր մօտը հաւաքած զօրքերու մի բաժինովն սկսաւ իր երկրին տէր լինել 915 թուին : Գրեթէ բոլոր ամուր քաղաքներն ու տեղերն որոնք օտար զօրքեր էին բռնել, յարձակմամբ առնուեցան և նրանց մէջ եղած զօրքերն էլ սրից անցկացան :

Այս յաղթութեանց համբաւը նախարարներին դարթեցնելով, որոնք ամէնքն էլ իրանց ամուր բերդերն էին քաշուել, եկան ժողովեցան և Աշոտին դահի վրայ նստեցրին : Յուսուփ լսելով իր պահապան զօրքերու յաղթուելը, ուրիշ երկու բանակ էլի զրկեց Աշոտի առաջն առնելու : Այս պատերազմն եօթը տարի տեսեց, որնոր արդելք լինելով երկրագործութեան, պատճառ տուաւ մի նոր սով լինելու յառաջուանից աւելի սոսկալի : Այս միջոցին Աշոտ հրաւիրուելով կստանդին է. Պերփեռուժէն մականուանեալից, կոստանդնուպոլիս գնաց, ուր տեղաց ետ դարձաւ մի յունական բանակով : Յուսուփ վախենալով այս համբաւից փորձ փորձեց մի քաղաքական բանս սարկութիւն սարքել, որ բոլորովին զլուխ տարաւ : Աշոտ Երկաթի երբօրորդի Աշոտի զլսին թաղ դրաւ և Հայաստանի թաղաւոր անուանեց : Եատ պատերազմներ եղաւ երկու Աշոտներու մէջ և Հայոց արիւնը թափուեցաւ, ոչ թէ երկրի լաւութեան համար, այլ երկու փառամոլներու պահանջմանցը համար : Ի վերջոյ Յովլէաննէս կաթուղիկոսը մէջ

մտաւ և իր յորդորանքներով նրանց միմևանց հետ հաշտեցրուց : Աշոտ իր կենաց մասցորդը անընդհատ կռիւներով անցկացրուց, որոնք յարուցանումէին իր ապստամբ իշխանները : Իր թագաւորութեան վերջին ժամանակները, Շահնշահ (թագաւորներու թագաւոր) փառաւոր տիտղոսն առաւ, միւս փոքրիկ թագաւորներից որոշուելու համար, որոնք աւելի Սէլջուքեանց բանսարկու քաղաքականութեամբ յառաջէին եկել, քան թէ իրանց փառասիրութենից : Աշոտ տասն և հինգ տարի անօդուտ թագաւորութիւն անելուց յետոյ, վախճանեցաւ :

Աշոտ Բ. Եղբայր Արասի թագաւորութիւնը 928-ից մինչև 951 խաղաղութեան, երջանկութեան և առատութեան թագաւորութիւն եղաւ . Արասը քաջ զօրապետ և իմաստուն տնօրին լինելով, բոլոր իր ուշադրութիւնը դարձրուց իր ժողովրդեան բարքն վարքը ազնուացնելու, նրա վերքերը բժշկելու և նրան երջանիկ անելու, նրան ապահով և միանդամայն բարեկեցիկ անելով : Գերի ընկնող Արաբացիքը Հայ գերիներու հետ փոփոխուեցան, որոնք գերութեան մէջ հեծումէին : Յուսուփի հետ խաղաղութեան մինոր դաշնադրութիւն հաստատելով, երկար ժամանակ այս վայրենի ասպատակների արշաւանքը կանգնեցրուց : Իրա թագաւորութեան ժամանակ քաղաքներ, աւաններ, աղքատանոցներ, վանքեր և եկեղեցիներ շինուեցան, մանաւանդ կարսայ հոյակապ մայր եկեղեցին, որնոր յետոյ մզկիթ դառաւ : Մի պատերազմումը, որ պարտաւորեցաւ տալ կուր գետի մօտ Արխազների հետ, յաղթեց նրանց և ցիրուցան արաւ . ուր նրանց Բէր թագաւորը Արասի ձեռքն ընկնելով, կարո բերուեցաւ և անգթաբար աչքի լուսից զրկուեցաւ :

Աշոտ Գ. Արասի անդրանիկ որդին իր հօրը յաջորդեց, որ 951 թուին վախճանել էր : Աշոտ իր ժողովրդեան բարոյական և նիւթական զարգացման համար ունեցած հոգացողութեան մէջ, պատերազմելուց միշտ հեռու կեցաւ. սակայն մի այնպիսի ժամանակումն էր թագաւորում որ զօրաւորագունի իրաւունքիցն աւելի ուրիշ իրաւունք չէր ճանաչուում, նրա համար պարտաւորուեցաւ 90,000 զօրքով մի մշտակայ բա-

նակ պահել հետեւակ և ձիաւոր զօրքերից բաղկացած. իր հարեւաններին աչ տալու համար : Համտուն, խալի՛մոյի բառ նակի զլսաւոր հրամանատարը, ապատամբելով իր տիրոջը դէմ, Միջագէտքի և Ատրապատականի մէջ աւար և կոտոր սփռեւ լուց յետոյ, Հայաստանի սահմաններին մօտեցաւ նոյն և մի վայրենութիւնը ի գործ դնելու համար : Աշոտ այս լսելով, նրա դէմ գնաց և արիւնահեղ պատերազմ տալուց յետոյ, Զարդ և բուրդ արաւ ասպատակներին: Համտուն Աշոտի ձեռքն ընկնելով, դլուխը կորցրուց : Այս դէպքը Խալի՛ֆային բնականաբար հաճելի լինելով, պատճառ եղաւ էլ աւելի իրա և Աշոտի մէջ եղած բարեկամական յարաբերութիւնները յաճախուելուն : Այս ժամանակից Հայաստանի սահմանները արեելքում և հարաւում, որոնք կից էին մահմետականների տիրած երկիրներուն, ամուր բերդերով և զօրքերով ամրացան: Յավշաննէս Զըմբշկիկն դէպի Տիգրիս գալով Սարակինոսներու հետ պատերազմելու, յանկարծ իր ճանապարհից դարձաւ և եկաւ իր բանակը Մշու կողմերը դրաւ, մի սպառնալի դիրք բռնելով : Աշոտ այս բանս լսելով, անմիջապէս մի բանակ կազմեց և նրա դիմացը գնաց 80,000 զօրքով. կայսրը հաշտուեցաւ նրա հետ և յետ դարձաւ 10,000 ձիաւոր Հայ զօրքով, որ Աշոտ նրան տուաւ : Աշոտ իր թագաւորութեան վերաջին տարիներումը ինքն իրան բոլորովին աստուածպաշտեան տուաւ բարի բարի գործքեր անելու. իր ծախքով ամէն քաղաք և դիւղ որբերի համար անկելանոցներ և աղքատանոցներ շինել տուաւ, նրանց մեծ մեծ եկամուտներ կապելով : Իրա խոնարհ և բարի բնաւորութեան վրայ մի գաղափար տալու համար այն կասենք միայն, որ երբէք սեղան չէր նստիլ առանց իր մօտն ունենալու մի հիւանդ, մի թրշտառ կամ մի քանի աղքատ մարդիկ, որոնց իր բարեկամներն և տէրերը կանուանէր : Ազդն էլ իր երախտագիտութեանը փոխարէն նրան Ողորմած մականունը տուաւ և նրա յիշատակը յաւիտեան մնաց : Իր թագաւորութեան քսան և վեցերորդ տարումը վախճաննցաւ 977 թուին, իր ազդին սէրն ու ցաւն իր վրայ գրաւելով :

Սմբատ Բ. Աշոտ Գ. -ի անդրանիկ որդին նոյն տարին իր

Հայրենական զահն ելաւ և իր հօր շառիղով դնալով իր  
տերութեան մէջ այլ և այլ քաղաքներ և բերդեր կառուց և  
ի մէջ այլոց Անի քաղաքը շինեց, որուն պարիսպներն ու դոր-  
գարանքներն ամբողջ շինել տուաւ : Այս գեղեցիկ Անի քա-  
ղաքը, Աշոտի սիրեկան կացարանը՝ Սմբատայ ժամանակ մի  
ճշմարիտ մայրաքաղաք եղաւ, արևելեան և հարաւային կող-  
մերից Ախուրեան (Արփայ-չայ) գետն ունելով և արևմտեան  
կողմից էլ Ծաղկոցաձորը, հիւսիսային կողմից էլ կրկնակի պա-  
րիսպներով և բոլորակ աշտարակներով և լոյն ու խոր քա-  
րաշն փոսով պատսպարելով : Քաղաքի պորտումը մայր եւ  
կեղեցին շինուեցաւ, որնոր մինչև այսօր զարմացման մի ա-  
ռարկայ է ամէն Եւրոպացի ճանապարհորդներուն : Արքունի  
պալատը Ծաղկոցաձորի վրայ եղած արևմտեան մասին վրայ  
էր շինուած, նրա Ճակատը միտիսնով էր շինուած, քաղաքի  
հարաւային կողմում եղած սրածայր լիու բերդի տեղ էր  
բռնում տէրութեան գահը պահելու : Սակայն Սմբատ եր-  
բեմն պարտաւորուեցաւ իր դործքերից ձեռը վեր առնելու  
իր հօրեղօր Կարսայ թագաւոր Մուշեղի դէմ պատերազմելու  
համար, Տայոց Կիւրապաղատ Դաւթի միջնորդութեամբը խա-  
ղաղութիւնարաւիր բարեգործութեանց հետը լինելու համար։  
Տրդատ Հայ Ճարտարապետը, որ մի մեծ տաղանդով մարդ էր,  
Թագաւորի կամացը համեմատ այն մեծամեծ եկեղեցիներն ու  
բերդերը շինեց, որոնք տակաւին մի մասամբ Անիումը և նրա  
շրջակայում մնացել են։ Սմբատ 990 թուին վախճանեցաւ, իր յի-  
շատակին անարդելով մի դայթակղելի ամուսնութեամբ, որ արա-  
բնդդէմ Հայաստանեայց եկեղեցւոյ օրինացը իր քրոջ աղջ-  
կան հետ :

**Սմբատ** Կարսայ փոքրիկ թագաւորութեան Մուշեղ թա-  
գաւորի որդին երևելի եղաւ դպրութեանց և գիտութեանց  
համար ցոյց տուած սիրով . Հրապարակական դպրոցներ բաց  
արաւ Կարսումը, ուր տեղ շատ երիտասարդներ ամէն կող-  
մից դալով, կատարելագործուեցան լեզուագիտութեան և  
գեղեցիկ դպրութեանց, ուսումնական, իմաստասիրական և  
աստուածաբանական ուսմանց մէջ :

**Սմբատ** Բ.-ի եղբայր Գաղիկ Ա.-ի երեսուն տարուայ

թաղաւորութիւնը Հայաստանի համար խաղաղութեան և  
աղքային զարդացման ժամանակ եղաւ և Բագրատունեաց տունն  
իր մեծութեան և փառաց վերջին ծայրը հասաւ. մօտ 900  
վանք, նոյնչափ դպրոցներ և անկելանոցներ, որք են դպրութեանց  
և գիտութեանց համար խաղաղ ապաստարան՝ Աշոտ Գ. ից,  
Սմբատ Բ. ից և Գաղիկ առաջնից շինուելով, ամէն կարդ ժու-  
զովորդեան մէջ քրիստոնէութեան լոյսն ու ուսումն էր ծաւա-  
լում և բարոյականութիւն ու լուսաւորութիւն էր հաստա-  
տում: Երկրագործութիւնը նրա թագաւորութեան ժամա-  
նակը մինչանաւոր զարդացում ստացաւ. երկիրը մինչեւ Արա-  
գած և Արայի լեռներու բլուրներն ու տափերը մշակուելով  
բերրի հունձեր, խաղողի թփեր, պարտէղներ և պաղատու ծա-  
ռեր էին ցոյց տալիս. վաճառականութիւնը մի նոր ցնցում  
արաւ: Անի, Արծն, Բաղեշ, Նախիջեան և ուրիշ քաղաքներ  
պահարան եղան Հնդկաստանու և Պարսկաստանու, Յունաց և  
Արաբացւոց տէրութեանց հարուստ ապրանքներին: Գաղիկ որ  
եկեղեցականաց ևս ահազին եկամաներ կապեց. Անխումայն մայր  
եկեղեցին շինել տուաւ, որուն անունը սուրբ Գրիգոր լուսա-  
ւորիշ ասուեցաւ: Կատրամիլէ, թագուհին թէ եռանդով և  
թէ աստուածաշտութեամբ նրանից ետ չմնաց Աստուծոյ  
ծառայելու և աղքատաց օդնելումը: Նո կատարեց Անիի մայր  
եկեղեցին, որնոր Սմբատ Բ. սկսել էր տուել: Գաղիկ 1020  
թուին վախճանեցաւ, իր ժողովութեանը մեծ ցաւ տալով:  
Բաղրատունեաց ցեղը նրա միջում իր վերջին գիւցապնը կորց-  
ըռեց և նրանից յետոյ իր փառքը սկսաւ նսեմանալ:

Յովհաննէս Սմբատ Գաղիկ անդրանիկ որդին 1020 թը  
ին Հայաստանի զահի վրայ բազմեցաւ, ոչ միայն իր տէրու-  
թիւնը կառավարելու մէջ ունեցած անկարողութիւնն ու-  
տգիտութիւնը ցոյց տալու համար աշխարհին, այլ նաև և  
իր բանակ հրամայելումը: Աշոտ՝ իր կրտսեր եղբայրը ընդ-  
հակառակն քաջ, աշխարհ և Ճարտար էր և Հայաստան անշուշտ  
նրա ձեռքի տակը երջանիկ կարող էր լինել և իր քաղաքական  
կեանքը կերկարայնէր: Բայց անդրանիկութեան իրաւունքը  
բանեցաւ և Յովհաննէս Սմբատը թագաւոր օծուեցաւ: Այն  
ժամանակ իրա և իր եղբօրը մէջ զահակալութեան համար

մի պատերազմբացուեցաւ : Յովհաննէս Սմբատը [թէ և 60,000  
մարդից բաղկացած մի բանակի զլուխն էր անցկացած, բայց  
յաղթուեցաւ և ցիրուցան եղաւ Աշոտից և իր փրկութիւնը  
Անոյ պարիսպներու մէջ դտաւ, որոնց մէջ ապաստանուեցաւ :  
Այս երկու եղբարց մէջ խաղաղութիւն եղաւ Արխազների գէորգ  
թագաւորի և Հայաստանեայց Պետրոս կոթուղիկոսի միջ-  
նորդութեամբը : Խաղաղութիւնն այն պայմանովէր եղել, որ Ա.  
Յովհաննէս Սմբատն բոլոր իր կեանքում Անոյ և նրա բո-  
լորակը եղած մի քանի դաւառներու տէր կը լինի . Բ.  
Աշոտն էլ Պարսկաստանու և Վրաստանու սահմանակից եղած  
դաւառներու վրայ կտիրէ և Գ. առաջնոյն մեռնելուցը յետոյ . երկրորդը միայնակ կտիրէ բոլոր տէրութեան վրայ :  
Այս պայմանադրութիւնն որ եղաւ, Յովհաննէս Սմբատ մի որո-  
գայթի մէջ ընկաւ, որ գէորգ Արխազաց թագաւորն էր լարել  
և մահուանից նրանով միայն ազատուեց, որ Հիւսիւային կողմեւ-  
լում երեք բերդ թողեց նրան . մի վոքք յետոյ մի ուրիշ դա-  
րանի մէջ էլ բռնուեցաւ, որնոր Աշոտ իր եղբայրն էր պատ-  
րաստել . բայց իր կեանքը իր հաւատարիմ իշխան Ապէրատի  
ձեռքով ազատեց զրանից :

**1021** [թուին Սենեքերիմ Արծրունի Վասպուրականի  
թագաւորը, էլ կարող չլինելով իր տէրութիւնը պաշտպանել  
Պարսկաստանու Եմիրների յարձակմունքներից, Յունաց կայս-  
րութեան տուաւ իր երկիրները և նրա վոխարէն Սեբաստիա  
քաղաքը ընդունեց<sup>1</sup> և այն տեղ քաշուեցաւ : Մի վոքք  
յետոյ Սէլճուկեանք մի յարձակում արին Յովհաննէս Սմբա-  
տի տէրութեան արեւելեան դաւառների վրայ և շատ ա-  
ւեր և կոտորած արին, բայց վերջապէս յաղթուելով Վասակ  
Պահլաւունի<sup>2</sup> իշխանից, ետ քաշուեցան շռւտով :

**Վասիլ** Բ. Արխազներու գէորգ թագաւորին նուածելու  
համար, որ ապստամբել էր, 1023 թուին ցամաքով Թրասլիղոն  
ելաւ, բավմաթիւ զօրքով բոլորովին նուածեց Արխազներու եր-  
կիրը : Այս ժամանակն էր, որ Գաւ իթ Տայոց Կիւրապաղատը  
կտակով իր երկիրները կայսեր թողուց : Այն տեղից Վասիլ

1 Այսօրուայ Սըլմաղը, վոքք Հայաստանումը .

2 Պելլի կամ Պելհի, Արշակունեաց շաւիղից :

կամենումէր զիմել Յովհաննէս Սմբատայ երկիրներու վրայ կասկածելով, որ նա (ըստ ասելոյն Կեղրենոսի) նպաստումէր և պահպանում Գեորգ ապստամբին : Յովհաննէս Սմբատ վախենալով կայսեր զիտաւորութենից, նրա յառաջը դրկեց Պետրոս կաթուղիկոսին իր ձեռքովը զրուած մի նամակով որու մէջ պարունակումէր այս խոստամունքը. թէ իր մեռնելուց յետոյ իր երկիրները նրան է թողնում : Կայսրը ուրախ լինելով մի այսպիսի յաջող առաջարկութեան վրայ, կոսդանդնուպօլիս գարձաւ առանց Յովհաննէս Սմբատին աւելի նեղութիւն տալու : Երկու տարի յետոյ Վասիլ 1025 թուին, իր մահաւուան անկողնոյն մէջ և չարչարուելով անշուշտ իր անիրաւութեան յիշատակով և գույշէ թէ իր տէրութեան շահը մոտածելով՝ վերոյիշեալ նամակը մի Հայ քահանայի յանձնեց ասելով նրան Շառար այս նամակը քո թագաւորին և ասան իմ կողմից, որ ինչպէս ամէն մահկանացու մարդ և ես յաւիտենականութեան դրան շեմքի վրայ եմ կանդնած և չեմ կամենում անիրաւութեամբ ուրիշի ստացուածքը յափշտակել, թող ուրեմն ետ առնու իր նամակը և իր թագաւորութիւնը և իր որդւոցը տայ : Երբ որ կոստանդին Ը. յաջորդեց Վասիլի գահին վրայ, անարժան այս քահանան նրա յառաջնելաւ և նրան յանձնեց այն նամակն, որնոր Յովհաննէս Արմբատին յանձնելու տեղ իր մօռնէր պահել : Այս բանս որ շատ աւելի ամօթ և անարժան է Աստուծոյ քահանայի և մի Հայու ձեռքով լինելուն համար, հետեւանքն ունեցաւ ամբողջ Հայաստանի կործանումը և հաղարաւոր քրիստոնեայներու մահը, ինչպէս որ շուտով պիտի տեսնենք :

Յովհաննէս Սմբատ քսան տարի թագաւորելուց յետոյ 1040 թուին վախճանեցաւ առանց ժառանդ թողելու : Աշատ իրա եղբայրը և իր ժառանդը, իրանից յառաջէր մեռնել : Ուրիշ մարդ չէր մնացել բայց միայն Գաղիկը Աշոտայ որդին, որ գեռ երտասարդ էր և երկու թագի էլ ժառանդ էր : Երբ որ Միքայէլ Գալաֆատ լսեց Յովհաննէս Սմբատի մահը, մարդ ուղարկեց Հայաստանի թագաւորութիւնը պահանջելու : Տէրութեան ինամակաների խորհուրդը թէ և այլնայլ կարծիքներով բաժանուած էր իրարից, սակայն այս

անգամ միարերան մերժելով, քաջութեամբ պատասխան տուին կայսեր : Վեստ<sup>1</sup> Արդիսն, որ տէրութեան խնամակալն էր, մի փառամոլ մարդ էր և իրան համար մի զօրաւոր կողմնակցութիւն ունէր : Սա ջանք արաւ Հայաստանի թագը իր զլուխը գնելու կամ թէ ոչ Յունաց տալու : Վահրամ Պահլաւունի զօրապետը, մի ուրիշ կողմնակցութեան զլուխ էր, որոյ կամքն էր պահպանել թագը տիրապետողի գլխի վրայ և ամէն կերպով մինչև վերջի շունչը պաշտպանել : Գաղիկ թէ և զեռ երիտասարդ էր, սակայն իր խելքովն ու վայելու տեսքով մեծ մեծ յոյսեր էր ցոյց տալի : Դալաֆաթ զայրանաւով խնամակալաց մերժելու վրայ, որոշեց որ իր պահանջաւունքները զենու զօրութեամբ բանեցնէ : Երեք բանակ, եւ ըեք անգամ այս երկրին դէմ գալով իր կողմէն, յաղթուեցան և ցիրուցան եղան, բայց հարկաւ մեծ նեղութիւն տալով Հայաստանին : Յոյները չվհատեցան և չնայելով այս պատերազմներու անյաջող ելքին, մի չորրորդ անգամէլ փորձ փորձեցին Կռտանողին թուի ժամանակ, որ կասուի Մոնոմախոս : Յոյնք իրանց առաջնորդ դաւաճաններ ունենալով, ամէն տեղ ահռելի աւեր և կոտորած սփռեցին և եկան Անոյ առջեր բանակ դրին . մի և նոյն ժամանակ Դաւիթ Անհողին<sup>2</sup> անուանեալը հավարաւոր Ազուաններու զլուխն անցենալով, որոնք Կուր զետի ափանց վրայ բնակող ժողովուրդ էին և մինչև այն ժամանակ բարեկամէին Հայոց, որոնց միշտ Հայք պաշտպանելէին, դրաւեց Մոնոմախոսի թելադրութեամբ Հայաստանի հիւսիսային արեւմտեան դաւառները և իր Ճանապարհի վրայ շատ քաղաքներ և աւաններ կործանեց : Վահրամ, անմահ Վահրամը թէ և ութսունամեայ էր, դիւցաղնութեամբ պաշտպանեց Անին : 30,000 զօրքով մի զօրաւոր յարձակում արաւ դէպի դուրս : Յունաց բանակը ջարդ ու բուրդ եղած և 20,000 մարդ էլ մեռած և վիրաւորուած

1 Վեստիեր, Վէստիարիսոս, սեննեկապետի աստիճան, որ Յոյն կայսրները մեծամեծ մարդկանց էին տալի միջին դարումը, Վեստ (Յունարէն), Հայոց շատ հեղինակներ այս բառիս ոկիզը չդիտենալով՝ անհեթեթ կերպով մնկնեցին :

2 Առանց հողի :

թողելով Անւոյ առջեր, շտապելով քաշուեցաւ իր երկրի վրայն  
Վահրամն այն ժամանակ գահի ժառանդին Անի բերել  
տուաւ և նրան Հայաստանի թագաւոր օծել տուաւ, Գաղիկ  
երկրորդ անունով։ Երխտասարդ թագաւորը մեծ դործու-  
նէութեամբ իր երկրի մէջ խաղաղութիւն և կարգաւո-  
րութիւն կատարելու ետևիցն եղաւ։ Այն տեղաց Թուրքմէն-  
ներու խումբերը դուրս արաւ, որոնք ժամանակ գտնելով Հա-  
յաստանի խոռվութեան ժամանակ, յարձակուելէին նրա վրայն  
Հայաստան հազիւ շունչէր առնում մի փոքր, որ Մոմնախ նը-  
րանց մարդ զրկեց Անին պահանջելու համար, բայց Գաղիկ  
մերժեց։ Ասիդ և Նիկողոս Յոյն զօրապետները հրաման առին  
իրանց ախրոջից զինու զօրութեամբ տիրելու Անիին։ Մոնոմախ  
նոյն և մի ժամանակ լնծայներ տալով Աբուսուար Գուինի  
կմիրին, գրգռումէր Հայաստան անհանդիստ առնելու արեւելեան  
կողմից։ Գաղիկ այսպէս նեղն ընկնելով և տեսնելով, որ իրա-  
նից շատ աւելի զօրաւոր թշնամոյ առաջն է, ամենելին իր  
հանձարը չկորցրուց և պատրաստուեցաւ որ և է հնարաւոր  
գեպքերու դէմ պաշտպանելու իրան։ Ընծաներ տալով է-  
միրին ձեռը վեր առնել տուաւ նրան իր դիտաւորութենից  
և յետոյ Յունայ բանակի վրայ դիմեց, որ կարծումէր, թէ այս  
անգամ Անին իր ձեռը կընկնի անպատճառ։ Յոյները բոր-  
քոքուած էին մի առատ կողոպուտ անելու յուսով, իսկ Հայք  
իրանց բունն ու կրօնը պահպանելու պարտականութեան խըղ-  
ճով։ կոխւը ոչ երկար եղաւ և ոչ արիւնահեղ այլ Յունաց  
փախուստով վերջացաւ, որ նոյն ժամանակից երկու տարիի  
շափ Անւոյ վրայ մտածելուց դադար արին։

Սակայն Մոնոմախ յաջողեցաւ ձեռք բերելու նենդու-  
թեամբ այն, որ կորող չէր եղել զինու զօրութեամբ կատա-  
րելու և զօրաւարացը Անիի առջեւ կրած հարուածից յե-  
տոյ, Գաղիկայ բարեկամն ու ղարմացողն եղաւ կեղծաւորու-  
թեամբ։ Միտեւ նրա հետ սաստիկ բարեկամական թըղ-  
թակցութիւն անել որով յայտնումէր իր փափաքը տեսնել  
Գաղիկին միանգամ մի յաւիտենական խաղաղութեան դաշնա-  
զրութիւն անելու նրա հետ։ Ուստի լաւ ցոյց տալու հա-  
մար, որ հաւատարիմէր իր բարեկամութեան մէջ Գաղիկայ հետ

Հայ պատղամաւորներու առջեւ մի հանդիսաւոր երդումկերաւ սուրբ Գրքի և Ցիսուս Քրիստոսի Խաչի վրայ :

Գաղիկ Համոզուելով այսքան բարեկամական նշաններից և յորդորուած դաւաճան Վեստ Սարդիսից, Կոսդանդնուպօլիս գնաց, Ճերունի Վահրամի Խորհրդին մտիկ չանելով . Մոնումախ ընդունեց Գաղիկին իրան աստիճանին վայել պատուով. բայց մի քանի ժամանակից յետոյ առաջարկեց նրան Անին տալու և տեսնելով, որ նա սաստիկ դիմադրութիւն է անում; պահեստի դնել տուաւ Գաղիկին Բոսփորի մի ամայի կղզւոյ մէջ ընդդէմ ամենայն մարդկային իրաւանց :

Վեստ Սարգսի կուսակիցները խմացում տռնելով թաղաւորի արդելման մէջ լինելու, մի խորհուրդ արին և որոշեցին, որ Անոյ քառասուն բանալիները զրկեն կայսեր մի նամակով, որու մէջ գրուած էր, թէ «իրանք տալիս են կայսեր բոլոր աշխելեան տէրութիւնը» :

Այս նամակը ձեռին, Մոնումախ նորոգեց իր պահանջմունքը դժբաղդ Գաղիկից, որ դեռ շատ պաշտպանեց իր իւրաւոնքները. բողոքելով իրա դէմ եզած բռնաբարութեան դէմ: Բայց տեսնելով որ էլ յաւիտեան իր երկիրը տեսնելու արգելուած էր, իր հաւանութիւնը ակամայ տալու ստիպուեցաւ: Գաղիկ 1045 թուին իր թաղաւորութիւնը Յունաց կայսեր թողուց և ստացաւ նրա փոխարէն Բիսու Կապաղովկիայի փոքրիկ քաղաքը և մի աղարանք Բոսփորի մէջ:

Պարակաման ներքինի և զօրավար Յունաց, Հայաստան զրկուեցաւ մի բանակով նրան տէր լինելու: Անոյ առջեւը հասնելով, որ ներս մտնելու յայս ունէր յաղթանակով. ընդհակառակն դռները փակուած զտաւ և բոլոր զօրքերն էլ զէնքը ձեռին ոտքի վրայ պատրաստ: Ուստի մի կանոնաւոր պաշարում անելու ձեռք զարկաւ, սակայն Անոյ զօրքը մի յարձակում անելով գէպի դուրս ջարդու փշոր արաւ պաշարողներին, որոնք նորունց յետ քաշուեցան: Ի վերջոյ մատնութիւնը յաղթեց վերջին անգամ: Պարակաման յետ կանչուեցաւ Անոյ տէր լինելու: Եւ տարաբաղդ Հայաստանը Յունաց մի զաւառ դառաւ, բայց ոչ երկար ժամանակի համար:

Եթէ երբէք Բիւղանդիոնի արքունիքը ծանր սխալանքներ

արաւ, որոնք յետոյ իր անկման և կործանման պատճառ լինին, հայկական թաղաւորութեանց իր կայսրութեան մէջ ամփոփելը կամ միաւորելը ամէն քաղաքագէտ մարդիկներից պէտք է նկատուի, որ այն սխալանքներից ամէնից ակներեն ու ծանրն է : Արեւելեան կայսրութիւնը որչափ որ մեծ երևեցաւ, իրօք ուրիշ բան չէր, բայց միայն այլեայլ ազդերու, ցեղերու և կը ըսներու խուռն քաղմութիւն, որոնք միշտ պատրաստ էին ապստամբելու առաջին պատահած առթին ընդդէմ Յունական տիրապետութեան և օգնական լինելու նաև նրանց՝ որոնք այս կայսրութեան վրայ էին յարձակում : Տասներորդ և մետասաներորդ դարերում Յունական տարերքը շատ տկար էր այն տեղ, համեմատութեամբ Բուլղար, Սլաւոն, Հայ, Վրացի, Ասորի կամ Արխազ տարերքին : Օրէնքն ու արդարութիւնն այն տեղ միայն թղթերումն էին գրուած, զինուորական բռնակալութիւնը այն տեղայ ամէն իրաւունք դուրս էր հանել և Մեծին կոսդանդիանոսի գահը ձեռք բերելը զինուորական տմարդի ձեռին մի խաղալիք էր եղել, որու մէջ և հայկական ցեղն էլ մի մեծ մասն ունեցաւ<sup>1</sup> : Բագրատունեաց և Արծրունեաց թագաւո-

- 1 Անաւասիկ Հայոց ցեղից Յունաց կայսր եղողներուն ցուցակը :  
Ա. Մօրիկ, Յօշականում ծնած Էջմիածնի մօտ, որ 582-ից մինչեւ 602 թիւը կայսրութիւն արեց :  
Բ. Մժէժ, կամ Միսասէս 667 թուին :  
Գ. Փիլիպպոս, Վարդանայ որդին 711-ից մինչեւ 713 :  
Դ. Արտաւազդ 741-ից մինչեւ 743 :  
Ե. Լէոն է. Արծրունի հայկազն անուանեալը 813 ից մինչեւ 820 :  
Զ. Վասիլ Ա. Արշակունին Հայ գաղթականաց մէջ է ծնել Մակեդոնիում. 876-ից մինչեւ 896 :  
Է. Լէոն Զ. Խմաստասէր մականուանեալը եւ Ը. Աղէքսանդր իր որդին, որոնք իրարու հետ կայսր եղան :  
Թ. Կոսդանդին է. Պերփէռուժէն Լէոն Խմաստասիրի որդին եւ Վասիլի թոռը 912 ից մինչեւ 959 կայսր եղաւ, որ արեւելեան կայսրութեան ամէնից խմաստուն եւ ամէնից մեծ կայսրն եղաւ :  
Ժ. Ռոմանոս-Ղաքարէն որդի Վախտակայ, Հայաստանի իշխան Կոսդանդին է. ի հետ միասին 25 տարի Յունաց կայսրութիւնը կառավարեց, ԺԱ. Ռոմանի Բ. Պերփէռուժէնի որդին, 959-ից մինչեւ 963 :  
ԺԲ. Յովհաննէս Զըմշկիկ Երեքպողիում ծնած, 669-ից մինչեւ 976 :  
ԺԳ. Վասիլ Բ. Ռոման Բ. ի որդին 49 տարի կայսրութիւն արաւ, 976-ից

ըութիւնները այս կայսրութեան արևելեան կողմն լինելով, թէև ստորին էին նրանից բազմամարդութեան և քաղաքակրթութեան կողմանէ, սակայն վերինն էին նրանից իրանց կրօնի և ազգի միութեամբը, իրանց բանուկ վաճառականութեամբը, իրանց երկրագործութեան ծաղկած վիճակովը և իրանց ճարտարութեամբն ու հարստութեամբը, որոնց վկայ են այն հաւատալի անհատում քաղաքները, աւանները, բերդերը, գործարանները, վանքերը, եկեղեցիները, հիւրանոցները, կամուրջները և ճանապարհները, որոնք այդչափ քիչ ժամանակուայ մէջ շինուել են և անչափ միլիոններ են արժել այս երկու փոքրիկ թագաւորութեանց մէջ : Արևելեան կայսրութեան պատմութիւնը կարդալիս տեսնում էնք, որ արևելքում ունեցած բերդերը միշտ յարձակումներ են կրում և յափշտակւումնեն Պարսիկներից կամ Արաբացիներից այս երկու թագաւորութիւնները զեռ չկաղմուած : Բայց նրանց գոյանալուցը յետոյ, ապահովանումնեն նրանք և Արզումի, Բայրուրդի, Սրվազի, Երզնկայի և ուրիշ Յունաց պատկանած զաւառները վայելում են այս թագաւորութեանց գոյութեան բոլոր ժամանակներում, այսինքն 300 տարիի չափ . Հայոց արեան գնովը մի երկար խաղաղութիւն, մինչդեռ հարաւային գաւառները շատ յաճախ աւելուում եւ առնուումնեն Արաբացիներից և Սելջուքեանց տիրապետութիւնն էլ հաստատուում է իկոնիում, մի քանի օրուայ ճանապարհով հեռու կոսդանդնուածութիւն : Արդ Անոյ և Վանայ հայկական թագաւորութեանց գոյութիւնը հարկաւոր էր, ոչ թէ միայն հայկական

մինչեւ 1025. սրանից էր որ Վաղիմիր Ա. Ռուսաստանի մեծ դուքսը ընդունեց 988-ին քրիստոնէութեան կրօնի ճանաչումը :

ԺԴ. Կոստանդին Ը, Վասիլ Բ. ի եղբայրը, 1025-ին դահն ելաւ, 1028 ին մեռաւ երեք տարի կայսրութիւն անելուց յետոյ,

Այսպէս Վասիլ առաջնոյն ցեղը 212 տարի կոսդանդնուածում կայսրութիւն վարեց :

Կարող էինք այս տեղ անհամար հայկաղունք աւելացնել, որոնք երեւելի են եղել Յունաց կայսրութեան մէջ, իրեւ պատրիարդ, ատենակալ, զօրավար, նմանապէս և հայկաղնուհիք, որոնք կապարուհի են եղել, բայց մեր հայեցուածքի նեղ շրջանը չէ ներում մեղ աւելի խօսել, Այս մասին մի ուրիշ գործի մէջ նորունց կիսուինք :

ապրերքի զարգացմանը համար, այլ և արևելիան կայսրութեան ընդհանուր օդտի համար :

Մարդ կսոսկոյ և սրտից արխէնը կերթայ Յունաց առած անողորմ վայրենութեանց պատմութիւնը լսելիս Հայաստանում, երբ իրանց գաւառը գառաւ : Երբ Անւոյ տէր եղան, իրանց առաջն հոգսն եղաւ այդ տեղաց դուրս քըշելու զօրավարաց մեծ մասը և մեծամեծներին ու նրանց զօրքերին էլ ցրուելու : Իրանց սուրբ և թոյնը շատ երևելի մարդ կիկներից պրծացը ին ժողովուրդը անպաշտպան մնալով : անհնարին տուրք վճարելու հարկադրուեցաւ : Անի, Մուշ, Բաղեշ, Զարիշատ, Պայաղեդ և Երազքաւորս քաղաքները, նոյնապէս և Վան, Մանազկերտ, Խլատ, Արծիկ, Արծն, Ոստան և Բէրկրի քաղաքներն ուրիշների հետ միասին Յունաց զօրքերով լքցուեցան : Տուղբիլ Սելճուքեանց Սուլթանն, որուն նախորդ Հասանը Տիգրիս գետից անց էր կացել և Միջոգետքը վերիվայր էր արել Հայաստանու վեճակն իմանալով, մի յարձակում արաւ : Արծն<sup>1</sup> բազմամարդ ճոխ և վաճառաշահ քաղաքը առնուեցաւ մի փոքր ժամանակ զիմանալուց յետոյ : Այս քաղաքի բնակիչքը, որոնք 140,000, 150,000-ի<sup>2</sup> չափ էին, սրով կոտորուեցան և գերի տարուեցան, քաղաքն էլ ամբողջ մոխիր գառաւ : Արծիկ և Սմբատարերդ քաղաքները նրանցից աւելի լաւ բաղդ չունեցան, զոմնենոս ըստ Հայ պատմագրաց, գատաքաղոն ըստ Սէկիւրի, Յունաց զօրավարը Սելճուքեանց յառաջն առնելու համար 60,000 զօրքով մի բանակ գումարից : Նիբարիտ Վրաց թագաւորը, Ահարօն Վանայ վերակացուն և Գրիգոր Մաղիստրոսը Վահշամայ որդին, իրանց զօրքերով նրա հետ միացան : Քրիստոնէից բանակը պատերազմ տուաւ Տուղբիլի գէմ բայբուրտի մօտերը, բայց յաղթուելով ետ քաշուեցաւ : Մանազկերտ պաշարուելով այն պատերազ-

1 Իդուր տեղն է, որ Կոնսը կիւ ըը իր տիեզերական պատմութեան մէջ 3. գ. եր. 501 Արծիկն քաղաքը Արղրումի հետ է շփոթում, այս երկու քաղաքներն իրարից տարբեր են, առաջնոյն աւերակները Արդրումի արեւելիան կողմը կընկնին :

2 Ըստ վկայութեան Արխատակէս Լաստիվերացւոյն ժամանակակից պատմագրին,

մից յետոյ Տուղթիլեց, դիւցազնութեամբ դէմ զրաւ : Այս քաղաքը իր հրամանատար Վասիլի ձեռքով ազատեցաւ, Հայոց երիտասարդ կտրիծներն և մի ֆռանգ, որ քիմիական հրանարքներով պաշարման մեքենայները կրակի տուաւ, հարկագրեց թշնամոյն ետ քաշուել : Ալփասլան Տուղթիլի մեռնելուց յետոյ գահը բարձրանալով՝ յառաջ քշեց իր աշխարհակալութիւնը դէպի Յունաց կայսրութեան մէջ : Անին պաշարեց 1064 թուին և առաւ, այս ժամանակուոյ Յոյները, անգութ տկարներու վրայ և սողուն զօրաւորաց առջեւ, Անիից դուրս եկան, և այն փառահեղ քաղաքը որս դառաւ այն վայրենիներուն : Կոտորածն այն աստիճան ահռելի էր, որ ըստ վկայութեան ժամանակակից պատմագրաց, Արփայ չայի ալեքսերը արիւնով ներկուեցան : Հաղարաւոր կտրիծ տղամարդեր և կոյս աղջեկներ գերի տարուեցան աշխարհակալներու կանանցին տարերք դառնալու : Քաղաքն աւարի առնուեցաւ և կրակի տուեցաւ և գեղեցիկ շէնքերու մեծ մասը Աստուածային պաշտաման և հասարակաց համար նուիրուած հոյակապ շինուածքներովը կործանուեցան : Անի քաղաքը, այդ դէպից հետէ դատարկուելով, 300 տարիի չափ խաղալիք դառաւ այլեայլ կուսակցութեանց, որոնք հետզհետէ առնում և տալիս էին իրարու, մինչև որ չորեքտասաներորդ դարումը մի սաստիկ երկրաշարժ վախճան զրաւ նրա ողորմելի վիճակին :

Միտք ունենալով մի ուրիշ դորձքի մէջ, որնոր այս միջոցում պատրաստում էմ, մի ամենաճիշդ և մանրամասնօրէն դրուած Հայաստանի երկրաղբութեան և տեղադրութեան մասին տալ, երկար չեմք կենալ մի քանի իրերու վրայ, որոնց վրայ պիտի խօսիմ, այլ շտապով կանցկենամ այս հինգերորդ շրջանի վերջին համեմու :

Ալփասլան էլ մի ծանրակշիռ արգելք չդանելով՝ Հայաստանում Յունաց կողմանէ, որոնք յայտնի կամենում էին, ինչպէս երեսումէ, ոչնչացնել որչափ որ կարելի է հայկական աղղայնութիւնը, իր աշխարհակալութիւնն աւելի յառաջ քշեց . Կարս, Երզրում, Բայբուրդ, Սըմազ և Կեսարիա նրա տիւրապետութիւնն ընդունեցին : Ոսմանոս Դիոդինէս իր վերջին ջանքն արաւ դոնէ մի քանի քաղաքներ փոքր Հայաս-

տանից պահպանելուն, բոյց յաղթուելով Ալփասլանից, զերի  
ընկաւ, զեռ մետասաներորդ դարը չվերջացած՝ ամբողջ Հայ-  
յաստանը Յունաց ձեռքից դնաց, որոնք պատժուեցան իրանց  
յափշտակողութեան փոխարէն :

Իսկ տարաբաղդ Գագիկը, որ Հայաստանի գահը կորցրել  
էր, երկար ժամանակ Կապաղովիկում թափառեց առանց մի  
ծանրակշիռ բան կարող լինելու անելոր իր աղատութիւնը  
կամ իր տէրութիւնը ձեռք ձգի : Մի սոսկալի սպանումվեր ջ  
դրաւ իր տխուր կենացը, երեք թշուառական Յոյն Քալիստրա  
գղեկումը որոդայթ լարելով, նրան 1039-ին վատօրէն սպա-  
նեցին : Յովհաննէս և Դաւիթ իր երկու որդիքը Փոքր յե-  
տոյ մեռան, առաջինը անծանօթ հիւանդութեամբ, երկրորդը  
թոյնով, նոյնպէս և Աշոտ Յովհաննէսի որդին և Բագրա-  
տուննաց ուղիղ շառաւիղը բոլորովին վերջացաւ :

---

## ՎԵՅԵՐՈՐԴ ՇՐՋԱՆ

(1080-ից մինչև 1393 Քրիստոսից յետոյ)

— — — — —

**Ա**ՅՍ շրջանս մեր յառաջն է հանում մի նոր թագա-  
ւորութեան հետ միասին և մի հետաքրքրելի թուական, ո-  
րոյ միջոցումը Հայաստան Արևմտեան քրիստոնէից հետ ուղ-  
ղակի յարաբերութիւններ է ունենում : Ոուրէն Գագիկ ԲԱ-ի  
մերձաւոր ազգականը և նրա յաւերին հաղորդակիցը, ակա-  
նատես լինելով նրա անպատութեամբ սպանուելուն՝ ցաւած  
և զայրացած սրտով Տորոսի սարերն է քաշուում, ուր աեղ  
արդէն հաղարաւոր Հայեր ժողովաւած էին : Կիլիկիոյին  
շատ անգամ տիրել էին Հայաստանի թագաւորները, որնոր  
միմիայն Եփրատ զետովն է բաժանուած և այս ժամանակնե-  
րումս Փոքր Հայոց մասն էր կազմում :

Հայոց Կիլիկէումն առաջին անգամ Հաստատուելու ժա-  
մանակը շատ հին լինելուն համար, երբ լինելը չգիտացուիլ :

Հայք այս տեղն են եկել, մի մասամբ Փիւնիկեցոց և Նղիդշացոց հետ առուտուր տնելու, մի մասամբ էլ Արօմին և Տիգրանին հետ և վերջին անդամն էլ մի ապատառան զրանելու Արօրացոց և Յունաց տուած նեղութեանց և հալածանաց ու մասնաւրդ Բոլոր այս պատճառներն աճեցրել էին իններորդ և տասներրդ դարերումը Կիլիկիումը ապաստանւող Հայոց թիւն, արդէն այն տեղ Հայք Ռուրենը չհասած, մի քանի անկախ իշխանութիւններ ունեին :

Ասացինք: որ Գագիկ 1079 թուին ապամուռել էր : Յաջորդ տարին Ծուրեն, Գող մակոնու անեալ Վասիլի, Արիբատի և Տարսոնի մօտերումն եղած Լամբրոն քերդի հրամանատար Օշինի օգնելով, սկսաւ Տաւրոսումիր տիրապետութիւնը հաստատել : Մինչև այն ժամանակն այն տեղ բնակող Յոյները մի մասամբ բնաջինջ եղան և մի մասամբ էլ դուրս քշուեցան և Ռուրեն խաղաղութեամբ երկրին տեր եղաւ մինչև իր մեռնելը, որնոր 1095 թուին պատահեցաւ<sup>1</sup> : Կոսդանդին Ա. իր որդին, իրան յաջորդեց և 1095-ից մինչև 1100 թիւը տերութիւն վարեց : Սա իր երկիրներն ընդարձակեց Յունաց ձեռ ից առնելով. նրանցից մի քանի ամուր բերզեր էլ խեց, որնց միննէր Վահկաց, որնոր կառավարութեան գլխաւոր տեղն եղաւ :

Խաչակիրներու պառերագըքը, որ արևմտեան քրիստոնեայք այն ժամանակ արկելքում սկսան, որչափ որ սկզբումը նպաստաւոր եղաւ Ռուրենեան թագաւորութեան հաստատութեան և ընդարձակութեան համար, այնչափ յիտոյ վնասակար և աղետաբեր եղաւ : Կոսդանդին Ա. արևմտեան քրիստոնեայքն իրին եղբայր ընդունեց, նրանց հետ ուխտ դրաւ գաշնաւոր և բարեկամ լինելու, և նրանց մեծամեծ ծառայութիւններ մատուց, Անտիոքի պաշարման բոլոր ժամանակը խռչակիլք Կոսդանդինից, ու թէ միտյն օդնութիւն ընդունեցին, այլ առատ պաշար և պարէն, որոնք ինչան երախտողիտութեան Կոսդանդինին Մարքիսի տիտղոս տուին :

Թորոս Ա. իր հօրը Կոսդանդինին յաջորդեց, որ 1100 թուին մեռաւ : Սա կառավարեց Կիլիկիան, (որնոր այնուհետ Զուրէ որ թէ Դէլբար այս թաղ ուորութեան հիմնադրին անուտնում է Ֆիլառէտ Բրագանսա, Բառ զիրք խօսակցութեան և ընթերցանութեան, հատ Գ. 5-դ բաժին, երես 133—139,

1 Զուրէ որ թէ Դէլբար այս թաղ ուորութեան հիմնադրին անուտնում է Ֆիլառէտ Բրագանսա, Բառ զիրք խօսակցութեան և ընթերցանութեան, հատ Գ. 5-դ բաժին, երես 133—139,

տեւ անխափիր կամ Կիլիկիա կամ Հայաստան կանուանենք) մինչև  
1123 որ և է իր մեռած ժամանակը: Թորոս Յունաց ձեռից Կի-  
լիկիայից դուրս մի քանի քաղաքներ արաւ, սրանց մէջն էր և  
Գալիսդրա, ուր տեղ սպանեց Գակոյ սպանողներին: Գող Վա-  
սիլի օշնութեամբ Սելջուքեանց և Թուրքմէններուն յաղթեց,  
որոնք կամենում էին Կիլիկիոյ գաշտավայրերը տրշաւել արե-  
ւելեան և հարաւային կողմից, Թորոս իրանից ուղիղ ժառանդ  
շթողուց, իր եղբայրը Լեռն Ա. 1123 թուին կառավարութեան  
սանձն իր ձեռքն առաւ և կոսդանդնուպօլսում 1141 թուին  
բանտին մէջ մեռաւ: Լեռնի առաջին անդամ Յունաց հետ  
արած կոիւները յաջող զնացին: Շատ անդամ կայսերական  
զօրքերուն յաղթեց և նրանց ձեռից Միսիս, Տարսոն և Սար-  
ւանտիկեար քաղաքներն առաւ, որոնք իր երկիրները շատ ըն-  
դարձակեցին: Բանդրադ Հայկազն իշխանը Բաղտինը կոդիրուա-  
դը-բույլօնի եղբայրը Եղեսիան առնելու <sup>1</sup> տարաւ, ուր տեղաց  
Յոյները դուրս քշեցին և օդնութեան հասաւ Ռողերիոսի,  
Անտիոքի կառավարութեան խնամակալին Սարակինոսաց գէմ  
և Աղազ քաղաքն առաւ: Լեռնի և Մարաշու իշխան Բաղդինի  
մէջ մի վէճ բացուելով մի կոիւ հետեւեցաւ, որու մէջ վեր-  
ջինը յաղթուեցաւ. սակայն երեք տարի յետոյ Լեռն դարանի  
մէջ բռնուելով, որնոր Բաղդին էր լարել նրա համար, Անտիոք  
տարուեցաւ և այն տեղ բանտ զրուեցաւ: Լեռն բանտից ա-  
զատելու համար Բոհեմոնտին Ատանա, Միսիս, և Սարւան-  
տիկեար քաղաքներն ու 60,000 դաշեկան տուաւ, բայց երբ  
ազատութիւն գտաւ տուածները ետ արաւ և Անտիոքի գա-  
ւառն տակնուվայ արաւ: Բէյմոնդ Բոհեմոնդի յաջորդը, Յով-  
հաննէս Կոմինոս կայսերից ստիպուած Լեռնի հետ խա-  
ղութիւն անելով դաշնակցութիւն հաստատեց: Լեռն զնաց  
Սելէկիա քաղաքը սպաշտեց, որնոր դեռ երեւելի քաղաք էր  
և Յունաց կոյսեր էր սպատկանում: այս արղելքն Բէյմոնդին  
ազատեց, բայց սպատճառ էլ դառաւ Հայաստանի մեծամեծ  
ձախորդութեանց: Յովհաննէս Կոմինոս բազմաթիւ բանակի  
զլուին անցկացած Լեռնի տէրութեան մէջ մտաւ: Միսիս,  
Տարսոն և Ատանա, Յախուտ, Ամայիք, Խալիճ յանձնատուր եւ

ղան կայսեր, որ եկաւ Անարգարայի<sup>1</sup> յառաջը դրաւ բանակը Այս քաղաքն երկար ժամանակ ինքն իրան պաշտպանելուց յետոյ առնուեցաւ և իր բնակիչներին մի մասն էլ որից անցկացաւ : Անարգարայի առամբ Վահկիայ<sup>2</sup> քաղաքին առնուելուն պանձառ եղաւ, որու առջելը պաշտպաները շտամարդ կորցը ին: Ի վերջոյ Լեռն ինչպէս նաև Ռուբեն և Թորոս իր որդիքը, զէնքերը թողուցին և 1136-ին անձնատուր եղան, որոնք կայսրը կոսդանդնուսոլիս առրաւ, Ռուբենը շուտով աչքերի լոյսը կորցրուց և սպանուեցաւ, Լեռն գերութեան տանչանքներով մեռաւ : Իսկ Թորոսը աղատութիւն դանելով իր հօրը մեռնելուց յետոյ, բանակը ընդունուեցաւ, ուր տեղ իր քաջութեամբն անուն հանելով բարձր աստիճաններու հասաւ :

Այս միջոցումը, Կիլիկիոյ վրայ յարձակեցաւ մի էմիր, ուրուն անունն էր Ահմետ-Մալէք կամ Մէլէկ, որ Յունաց ձեռնից առաւ Վահկիայ, կապան և մի քանի տեղեր : Այս կէպքը մի նոր պատերազմ յառաջ բերաւ և Յովհաննէս կամնենոսը Ճանապարհ ընկաւ գետի Կիլիկիա, մի և նոյն միջոցին Թորոսն էլ Կիլիկիա եկաւ<sup>3</sup>. կայսրն այս արշաւնըին մէջ մեռաւ, Թորոս զնաց և իր ազգիցը մի քահանայ դտաւ և նրան իւրան ով լինելը խոստովանեցաւ : Այս քահանան իր ազգակիցներուն իմաց արաւ բանը, որոնք նեղացած լինելով Յոյներից մեծ սիրով ընդունեցին Թորոսին : Բազմաթիւ Հայք շուտով շտապեցան ու հաւաքուեցան դրօշակների տակին և Թորոսը նրանց գլուխն անցկենալով, յարձակմամբ Վահկիայ, Միտիս, Ատանա, Անարգարա, Թիլ, Ամութ և Սմանքալ, Առիւծ և ուրիշ քաղաքներն առաւ : Այս քաղաքներից Յոյները զուրս քշուեցան և ոմանք էլ ջարդուեցան և Հայաստանի անկախութիւնը նորունց հաստատուեցաւ 1144-ին : Մանուէլ կոմնենոս Թորոսի յառաջանալուն վրայ նեղանալով, շտապեց վերջ տալու Մաճառստանի հետ ունեցած կռուին և իր ամրող բանակովը Ճանապարհ ընկաւ Թորոսին դէմ զնալու և կռուելու : Կայսրը

1 Հներից Կեսարիա, Անարգարոս :

2 Բարդա :

3 Պատմաղիրք, Թորոսի Կիլիկիա դառնալու մանրամասն պատմութեան վրայ համաձայն չեն իրար հետ .

անձամբ զինւորական գործողութիւնները կառավարելով յա-  
ջողեցաւ Ատանա և Տարսոն քաղաքները ձեռք բերելու : Յետ  
զառնալիս իր քեռորդի Անդրոնիկոս զօրապետին յանձնեց պա-  
տերապմբ շարունակել, մինչև որ Թորոսին իր ձեռքը բերէ :  
Կայսրը, Անտիոքի փայտիրող իշխանին ըրնօղը Շատիլիօնին  
էլ հաւանութիւնը ստացաւ իր զօրապետին օդնելու : Թորոս  
Բարձրբերդումը ամբու յարձակմուններից իրան պահ-  
պանեց : Իր յաջողակ ձեռնատրելութիւններովք շտա անգամ  
յաջողեցաւ զարնել Անդրոնիկոսին և նրա բանակը ցրուել :  
Յունաց զօրապետները զերի ընկնելով վաճառուեցան խաղաղու-  
թիւնն էլ հաստատուեցաւ Մանուէլի և Թորոսի մէջ Ռէնօղը  
Շատիրլիօնի միջնորդութեամբը : Նուրէզդին Հալէպի Սուլ-  
թանը մի քանի անգամ զարկել էր խաչակիրներին Ասորիքումը  
և նրանց ձեռից մի քանի տեղեր էր առել : Բաղդատինոս Գ.  
Երուսաղէմոյ թաղաւորը, կամենալով այս Էմիրին լինթացքը  
կանգնեցնել խնդրեց և ձեռք բերաւ Թորոսի գործակցութիւնը :  
Աեստրիան յարձակմամբ առնուեցաւ 1159 թուին քրիստո-  
նայներից և Նուրէզդին յետ մղուեցաւ : Թորոս երբ իր եր-  
կիրներումը դարձ արաւ, իմսցաւ որ Յոյները, իրա բացակա-  
յութեան ժամանակ դաշնաղրութիւնն աւրել էին և Զէնք ձեռք  
առաւ և Նորունց նրանց ձեռից յետ առաւ Տարսոնը, Անար-  
զարան, Մոպուէստիան, Ատանան և Սիսն ուրիշ ծովեղելեայ  
քաղաքներով : Մոնուէլ կատաղելով այս համբաւին վրայ, երկ-  
րորդ անգամ նրա դէմ յու դարձեց Անդրոնիկոսը, երբ Յոյն զօ-  
րապեալ բոլոր իր զօրութեամբը Մոպուէստիան զարնումէր  
Թորոս նրա վրայ մի զօրել յարձակւմ անելով, ջորդ ու վշոր  
արաւ նրա զօրքը և մի կատարեալ յաղթութեան պասակ առա-  
րաւ : Յոյները յաղթուած շտա մարդիկ կորցրին : և իրանց  
զօրացը մնացորդը Անտիոք քաշուեցաւ կոտորածից պլծնելու :

**Անդրոնիկոսի յաղթուիլը Մանուէլի մի մեծ ապաւորու-**

1 Կիննամոս այս պարտոթիւնը Անդրոնիկոսի անհողութեանն է առա-  
լի : Նիկէ Քսոնիաղէս երկու պարտոթեանց վրայ է խօսում, մինն օր  
տեղի ունեցաւ Մոպուէստիոդիոյ զօրաց դէսի դուրս յարձակելիս, միասը  
մի կարդաւոր ճակատամարտումը : Վահրամ Հայ պատմաղիքը, համա-  
ձայն է դավի կիննամոսի հետ Յունաց յաղթուելու պատմութեան մասին :

թիւն արաւ, բայց իր ամբարտառ անութիւնը էլե շկոտորեց: Կալամանս, կայսեր ազգականը զրկուեցաւ Հայաստան Անդրօնիկոսի արած կորսականը հատուցումն առնելու համար, բայց Տարսանինշանաւոր ճակտոտամարտը, որնոր տեղի ունեցաւ երկու բանակներու մէջ սոսկալի եղաւ Յանացհամար և մշտնջենաւոր կերպով հաստատեց Հայոց ախրավետութիւնը այս երկրիա վըրայ: Կայսերական բանակը ամէն կողմից մղուելով, ցիրուց ցան եղաւ և Կալամանս զերի ընկնելով, իր տիրոջը վաճառուեցաւ մեծ գումարով:

Այսպէս, բոլոր Կիլիկիան Թորոսի իշխանութեան տակն ընկնելով, Յոյներն էն տեղաց զուրա եկան: Թորոսի մի փոքր յետոյ Խառուրիայ մէջ արած արշաւանքն էլ բարի վերջ ունեցաւ: Այս գաւառն էլ նու աճուեցաւ և Հայաստանի հետ միաւորուեցաւ: Իկոնիոյ սուլթանները հին դաշնագրութեանց զօրութեամբ, մինչև այս ժամանակ Թորոսի հետ դաշնակից բարեկամէին: Աակայն Մաքսուտ<sup>1</sup> Մանուէլի պարզեներով հրապուրուած, այս դաշնագրութիւնը կարեց և եկաւ Թիլքրերին առաջը, որիոր Անազարրայի մօտն էր բանակը դրաւ: Այս անգամ Թորոս ուրիշ բազդ ունեցաւ: սուլթանի բանակին մէջ մի սոսկալի ժանատիստ ընկաւ, մեծ ջարդ արաւ զօրքերի մէջ: Եակուալ, Սուլթանի որդին, որ մի բանակի զլուին անցկացած ասպատակութիւն էր անում դէս ու դէն, բռնուեցաւ և սպանուեցաւ Թորոսի եղբայր Ստեփանի ձեռքով և իր բանակին էլ ջարդուեցաւ: Խսկ Թորոսն ինքը Սելջուքեանց ահարելի վիճակն առիթ բռնելով, Կոռնիոյ երկրումը մտաւ և տակն ու վրայ արաւ: Յետոյ իր արած աւարն զերիների հետ միասին իրեւ ընծայ Սուլթանին զրկեց: Այս տարօրինակ զործքի հետեանքն այն եղաւ, որ Սուլթանը խաղաղութիւն արաւ Թորոսին հետ ու իր երկիրը քաշուեցաւ: Բայց հետեւ հետն էլե Սուլթանը, անշուշտ վրէժն առնելու մտքով իր որդւոյն մահաւան և զօրքերի կորսուեան, Թորոսի երկիրներումը մտաւ, բայց նորունց յաղթուելով պարտաւոր եղաւ խաղաղութիւն անելու:

Թորոսի եղբայր Ստեփանի սպանումը, որ Մարտի կշտին եղած մի փոքր բերդի վերակացու Անդրօնիկոս Եւփերքենոսի և Քսան Միքատառ:

ձեռքով եղած է, առում էին, նորունց ստիպեցուց Թորոսին  
դէնքը ձեռին առնել: Եւփերբենոս յաղթուեցաւ և իր բերդն  
երկիւներով միտոեց, որ Յունոց վերջէն ապատարանն էր,  
Հայաստանի հետ միացաւ: Այսափ յաջողութիւններից քա-  
ջալերուելով Թորոս, մի փոքրիկ նաւատորմիզ ճարեց և Ան-  
տիոքի իշխանին հետ մարանութեամբ կնացին Կիալրոս կղղին  
ասպատակելու, և յիրաւի կրկուսն էլ բարբարոս և անգութ-  
գործքեր արին այն աեղ:

Մանուէլ Կոմինենոս, էլ յոյս չունենալով նուածել Թորոս  
սին ոչ իր զօրապեաներու ձեռքով և ոչ էլ իր գաղտնի նեն-  
գութիւններով, որոշեց որ ինքը դնոյ Կիլիկիա, որպէս զի ան-  
ձամբ Թորոսի առաջն առնել: Բայց Թորոսն իմանալով կայսեր  
գիտաւորութիւնը իրա խորհրդատու Թովմաս և Գրիգոր զօ-  
րապեաներու հետ միասին հարկ եղած զդուշութիւններն ա-  
ռաւ իր անձեական պահպանութեան համար: Մանուէլ շուտով  
քշելով իր ընթացքը վրայ հասաւ և տէր եղաւ Վամս, Ախող-  
բամսն, Անաղարբա, Լոհե ինիատօն, Թիլ, Տարսոն քաղաքներուն  
Բայց երուսաղէմայ թաղաւորին միջնորդութեամբ խաղաղու-  
թիւն արաւ Թորոսին հետ և Թորոս այս պատճառով նրան յետ  
դարձուց Կիլիկիոյ մի քանի քաղաքները: Այս խաղաղութիւնն  
եղաւ 1159 թուին: Թորոս էս ժամանակից սկսած Կիլիկիոյ  
մի մեծ մասին հանդարտութեամբ տէր լինելով Անբաստիոսի  
տիաղոսը կրեց իր վրայ և իր կեանքին մնացած ժամանակը  
իր երկիրներուն կարդաւորութեան և երջանկութեան հա-  
մար անցկացրուց:

Թորոս 1168 թուին վախճանեցաւ 24 տարի տէրութիւն  
անելուց յետոյ ժառանգ թողուց իր Ռուբեն որդին, որ զեռ  
մանուկ էր Թովմասին ինամակալութեան տակ, որուն մի տա-  
րուց յետոյ Թորոսի եղբայրը Սլեհ դուրս արաւ: Իսկ Ռու-  
բենն աղատուեցաւ Հռոմելոյ կաթուղիկոսաց բնակութեան  
տեղը վոխաղրուելով և ուր տեղ էլ մեռաւ: Իսկ անօրէն Մը-  
լէհը իր 1169-ից մինչև 1174 թիւ արած տիրապետութիւնը  
պղծեց իր անդթութիւններով: Միքայէլ Բրանաս դքսին, և  
Եւփերբենոս ու Կալաման Յունաց զօրապետներուն յաղթեց.  
Մանուէլ Կոմինենոս տեսնելով իր բանակին յաղթուիլը, Մլե-

Հին հետ մի խաղաղութիւն արաւ, որնոր շատ շահաւետ եղաւ Հայաստանին համար : Խոկ ինքը Մլեհն իր հպատակներուն առելի լինելով իր անդժութիւններովը իր զօրքերից սպանուեցաւ 1174 թուին Սիսումը :

Մլեհի մեռնելուց յետոյ, իր եղբօրորդին և Թորոսի եղբայր Վտեփանոսի որդին Ռուբեն Բ-ը գահը բարձրացաւ և իր բարի բնութեամբը իր ժողովրդեան սէրը գրաւեց, Բոհեմոնդ Գ. Անտիոքի իշխանն էլ չկարող ըլելով Տարսոնը պահպաննել Ռուբենին յանձնեց նրա հետ դաշնակից ըլելով, բայց Լամբրոնի իշխան Հեթումի թելադրութեամբը, որ այս միջոցին պաշարուած էր Ռուբենից, Բոհեմոնդը բարեկամորէն տեսութիւն անելու հրաւիրեց Ռուբենին և ընդդէմ մարդկութեան իրաւանցը բռնեց նրան և բանտարգել տուաւ : Բոհեմոնդ մի փոքր ժամանակ Կիլիկիան էլ ձեռք բերելու երաղեց, բայց Ռուբենի եղբօր Նեսնի քաջութիւնները բոլոր այս դիտմաւնքները ցըեցին և ստիպեցրին իրան իր բանտարկածն էլ թողելու<sup>1</sup> : Խոկ Հեթում Ռուբենի տանջանքներին առաջին պատճառը, հպատակեցաւ և ներողութիւն դտաւ : Ռուբեն Երբ իր ժողովրդեան գլուխն անցկացաւ իրիւ հայր կոռավարեց : Մի քանի քաղաքներ և վանքեր շինել տուաւ և իր հպատակներուն վիճակը լաւացրեց, և ձանձրանալով աշխարհային դործքերից, իր եղբօրը Նեսնին յանձնեց կառավարութիւնը. և ինքը զնաց մի վանքումը քաշուեցաւ և ուր տեղ 1177-ին մեռաւ :

Առան Բ.-ի տերութիւնը Երկար և յաջող տեսեց (34 տարի) և յաւիտեան յիշատակելի մնաց Հայաստանի պատմութեան մէջ, քաջ և յաջողակ դօրապետ լինելով և սաստիկ վարքով ու բարքով քրիստոնեայ և փառք սիրող թագաւոր իր երկիրներին ընդարձակեց. իր թշնամիներին յաղթեց, հիւրանոցներ, հիւանդանոցներ և որբանոցներ ու ուսումնարաններ շինել

1 Ամբատ ասում է, որ Ռուբեն ինքն էր զնացել Անտիոք բնակիչների բարուց ապականութենից հրապուրուած եւ որու իշխանի ձեռքով բռնուելով բանդ էր դրուել, եւ իր աղատութիւնը Սարւանտիկար, Թիւ, Ճեքէր ամուր անզուանքները 1000 զահեկան էլ ումի տալով զըտել էր :

տուաւ, ճանապարհներ բաց անել տուաւ, Երկրադործութիւնը վաճառականութիւնը և նաւարկութիւնը յառաջաշրջոց և իր գահը նորանոր իմաստուն բարեկարդութիւններով փառաւուրեց և իր անունն էլ Եւրոպիոյ արքունեաց Հետ յարաբերութիւններ անելով հռչակեց :

Որուսդէմ, Թիւլը մէններու Էմիրը, խաղաղութեան ժամանակ յանկարծ յարձակելէր Հայոց երկիրներուն վրայ և յաղթելով դէղի յառաջ էր եկել մինչեւ Սիս քայլ Լեռն դէմն ելու զարկաւ նրան ցրուեց նրա բանակը և Էմիրն էլ իր մահը զտաւ կոտին մէջ : Մի փոքր յետոյ Բերիոյ և Գամասկոսի Սուլթանները իրանց զօրքերը հաւաքած եկան Լեռնի երկիրներու մէջ ասպատակ սփռեցին, բայց երկու քն էլ մեծ կոտորածով ետ մլուեցան : Այն ժամանակ Լեռն իր տէրութեան սահմաններու վրայ բաղմաթիւ ամուր բերդեր շինել տուաւ և նրանց մէջ մշտնաւոր զօրքով լքցրուց նորունց խսաւրիան տատ որ իր նախորդներու ժամանակ Խոնիոյ Սուլթաններու իշխանութեան տակն էր լնկել առ ժամանակ : Երբ Հայատան այլիս իմաստուն ձեռքով կառավարուելով խաղաղութեան բարիքներ էր վայելում : Ասորիքն ու Պաղեստինն ներքին երկարուակութիւններով պառակուած մի աղեղողուրմ տեսարան էր դառել : Երուսաղէմ սուրբ քաղաքը քրիստոնէից ձեռքից առաւ 1187 թուին հռչակաւոր Սալահ-Էտուին <sup>1</sup> : Սա Հայատան էր ծնել : Փռեղերիկոս Բ. Երուսաղէմայ օդնութիւն հասնելիս Խոնիան Վլըճ-Արսլանի ձեռից առնելուց յետոյ Լեռնի երկրին մէջ մտաւ և խնդրեց նրամենուոր իրան օդնական լինի իր ձեռնարկութեան մէջ, նրան վոխարէն թագաւորական թագ խոստանալով : Լեռն անմիջապէս գոեղերիկոսին անրաւ պաշարեղէն զրկեց, որոնցից խոչակիրք շատ պէտք ունէին և ինքն էլ պատրաստուումէր նրան դիմաւորելու համար զնալ երբ լսեց : որ կայսրը դժբաղդութեամբ խեղդուելէր Կալիկատնոս զետումը <sup>2</sup> : Նրա որդին Փռեղերի-

1 Նասէր-Սալահ-Էղ-Ղին հարաւային Հայատանումն է ծնել.

2 Այսօր Կէօք-Սու է ասուում, որ թափուում է Միջերկրական ծովուն մէջ, Սելևկիոյ առաջին, կամ թէնորիրու Սելեյքէ աստած քաղաքին առջեւ :

կոս Սուաբիոյ զքսին Լեռն մեծ փառաւորութեամբ ընդունելութիւն արաւ : Հենրիկոս Պ. Գերմանիոյ կայսերական գահին վրայ բարձրանալիս, իր հօրը խոստմունքը կատարեց և Լեռն Բ. Տարառնումը թագաւոր օծուեցաւ : Յունուար 6-ին 1198 թուին, Գրիգոր Զ. կաթուղիկոսի ձեռքով : Ալեքս-Անդեղոսը ցանկանալով Լեռնի բարեկամութեանը և Գերմանիոյ կայսեր օրինակին հետեւելով՝ նրան մի թագաւորական թագը ըրկեց :

**Այս գէպից յետոյ,** մի երկար թղթակցութիւն եղաւ, մին կողմանէ, պապերու և նրանց Երուսաղէմումունեցած տեղակալներու և միւս կողմանէ, Հայաստանի կաթուղիկոսներու և թագաւորներու մէջ, այս թղթակցութեան նպատակն էր հռովմէական և Հայկական եկեղեցին իրար հետ միաւորուել. բոյց այս ջանքերն ի դերև ելան և յետոյ շատ վնասակար եղան Հայաստանին. ինչպէս որ պիտի տեսնենք չորեքտասահներորդ դարու վիրջերումը : Երեւումէ, որ այս բանախօսութեանց մէջ, փառասիրութիւնը մի աւելի մեծ պաշտօն էր կատարում քան թէ բուն կրօնի շահը : Հոռմ մի բացարձակ տիրապետութիւն ունենալ էր կամենում. Հայաստան էլ բնականաբար իր անկախութիւնը պաշտպանելու էր հետամուտ :

**Անգղիոյ թագաւոր,** Ռիգարտոս Ա. գէպի Արևելք Հասնելու ժամանակ, Լեռն գնաց նրան դիմաւորելու և Գերմանիոյ կայսեր արած փառաւոր ընդունելութեան նման, նրան էլ արաւ : Լեռն մի արտօնութեամբ, որնոր տուել էր 1201-ին Գենովացոց, իր վաճառականութիւնն ընդարձակեց Եւրոպիումը<sup>1</sup>, Կիոլրոսի թագաւորին քոյրն իրան կին արաւ և 1219-ին իր աղջիկն էլ Մաճառստանի Անդրէաս թագաւորին, Անդրէասորդւոյն տուաւ<sup>2</sup>. այս ազգակցական խնամութիւններով իր աղջն արեւմտեան քրիստոնեայներուն մօտեցրուց :

Երկու մեծ կռիւ, որ ծագել էին Հայաստանի թագաւոր Լեռն Բ-ի և Անտիոքի իշխանին մէջ ։ Երկար ժամանակ այս երկու եր-

1 Դրամաղիտ, Հայաստանի, միջին դարումը, Պ. Ալիկտոր Լանգլուայի. երես 49 :

2 Յիշատակարանների ժողովածոյ Հայաստանի պատմութեան համար Մոսկուա 1838. հատ Բ. եր. 48 :

կիրներու խաղաղութիւնը վըդովեցին : Բոհեմունդ, այս երկու տէրութեանց սահմանները նշանակելուց յառաջ եկած վէճը վերջացնելու համար, Լեռնին առաջարկեց մի բանակցութիւն անել : Վեռն վախենալով մի նոր որոգալթից, ինչպէս որ Անտիոքի իշխանը լարել էր իր նախորդներից մէկին, իր կարիք հեծելազօրաց մի վաշտով նրա մօտ դնաց : Այս զդուշութեամբ, ոչ թէ միայն պրծաւ այն որոգայթից, որ Բոհեմունդ իրոք լարած էր ունեցել այլ բռնեց նրան և Հայաստան քերաւ : Շամբանեայի դուքս Հենրիկոսը, որ այս ժամանակ էւրուսալէմի խնամապետն էր, միջնորդութիւն արաւ և այս վէճը հանդարտայրեց յօդուտ Վեռնի և Բոհեմունդ իր ազատութիւնը ձեռք բերաւ : Այս երկու արքունեաց մէջ բարեկամութիւնն ամրացնելու համար, Բայմոնդ Գ. Բոհեմունդի անդրանիկ որդին, Վեռնի եղբայր, Ռուբենի Ալիզա աղջկան հետ ամուսնացաւ :

Անտիոքի իշխանութեանը յաջորդութեան առթով մի երկրորդ վէճ բացաւեցաւ, որնոր շատ աւելի երկարատև, սաստիկ և արիւնալի եղաւ : Բայմոնդ Գ. մեռնելիս 1199-ին մի որդի թողուց Ռուբեն անունու որնոր Ալիզայիցն էր ունեցել և Բոհեմունդ իրու պապը, իրան ժառանգ էր արել և այս ժառանգին Անտիոքացիք երդումէին կերել հաւատարիմ մնալու Բոհեմունդի մեռնելուց հետոյ, Բայմոնդ Գ. Միականի մականուանեալը, իրա երկրորդ որդին Տրիպոլոյ կոմուր, Տաճարականաց և Ասպինջականաց հետ միաբանելով Անդիոքին տիւրեցի վնաս Ռուբենի որ էր օրինաւոր ժառանգ և իր սանն ու երբօրորդին : Բայմոնդ բանն աւելի հեռուն քշեց, իր պահանջմունքներն Անդիոքի վրայ պոշտապանելու համար սպառազուրաց բաց արաւ Վեռնի զէմ : Վեռն շատ անդամ Բայմոնդին զարկաւ, յաղթեց և Անտիոքի վրայ դիմեց և արաւ այն 1203 Նոյեմբերի 11-ին և այն տեղ իր եղբօրորդին Ռուբենը գահին վրայ նստեցուց : Բայց երբ ինքը իր երկիրները դարձաւ, Բայմոնդն Անտիոքն ետ առաւ և Ռուբենին նոյն տեղաց դուրս արաւ : Վերջապէս Բայմոնդ Վեռնին անկարող անելու համար՝ որ Ռուբենի իրաւունքները չպաշտպանէ, միշտ Տաճարականաց հետ միաբան, ուկւոյ զօրութեամբ Ռուգնատին,

Իկոնիոյ Սուլթանին որսաց և կարող եղաւ նրան, պատերազմ  
բաց անել տալ ընդդէմ Լեռնի : Բայց շարն իր ծայրն հասցնեւ  
լու համար Շատչոկի լիներու եկեղեցականները, որոնք ոչ կոր-  
դաւորութիւն և ոչ բարեպաշտութիւն ունեին<sup>1</sup> » վեճին մէջ  
խռոնուելով ևս առաւել խառնափնթոր արին, հռովմէական  
քահանայապետին տեղեկալնորից մի քանիսը, նենդաւոր յա-  
փլշտակողէն որսած լինելով, Լեռնին և նրա թագաւորու-  
թեան վրայ նղովք կարդացին, որոնց վրայ ոչ մի իրարունք և  
ոչ մի իրաւասութիւն ունեին : Հայոց եկեղեցականները հա-  
մազուած լինելով թագաւորին պաշտպանած բանին արդա-  
րութեան և պասլի տեղակալներու այսպիսի նիւթերու մա-  
սին դատաւոր լինելուն իրաւունք չունենալուն վրայ, զայրաց-  
մամբ նղովքը մերժեցին : Լեռն իր եկեղեցականներից և ժո-  
ղովրդից պաշտպանուած զէնքը ձեռին առաւ : Նախ Ի-  
կոնիոյ Սուլթանին յետ մղեց քաջութեամբ. յետոյ գնաց երկ-  
րորդ անգամ էլի պաշտիռ Անտիոքն, որնոր 1211-ին առաւ  
Եւ Ռուբենին բոլորովին իր տեղը հաստատեց, որուն հայրապետն  
և երկրին իշխանները հպատակեցան : Լեռն երբ իր երկիրը դար-  
ձաւ այն տեղաց մշտնջենաւոր կերպով Տաճարականներին դուրս  
արաւ նրանց սեպհականութիւնները զրաւելով, որոց մէջն էր  
և գասդոն բերդը : Սիսն էլ մեծացրուց և զարդարեց և իրա  
համար մայրաքաղաք արաւ, սահմաններուն վրայ շտա քա-  
ղաքներ ամրացուց, որոնցից մինն էլ էր Կորիքոս ծովեղերայ  
քաղաքը :

Բերիոյ Սուլթան, Ղոյասէտտին Ղազնի, 1212-ին Լեռնի  
հետ թշնամացաւ, հաւանական է որ Ռայմանդ Դ-ի թելա-  
զրութեամբ : Սա խաղաղութեան մէջ և տռանց մի պատճառի  
սկսաւ ասպատակել Հայտառանը. երբ սահմաններին վրայ հասաւ  
Ղայասէտտին դեսպան ուղարկեց Լեռնին, որ կամ գոյ պատե-  
րազմի իրա հետ, կամ թէ ոչ իրան հպատակի : Լեռն յառա-  
ջուց այս բանս իմանալով. հրամայեց իրա մարդկանց, որ մի քա-  
նի օր եկող գեսպաններուն դէս ու դէն ման ածելով ժամանակ  
կորցնեն : Խակ ինքը Լեռն, իր ընտիր բանակին դլու խն անցկացած

1 Պատմաւթիւն քրիստոնէութեան, Յլէօրի Արքայի, հատ . ՚ ։  
Կրես 370 .

Ճանապարհ ընկաւ և մի արագ ընթացքով գնաց յարձակելու  
թշնամոյն վրայ որ իրա համար հանդիստ մնումէր զես-  
պաններուն դարձին : Թշնամին շուարելով այս յանկարծահա-  
յարձակումից չկարող եղաւ դէմ դնելու փախաւ, թողելով  
իր ամբողջ բանակը յաղթողի ձեռին : Բայց Լեռն սոյն այս  
յաջողութիւնը չունեցաւ իկոնիոյ Սուլթան Ազգէտուին Գայ-  
գառուսին հետ ունեցած պատերազմումը, որ մի և նոյն տարին  
եղաւ : Սուլթանը եկել և Կարան բերդը պաշարելէր . Լեռն  
անկողին ըլելով և անձամբ կարող չըլելով իր բանակը կառա-  
վարել, կոսդանդինին էր յանձնել հրամանատարութիւնը, որ  
իրա սպարապետն էր և Ատանին որ էր պայլ կամ խնամապետ,  
և հրաման էլ էր տուել, որ պաշապանողական դիրք առնեն  
և ոչ յարձակողական : Ազգէտախին կարող չըլելով բերդին տի-  
րել և վախենալով էլ որ չկարողանայ յետ քաշուիլ, պաշարումը  
վերցրուց և դէպի յետ դառնալ ձեւացրուց : Այս խորամանկ  
շարժումով Ազգէտուին Հայոց բանակը բաց գաշտում քա-  
շեց և կատաղութեամբ վրայ հասնելով մեծ կոտորած ա-  
րաւ : Դժբաղդութիւնն իր լըման հասնելու համար, այս գործ-  
ծողութեան ժամանակ մի սաստիկ վէճ բացուեցաւ երկու Հայ  
հրամանատարներու մէջ . Ատան իր զօրքերովը քաշուեցաւ ա-  
ռանց մասնակից լինելու ճակատամարտին, կոստանդին և միւս  
իշխանները գերի բռնուեցան և իկոնիա տարուեցան : Լը-  
սելով Լեռն այս չար պատահմունքը, թէ և կատարելապէս  
չէր առողջացել, զէնք ձեռին առաւ, թողուց թշնամին կա-  
պան բերդին առջելը, որ եկել էր և նորունց պաշարելու վրայ  
էր, դնաց արշաւեց նրա երկիրները : Շատ դիւզեր և քաղաք-  
ներ աւարի առնուեցան և այրուեցան և հազարաւոր բնաւ-  
կիչներ կամ կոտորուեցան կամ գերի տարուեցան : Ազգէտուին  
Գայգառուղ իր յաղթութեանց հանդէսն էր կատարելիս, երբ  
լսեց այս անցքերը, շտապեց գնաց պաշտպանելու իր երկիրը :  
Բայց երկու թաղաւորներն առանց նորունց պատերազմբանալու  
խաղտղութիւն արին և իրանց գերիները իրարու յետ տուին :  
Նրեռումէ, որ այս խաղաղութիւնն անելուց յետոյ է, որ Լեռն  
Ա. «Թաղաւոր ամենայն Հայոց» տիտղոսն առաւ, այս տիտղոս  
իր դրամներուն վրայ պահուեցաւ, թէև անօրինակ յանդըղ-

նութիւն է, վասն զի կեռն միայն փոքր Հայաստանին թաւ-  
գաւորն էր : Լեռն 1219-ին վախճանեցաւ Յհ տարի թաղաւ-  
ռորելուց յետոյ, բոլոր ազգն իրա վրայ ցաւեցաւ, Լեռն այն  
հաղուադիւտ թաղաւորներից մինն էր, որոնց մէջ քրիստո-  
նէական և զինւորական առաքինութիւնները, բարեկարգու-  
թեանց հոգին և գիտութեանց սէրը և իրանց ազգին եր-  
ջանկութեան ցանկութիւնը միատեղ կդանուին : Խստարարոյ  
քրիստոնեայ լինելով, խստամբերութեան օրինակ տուաւ Հա-  
յաստանեայց եկեղեցւոյն մեծին անդամ : Եւ իրրե վերանորոգիչ  
նոր կարգեր ու օրէնքներ հաստաեց և իր հպատակնեւ-  
րուն վիճակը աղնուացրուց : Գիտութեանց բարեկամլինելով,  
զպրոցներ և թանգարաններ հիմնեց : Մի շատ գիտնական մար-  
դիկ, որոնք աշխարհիս ամէն կողմերից բերել տուաւ, առանց  
զանազանելու նրանց կրօնն ու ազգը, աշխատեցնում էր իր  
ազգը լուսաւորելու . իր պալատը Ֆրանսիացի, Անդլիացի, Գեր-  
մանացի և Խտալացի զօրապետներու իջևանն էր եղել. որոնք  
իրա վեհանձնութիւնն էր բերում և որոնք ծառայումէին  
հայկական զրօշակին տակ. ինչպէս որ Սմբատ նրանց անուան  
ցուցակը երկարօրէն մեզ աւանդումէ : Թէ որ Հայաստան Լեռն  
ք.ի նման մէկ կամ երկու թաղաւոր ունենար, անշաւշտ մի-  
ջին դարու ամէնից զօրաւոր և ամէնից քաղաքակրթուած  
միապետութիւնը կլինէր . բայց բաղդն ուրիշ կերպ էր որո-  
շել Լեռն մեռաւ առանց իրա արժանաւոր ժառանգ թողե-  
լու և իր մեծ մեծ բարեկարգութիւններն անօղուտ մնացին:  
Նրա ժամանակումը Հայաստան իր երկրային ամենամեծ ըն-  
դարձակութիւնը ստացել էր : Թէև կարելի չի ընում որոշել  
ճիշդ կերպով Հայաստանի նոյն ժամանակուայ սահմանները.  
սակայն կարելի է ասել, ստոյդ հաւանականութեամբ, որ ա-  
րեւելեան կողմէն Նվիրատին էր զպչում, հիւսիսային կողմէն  
Սամանթա զետին և Արկէոլ լճին, արևմտեան կողմէն Գաւ-  
լիքատնոս զետին և Միջերկրական ծովուն, որ այն կողմերում  
կոչումէր «Հայաստանի ծով» հարաւային կողմէն Սուլթան  
Սու և Կէօկ-Սու գետերին : Հռոմելայ, Այնտապ և Խսոս  
քաղաքները այս կողմի սահմաններուն վրայ էին ընկնում:

Լեռն մեռնելիս, իրա ժառանգ նշանակեց. Զապէլ կամ

Կղապէլ իր միակ աղջկանը, Կոնսդանդինի խնամապետութեան տակ, որ իր սպարապետն էր և Ատան պայլի : Ռուբեն Ռայմանդ, Վեռնի մահը լսելով, փորձ փորձեց իրան թագաւոր Շահաչեցնելու, բայց Կոնսդանդին Տարսոնի մէջ զարկաւ նրան և բռնեց բանդ դրաւ և ուր տեղ մեռաւ 1221-ին : Այն ժամանակ Չապէլ թագուհի Հռչակուեցաւ, և Միականի Բոհեմունդին Փիլիպպոս որդւոյն հետ ամուսնացաւ, այն պայմանով. որ Նա Հայոց կրօնը դաւանի և ըստ սովորութեան Հայոց ապրի և վարուի և ոչինչ կերպով երկրին օրէնքներին չդպչի :

Այս թագուհւոյն ժամանակ, Հայաստանը իսաւրիան կիսով չափ կորցրուց, որնոր Ալաշտոին Իկոնիոյ Սուլթանն առաւ, սակայն Սելեվկիան պահպանեց, որ իր զլխաւոր տեղն էր, Նոյնպէս և մի քանի ուրիշ նահանգներ : Չորս տարուց յետոյ իմացուեցաւ, որ Փիլիպպոս արքունի թագն և տերութեան անդամանդները դողացեւ և վերուցելու իր հօրն է զրկել Անտիոք, ուստի դահից ընկաւ և բանդ դրուեցաւ : Բոհեմունդ չկամեցաւ գողցուած բաները յետ տալ և իր որդին ամենից առուելով 1225-ին բանտին մէջ մեռաւ : Այն ժամանակ Կոնսդանդին կամեցաւ, կաթուղիկոսի և ուրիշ իշխաններու հաւանութիւնը ստանալով, ամուսնացնել Կղապէլն իր Հեթում որդւոյն հետ : Բայց Կղապէլ դադանի վերկացաւ Սելեվկիա գնաց իր մայրենի աղքականացը մօտ : Կոնսդանդինի հրաւերքները Կղապէլին մայրաքաղաք բերելու անօղուտ եղան, սյնպէս որ ինքը զնաց և զինու զօրութեամբ հրաւիրեց : Նա էլ այն ժամանակ վեր կացաւ ու եկաւ մայրաքաղաք<sup>1</sup> և Հեթումին հետ ամուսնացաւ, որ 1226-ին թագաւոր Հայաստանի հռչակուեցաւ :

Հեթում Ա. 44 տարի Հայաստանի թագը գլուխը կրեց 1226-ից մինչև 1270 : Ալաշտոին Վեռն Բ.-ի մահից և Փիլիպպոսի անկարողութենից առիթ գտնելով, Հայաստանից Խսաւրիոյ մի մասն, որ իր երկիներուն սահմանակից էր, Խլել էր և նրա վրայ մի տեսակ իշխանութիւն էր վարում : Բայց սրանից, ստիպել էր երկրին, որ իրա համար տարուայ մէջ 400

1 Ամբատ ժամանակակից պատմագիրը, ասում է, որ Կղապէլ Հեթումին հետ ամուսնանալուց յիսոյ քաշուեցաւ Սելեվկիա :

Նիզակակիր մարդ մատակարարէ : Խաչտկիր իշխաններն, որոնք  
այն ժամանակ Եղեսիում, Անտիոքում, Տրիպոլսում հաստատ-  
ուելէին, ինչպէս և Երուսաղէմի ժագաւորը, մի մասամբ կոր-  
ծանուելէին և մի մասամբ էլ հարկատուէին դառել Մահ-  
մետական տէրութեանց : Բոլոր այս քրիստոնեայ տէրութեանց  
մէջ, Հայաստանը միայն ոտքի վրայ էր կանդնած և թշնամի-  
ներից էլ շրջապատուած :

Յայտնի է, որ Հեթում պարտաւորուել է կախում ունե-  
նալ, դէթ մի քանի տարուայ համար, Ալակտոնինից, ինչպէս,  
որ իր դրամները ցոյց են տալի : Երբ փոքր Հայաստանը Հե-  
թումի ժամանակ խաղաղութիւն և երջանկութիւն էր վա-  
յելում մի փոքր, մեծն Հայաստան տակնուվրայ ըլելով Թաթար-  
ներից, արիւն էր թափում : Հայաստանի շատ բնակիչներ այս  
ժամանակներում այս նոր ասպատակների երկաթից և բռնու-  
թենից փախչելով եկան Կիլիկիումը հաստատուեցան և Հե-  
թում մարդասիրութեամբ նրանց ընդունեց : Թաթարները  
բոլոր վերին Առիան նուաճելուց յետոյ, եկան Իկնիոյ Սուլ-  
թանին հետ էլ կռուեցան : Սուլթանը իր ընտանիքը գալու-  
մասներից ապահովացնելու համար Հայաստան դրկեց, ուր  
տեղ իրա աստիճանին վայել յարդանքով ընդունուեցաւ : Բա-  
չու Թաթարներու մեծը յաղթեց Գայասէտոնին Քէյ-Խիւսրէվ  
Սուլթանին և նրա երկրի կիսից աւելին առաւ Ասորիքումը .  
Միջազետումը և կապագովիիումը և այսպէս հարեան դա-  
ռաւ Հայաստանի թաղաւորութեան : Հեթում ուրախ եղաւ  
Իկնիոյ Սէլջուղեանց ընկնելուն վրայ : Բաչուին առաջարկեց մի  
պաշտպանողական և յարձակողական դաշնակցութիւն անեւ-  
լու ընդդէմ Սարակինոսաց : Բաչու ընդունեց այս, բայց այն  
պայմանով, որ Սուլթանին ընտանիքն իրան կյանձնէ : Հեթում  
իր երկիրը պատերազմի չարիքներից պահպանելու համար, ա-  
կամայից հաւանեցաւ Սուլթանին ընտանիքը նրա յանձնելու  
և դաշնադրութիւնն էլ եղաւ :

Կմնադանդին, Լամպրոնի իշխանը Իկնիոյ Սուլթանից  
թելաղրուած ապստամբեցաւ Հեթումի դէմ և նրա դաւառ-  
ները յափշտակեց, ապստամբը զսպելու համար, թագաւորը  
Տարսոնի բերղերը նորողել առւաւ 1228 թուին. ինչպէս որ

այս քաղաքիս արձանագրութիւնները ցոյց են տալիս. որնոր զիս  
նարան շինեց : Արքունի զօքերից նեղն լնկնելով կոսղանդին  
իկոնիա փախառութը տեղ մի փոքր յետոյ հետը մի բանակ և  
գայասէտտին Քէյ-Խուսրենին արած : որու միտքը որչափ որ  
ապստամբին օդնելի էր, այն չափ էլ Հեթումից վրէժ առնել էր  
կամենում : բայց Հեթումին զէնքն ու զօքքը այս երկու թշշ-  
նամիններին էլ յաղթեց : Սուլթանն այս պատերազմին մեջ իր  
բանակին ընտիր մասին հետ մեռաւ 1237-ին, կոնսդանդին  
եօթն անդամ զարնուելուց յետոյ, հնազանդեցաւ և ներու-  
ղութիւն դտաւ : Հեթում Վեռն Բ-ի քաղաքականութեան  
համեմատ շարունակ յարաբերութիւններ ունեցաւ Եւրոպիոյ  
արքունեաց հետ : Խմանալով Ֆրանսիոյ թաղաւոր Լուգովիկոս  
Փ-ին Կիպրոս կղզին հասնելի իր իղբօրորդւոյն մօտ<sup>1</sup>, շտաղեց  
ու դեսպաններ ղրկեց գալուստը շնորհաւորելու և նրան իր  
գործակցութիւնն առաջարկեց Սարակինոսներու դէմ անելու  
պատերազմին :

Թաթարներու տէրութեան օրէցօր մեծանալը Հեթումին  
միտքը ձգեց : որ այս աղքին հետ մի մշտնջենաւոր դաշնակ-  
ցութիւն անէ : Նոխ իր Սմբատ եղբայրը յուղարկեց մեծ խա-  
նին մօտ իր յարգանքը մատուցանելու նրան շատ մեծ ըն-  
ծաներ ղրկելով : Ասում են, որ այս դեսպանութիւնը հետե-  
ւանք ունեցաւ այս թագաւորին քրիստոնեայ դառնալը :  
Մանգոյ խանին թաթարստանի դահը բարձրանալը Հեթումին  
առիթ եղաւ անձամբ գնալու նրան իր յարգանքը մատու-  
ցանելու և նրա եղբօր հետ եղած դաշնակցութիւնը նորա-  
գելու : Մանգոյ խանը շատ պատւով ընդունեց Հեթումին և  
մի մշտնջենական դաշնակցութիւն արաւ Հայաստանին հետ:  
Մեծ խանը խօսք էր տալի պաշտպանկու Հայաստանն ու իրան  
հին սահմաններուն մըրայ հաստատելու, յետ դարձնել տալով  
Աէլճուքեանց յափշտակած երկիրները : Հեթումին էլ իր կող-  
մանէ խօսք էր տալի մի բանակ զօրք մատակարարելու Ե-  
րուսաղէմը Սարակինոսների ձեռից խլելու համար և թա-  
թարներու թշնամեաց դէմ էլ պատերազմելու : Աղղէտտին, ի-  
ւ Հենրիիոս Կիպրոսի թաղաւորը Հեթումի եղբայր Սմբատին աղջ-  
կան հետ ամուսնացել էր :

կոնիոյ Սուլթանը որուն այս գաշնակցութիւնն ահ և կասկած էր տալի. Հեթումին բացակայութիւնը յարմար ժամանակ համարելով, նրա երկիրները մտաւ և մի քանի տեղբանք առաւ: Հեթում երեք և կես տարի դուրս մնալուց յետոյ իր երկիրները դարձաւ և սկսաւ պատրաստութիւն աեսնել Ազգետախից վրեժ առնելու համար: Մի բաժին թաթար զօրք իրա քամակ ու նենալով, Հեթում իր թշնամոյն երկիրը մտաւ, Սուլթանի բանակը ցրուեցաւ և մի քանի քաղաք, որք ին Էրմենէկ կամ Գերմանիկոպոլիս Կալիկատնոս զետին վրայ, Բէհետնի և բոլոր խաւրիան նորունց Հեթումին ձեռն ընկան: Բէթէնէցիք, ուրոնք այնքան զօրաւոր էին նուածուեցան: Հեթում նմանապէս Սունտաս և Մարտ քաղաքներն էլ տռաւ, երկու տարի յետոյ Հուլաւոն, որ Ասորւոց երկրումն եղած Թաթար զօրքերու հրամանատարն էր Հեթումին իր մօտը կանչեց, նա էլ վերկայաւ գնաց Եգիսխա 40,000 հետևակ և 12,000 ձիաւոր զօրք հետն առած Երուսաղէմն առնելու: Ազեմես և այն ժամանակ նրան մի յորդորական նամակ դրեց այս ձեռնարկութիւնը զլուխ տանելու: Հուլաւոն և Հեթումը նախ Մէլէք-Նազար. Բերխոյ Սուլթանին գէմ գնացին: Այս քաղաքը յարձակմամբ առնուեցաւ և Սուլթանը, մի կատարեալ պարտութիւն կրելուց յետոյ զերի ընկաւ և ընտանիքով Պարսկաստան զրկուեցաւ: Իր երկիրը երկու յաղթաղներու մէջ բաժանուեցաւ: Անտխոք քաղաքը պաշարումից նեղացած ըլելով՝ Հեթումից օգնութիւն խնդրեց, թշնամոյն յետ մղուեցաւ և քրիստոնէից ապահովութիւնը հաստատուեցաւ: Երբ Հուլաւոն և Հեթում պատրաստում էին գնալու և սուրբ քաղաքի քրիստոնեայներն էլ աղատելու 1259-ին, բանակը լուր հասաւ թէ Մանգոյ խանը մհանէ, և թէ Հուլաւոն պէտք է, որ թաթարուտան դառնայ իր բոլոր զօրքովու Հուլաւոն գնալիս Ասորիքի պատերազմին համար միայն 20,000 զօրք թաղուց իր Արագա որդւոյն հրամանատարութեան տակ:

Փետուխար Եգիսխացւոց (Մամլուք) Սուլթանը, Հուլաւոնին այսպէս շատապով քաշուելուց քաջալերու ելով Ասորւոց երկիրը մտաւ. Արագային յաղթեց և շատ քաղաքներու էլ տիրեց. նըմանապէս և 1268-ին արեման քրիստոնեայների ձեռից Ան-

տիոքն էլ առաւ : Սմբկմնթ Աղիպանցի զօրապետը Հեթումի բացակայութենից շահուելով, որ իր զօրքերով Թաթարստան էր գնացել այն տեղի խռովութիւնները զապելու, Հայաստանին վրայ ընկաւ . Վեռն և Թորոս Հեթումի որդիքը շտապով զօրք ժողովեցին իրանց հայրենիքը պաշտպանելու, բայց կռվին խառնուած ժամանակը Թորոս շատ հետերու հարուածքից վերաբորուած փառաւորապէս պատերազմի դաշտին վրայ ընկաւ և Վեռնն էլ զերի բռնուեցաւ : Ոիս, Հայաստանի մայրաքաղաքը Աղիպտացիք տոլին և կրակի տուին : Եկեղեցիները, պալատները, և հրապարակական շենքերը և մինչև անդամ թագաւորներու գերեզմանները պղծուեցան և կործանուեցան և բոլոր դաշտային և ծովեղերեայ քաղաքները մինչև Կորիկոս և ամուր քաղաքներից զատ, ամենքն էլ աւարի առնուեցան : Եղիպտացիք այս սոսկալի պատերազմից յետոյ անբաւ աւար առած և հազարաւոր զերի տարած : որոնց մէջն էր և Վեռն թագաւորի անդրանիկ որդին, քաշուեցան գնացին : Հեթում վերջապէս իմանալով այս թշաւառութիւնները իր երկիրներին օդնելու դիմեց, բայց ինչ օդուտ որ շատ ուշ էր : Թըշնամին արդէն հեռացել էր : Հեթում այս փորձանեքին համբերեց և խոնարհաբար հաշտութիւն արաւ Սուլթանին հետ որ յետ դարձուց Վեռնը միւս զերիներու հետ միասին և նրանց փոխարէն ստացաւ Սանկոլասար իր բարեկամը և բերիա քաղղաքը . Խաղաղութիւնը կամ թէ զինադարարումն այսպէս հաստատուեցաւ Հայաստանի և Աղիպտոսի միջ :

Մի տարի յետոյ, Հեթում հասակն առած լինելով և այս աշխարհից էլ զզուած . Վեռնին յանձնեց իր թագաւորութեան բեռը ու ինքը գնաց մի վանք քաշուեցաւ կրօնաւոր եղաւ Մակար անունով : Իր մահն այնքան խորին արտմութիւն պատճառեց Վեռնին, որ շատ վտանգաւոր կերպով հիւանդացաւ, Հայաստանի գաւառներից պատղամաւորներ : Ասորւոց երկրի թաթար զօրքերու սպարապետից և Աղիպտոսի Սուլթանից եկան այցելութիւն արին վեհափառ հիւանդին : Վեռն երեք ամսուց յետոյ առ ողջանալով կառավարութեան սանձը ձեռ ին առաւ և 1271 թուին թագաւոր օծուեցաւ Տարսոնումը Վեռն գ, անունով : Իրա թագաւորութիւնը 19 տարի տեղ ։ Ամենա-

զեղեցիկ առաքինութիւններ ուսման սէր. ողորմածութիւն պարեպաշտութիւն և իր հպատակներու բարեկեցութեան համար ունեցած խնամքն ու հոգոր նրա միջումը փայլումէին: Հատ հիւանդանոցներ և ուսումնարաններ շինեց իր ազգը լուսաւորելու համար, հազարաւոր քաջ ձեռք ունեցողներ վարձուեցան տէրութեան ծախքով հազուադիւտ ձեռադիրները օրինակելու, ինչպէս պատմական, մաթէմաթիքական, իմաստասիրական, աստղաբաշխական և վարդապետական: Աւոն զլիսաւորապէս սուրբ Գիրքը օրինակել տուաւ հասարակաց կրթութիւնը հեշտացնելու համար: Այս ժամանակից է սկսում Հայոց անհամար ձեռադիրները, որոնք այսօր էջմիածնի, Վենետիկու սուրբ Ղազարու, Փարիզու և Լոնդոնի և այլ գրքատները զարդարումն, որոնց մեծ մասը նրա թագաւորութեան թուականն են կրում իրանց վրայ:

Աւոն իր գահը բարձրանալու օրը՝ տէրութեան դէմ յանցաւոր եղողներուն ընդհանուր թողութիւն տալով՝ նշանաւոր արաւ: Հետևեալ տարին իրա դէմ պատրաստուած մի գաւակցութիւն գտաւ, որուն անողներն էին իր ազգականներն ու մի քանի պարոններ: Այս դաւաճանութեան զլիսաւորները բռնուեցան, դատապարտուեցան, և ներուեցան. բայց իրանց զղեակները, որոնց մէջ հաւաքուել էին, յարքունիս գրավիցան:

Փնտուխտար, Եգիպտոսի Սուլթանը այս դաւաճանութեան տեղեակ ըլելով, Թուրքմէններու խմբերով իր բանակը զօրացուց, խաղաղութիւնը աւրեց և նորունց մի արշաւանք անել սկսաւ Հայաստանի վրայ: Աւոն իր պարոններից երեսի վրայ թողած և անկարող յարձակողին դէմդնելու, Տորոս լեռներու մէջ քաշուեցաւ: Թշնամին երկիրն առանց պաշտպանողի դանելով, համարձակներս մտաւ, շատ քաղաքներ և դիւղեր, որոնք զուրկ էին բերդերից և ամրոցներից առնուեցան և կործանուեցան: Սիս քաջութեամբ պաշտպանեց իրան և յետ մղեց Մամլուքներին, բայց Տարսոնը, որ այն ժամանակ Հայաստանի մայրաքաղաքն էր, լիբն բնակիչներով և հոյակապ շէնքերով առնուեցաւ և աւարի տուուեցաւ, 20,000 քրիստոնեայից աւելի յարձակողին երկաթին տակ ընկան և 10,000 էլ զերի տարուեցան: Թշնամին քաշուելուց յետոյ, Աւոն լեռ-

ներից իջաւ 1275-ին և տրտում ախուր աղդին մէջ երեւեցաւ, իր գանձերը բայ արաւ և առատ առատ ողորմութիւն բաշխեց, քաղաքներն ու դիւզերը և բոլոր կործանուած տեղերը նորունց շինել տուաւ :

Առունց բաղդի հարուածներն եկան առաքինի թագաւորին դլիսին խիեցին, նախ իր մի տղան յետոյ մի աղջիկը մահն յափշտակեց տարաւ. ժանտախան էլ վրայ հասաւ և հասարակաց ցաւն աւելացրուց և սովն էլ որ միշտ ետելից կգայ. ամէն տեղ սոսկալի աւեր և կոտորած սփռեց: Լեռն այստափ ձախորդութեանց տակ ընկնելով, անսասան մնաց և համբերից խոնարհաբար նախախնամութեան կամքը տանելու :

Մամլուքը, (Եղիպտացւոց Սուլթանը) իր առաջին արշաւանքի յաջողութենից քաջալերուելով մի երկրորդ անգամ էլ անելու փորձ փորձեց 1277-ին: Յայց այս անդամ յաղթուեցաւ և իր յանդգնութիւնը իր կեանքով վճարեց. հաղիւ հաղ Եղիպտական բանակը Հայաստանի սահմանից անց էր կացել որ Լեռն իր ծերունի սպարապետ Սմբատին հետ միասին նրա ճանապարհը ամէն կողմէն կարեց: Եղիպտացիք սարելու կիրճերումը բռնուած. Աղեքսանլրիոյ խորշի մօտերը չարաչար կոտորուեցան: Սուլթանը վաղեց եկաւ. իր բանակին օդնութիւն հասնելու, տեսաւ որ ցիրուցան են եղել, հաւաքեց և պատերազմելու յառաջ քշեց. բայց ինքն էլ ծանր կերպով վիրաւորուելով գամասկոս դնաց, ուր տեղ և շուտով էլ մեռաւ, իր բանակը ցիրու ցան եղաւ և փախաւ: Աբաղա Հուլաւոնի որդին, որ Ասորւոց երկիրն էր կառավարում մարդ զրկեց Լեռնին իր յաղթանակը շնորհաւորելու և մի և նոյն ժամանակ Մեջաղետքի և նրա չորս կողմն եղած երկիրներուն իշխանութիւնն էլ նրան յանձնեց. բայց Լեռն մերժեց, այն գժուարութեանց համար, որ կարող էր ունենալ մի այնպիսի ընդարձակ երկիր կառավարելու մը, այնչափ թշնամեաց մէջ:

Լեռն Մամլուքներին յաղթելուց յետոյ, իր զէնքը ընդդէմ իկոնիոյ Սուլթանին դարձուց, որ Եղիպտացւոց յարձակման ժամանակ եկել և Հայաստանի հիւսիսային մի քանի գաւառները դրաւել էր, Լեռն նրա վրայ մի փառաւոր յաղթութիւն առաւ և ստիուցը նրան 1278-ին իր երկիր-

Ներուն շատ նալաստատու մի խաղաղութիւն ստորագրել։ Այս  
կրկնակի յաղթութիւնը Հայաստանի համար մի կոտարեալ  
հանդարտութիւն տուաւ և իր սահմանները ապահովացրեց  
բայց երկար ժամանակ կարող չեղաւ վայելել։ 1282-ին Թաւ  
թարներու և Եղիպտացւոց մէջ ծագած կռիւը նորէն Լեռ  
նին զէնքի հրաւիրեց ։ Ապաղա-խանն ոտքի վրայ զրաւ 30,000  
զօրք Մանդոյ-Թիմուրի հրամանատարութեան ներքեւոր իր եղաւ  
բայրն էր, և ան գնացնրա հետ միանալու իր բանակն էլ միասին  
դնացին մինչև Համսի կաղմերը հասան տռանց, մի արդելքի  
պատահելու, Մամլուքները Համս քաղաքը պաշարել էին, դաշտին  
մէջ այս քաղաքին դիմացը դանուում ։ Ի Սայֆէատին-  
ալ-Ալֆի Եղիպտասի Սուլթանը իրա ամրող ջրանակովն որ կտր-  
գով ճակատ էր կաղմել։ Մանդոյ-Թիմուր իր բանակը հետ  
և կերպով պատրաստեց ։ Իրա համար բանակին մէջ անդի  
հրամանատարութիւնն արաւ, Հայաստանի թաղաւորը աջ թե-  
ւին հրամանատարութիւնը, և Ալմախ զօրապետն էլ ձախ թե-  
ւին։ Երբ պատերազմի նշանը տուուեցաւ, Ալմախ և Լեռն թրշ-  
նամոյն երկու թե երր խորտակեցին, վեր խփեցին ու փախց-  
րին։ և նրա քամակից ընկանասում է Յովհաննէս Հերոլտոս, մի  
քանի մղոն։ Մանդոյ-Թիմուր, նոյն պատմազրին պատմած ին նա-  
յելով, թէ Սուլթանի ոսկովը հրսուրուացած ըլելով և թէ աշից  
սարսափած, նախ շատ անարիութեամբ պատերազմեցաւ և  
յետոյ բոլորովին քաշուեցաւ ։ Ալֆի, որ արդէն յուսակառուր  
էր եղել և կարծում էր թէ պատերազմ կորցրուց, հոգի ա-  
րաւ և յետ դարձաւ ։ Մանդոյ-Թիմուր Եփրատից անց կա-  
ցաւ ։ Լեռն և Ալմախ երբ թշնամին վանելուցը յետ դարձան  
տեսան, որ պատերազմ դաշտն երեսի վրայ է թողել իրանց սպա-  
րապետը և գնացել է, ուստի իրանք էլ յետ քաշուեցան ։  
Համս քաղաքը, որ մինչև այն ժամանակ իր Հայ իշխանի քա-  
ջութեամբը պաշտպանուում էր, անձնատուր եղաւ։ Լեռն ու-  
րիշ մի քանի տեղեր էլ կորցրուց, և եղած տեղումը նեղու-  
թիւն կրելուն համար Հայաստան մտաւ, բաւականին զգալի  
կորուստներ անելուց յետոյ ։ Այս հարուածից յետոյ, Լեռն  
էլի հանդարտութեամբ եօթը տարի թաղաւորեց և 1289-ին  
մեռաւ, որու վրայ իր հպատակները շատ ցաւեցան ։

Աւան Դիմանակ, և արդէն իր նախորդներու ժամանակն էլ Հայոց վաճառականութիւնը մի նշանաւոր զարգացում էր արած մանաւանդ Հնդկաց և Երոպացւոց հետ ։ Եղիպատուք, խաչակիրներու սկսելուց հետէ, արեմտեան քրիստոնեայներու համար փակուած էր, նրա համար Գենովացիք և Վենետիկիցիք իրանց վաճառականական տները Հայաստանումն էին հաստատել միջերկրական ծովու ափանց վրայ, և Այս կամ Այացցօ Աղեքսանդրէդայի խորշումը, Խոսսի կշտին, միջին դարու ամենամեծ վաճառաշահ քաղաքներից մինն եղաւ։ Այս քաղաքն իր համբաւն երկու դարու չափ պահեց, 1150 ից մինչև 1350։ Սանուդո, Բէկոլիթը ի և Մարքորոլոն նմանապէս այս քաղաքի մասին խօսումնեն ։ Հայ վաճառականները Հնդկաստանից ապրանքներ էին բերել տալի Պասրա, որ Տիգրիս զետին բերանու մն է և այն տեղաց այս դետին վրայով մինչեւ Բաղդատ էին դնում և այս քաղաքից Այս էին զրկում, բայց թանկապիս ապրանքները, Պարսկաստանից, Հայաստանից անցկացնելով այս տեղ էին հասացնում։ Այս վերջին ճանահարհն աւելի հեռաւոր է երեւում, սակայն աւելի, ապահովն է։ Այն անհամար վաճառականական դաշնադրութենից որ հայաստան արել էր Արագոնի, Սիկիլիոյ թագաւորներուն Վենետիկու և Գենովայի հասարակալետութեանց հետ, պատմութեան մէջ միմիայն մէկ հատ է պահպանուել, որնոր Գենովացւոց անչափ արտօնութիւններ է տալի։ Աւոն այս հրովարտակումը Շատագոր ամենայն Հայոց տիտղոսն է կրում որնոր իր նախորդներից մի քանիսն էլ կրել էին։

Հեթում Բ. Կեռնի անդրանիկ որդին, իրա տեղն անցկացաւ։ Այս տարօրինակ մարդը, որուն բնութիւնը զբկել էր առաղջ մտքից և հաստատուն կամքից, 16 տարուայ միջոցումը երեք անգամ զահից վար իջաւ կրօնաւորի խարազն հազնելու համար և երեք անգամ էլ թողուց խարազն թագաւորական ծիրանիով ծածկուելու համար։ Սրա համար է անշուշտ, որ իր թագաւորութիւնը ուրիշ բաներ մեր յառաջ չըպուրս հանում բայց միայն հետզհետէ եղած բանսարկութեանց սպանութեանց և քաղաքական և կրօնական խռովութեանց մի տեսարան, որոնց մէջ և ինքն իր կեանքը կորցրուց ։ Մա-

Ե.ք-ալ-Աշրէ ֆ-Սալահէտտին Եղիպտոսի Սուլթանը. արդէն Պաշ-  
ղեստինու Ասորւոյ երկրին և Անտիոքին տէր եղած, Էլ ուրիշ  
բան չէր մտածում: այլ միայն Հայաստանին էլ տիրապետել,  
որնոր միակ քրիստոնեայ տէրութիւնն էր այս աշխարհներում  
առլրող: Հեթում իրան սպառնացող վասնկը տեսնելով, մի և  
նոյն ժամանակ Նիկողայոս Դ. Հո ովհակեցոց քահանայապետին  
և Թաթարաց խանին դիմեց օդնութիւնն խնդրելու: Խակ իր  
ունեցած զօրքերը վասնուուոր տեղերում դրկեց: Սուլթանը  
1292-ին Հռոմելլոյն պաշալեց, ուր տեղ էր կաթուղիկոսի  
բնակարանը, Հռոմելլայ երկար դիմանալուց յետոյ թշնամուոյն  
ձեռքն ընկաւ: Բնակիչներուն մեծ մասը տնդութ Մամիուքի  
երկաթովը սպառնուեցաւ, Ֆնացածը Ատեփաննոս կաթուղիկո-  
սին հետ Եղիպտոս գերի տարուեցաւ: Նիկողայոս (պատր) ան-  
կարող ըլելով Հայոց օդնութիւնն հասնելու, նրանց դեսպան-  
ները Ֆրանսիա յուղարկեց Փիլիպոս Ա. Եղիշեցիկի ձեռնառու-  
թիւնը խնդրելու, բայց դեսպաններն ունայն խոստմունքներով  
յետ դարձան: Հեթումայն ժամանակ Հարկադրուեցաւ Սուլ-  
թանին հետ մի ամօթալի խաղաղութիւնն կամ զինադադա-  
րում անել, նրան մի քանի դաւառներով շատ ամուր տեղեր  
տալով: Մի փոքր յետոյ թագուորը կառավարութիւնը իր  
եղբօրը Թորոսին յանձնեց և ինքը գնաց մի վանքի մէջ քաշ-  
ուեցաւ: Երկու տարուց յետոյ Թորոսն էլ նոյնալիս արաւ, Հե-  
թումն էլ էլի տշխարհիս երեսին երեւեցաւ դահը բազմելու  
համար: Յետոյ վերկացաւ գնաց Թաթարներու մայրաքաղաքը  
և նրանց Խաղան խանին հետ նորունց դաշնակցութիւնը նո-  
րոգեց: Հայաստան դառնալիս իր քոյրը Մարիամը կնութեան  
տուաւ Յունաց կայսր Անդրոնիկոս Բ-ի որդւոյն Միքայէլին և  
իր միւս քոյրը Խոարէլը, Կիպրոսի թագաւորի եղբօրը. 1296-ին  
նորունց հրաժարեցաւ թաղաւորութիւնից և իր դահը տուաւ  
իր երրորդ եղբօրը Սմբատին ու ինքը Թորոսի հետ միասին  
Կոսդանդնուղոլիս զնաց իր քրոջն այցելութիւն: Իր Ճանա-  
պարհորդութեան դարձին Հայաստանից դուրս հանեցին իրան  
ուստի և նա նախ Կապանիցու պօլիս և յետոյ Խաղան խա-  
նին մօտ դարձաւ օդնութիւնն խնդրելու: Բայց Թորոսի հետ  
բռնուելով Սմբատին ձեռքն ընկաւ, որուն աչքիրը հանել

տուաւ և թորոսին էլ սպաննեց ։ Կոսդանդին, Հեթումի չորս  
րորդ եղբայրը ականատես ըլելով այս անգութ գործքին, բա-  
նակը Սմբատին գեմապստամբեցուց և բռնադատեց նրան զահից  
իջնելու, որու վրայ ինքը նստաւ : Յետոյ Հեթումին էլ աղա-  
տեց ։ Հեթումը, ու արք սրբոց պատմութեան ասածին նա-  
յելով. հրաշքով աչքի լոյսը դտնելով երրորդ անգամ գահը  
նստաւ և իր եղբայրները, Սմբատին ու Կոսդանդնին բռնելտուաւ  
և Կոսդանդնու պօլիս զրկել տուաւ խնդրելով կայսերից, որ նը-  
րանց այն անդ պահէ ։ Այս ժամանակից, Հեթում բացար-  
ձակ տէր լինելով Հայաստանին իր աւերակ երկիրները նորու-  
զելու հետամուտ եղաւ, զօրք հաւաքեց և Դամասկոսի է-  
միրին գեմ գնաց, որ արդէն իր սահմաններուն էր մօտենում:  
Մի լերան կիրճը բռնեց և այն տեղ էմբին վրայ յարձակելով  
նրա շատ մարդիկը սպանեց և իրան էլ զերի բռնեց իրան-  
ներով և վեր առաւ Խաղան Խանին զրկեց ։ Խաղան Խանն էլ  
երկու անգամ փորձ փորձեց Հեթումի գործակցութեամբը  
Ասորոց և Պաղեստինու երկիրները Մալէքնազարի լուծից ա-  
զտույլ բայց ամէն անգամումն էլ ստիպուեցաւ իր դիտաւո-  
րութենից և կենալ և զնալ իր յատուկ երկիրը պաշտպա-  
նել իր ազգականներից մէկին գեմ. Բայզօն անուն, որ իրա գէ մն  
էր վեր կենում միշտ ։ Աերջին անգամ Թաթարստան մեկնե-  
լիս, իր խորհուրդը առաջ տանելու հողսը իր Գոթլուզ սպա-  
րազետին յանձնեց. սա առաջին անգամ մի քանի յաղթու-  
թիներ արաւ թշնամոյն վրայ, բայց յետոյ ստիպուեցաւ  
Նիրատից դէսը անցկենալ մի շատ մարդիկ կորցնելուց յետոյ:  
Դժբաղգութիւնն իր վերջին ծայրը հասնելու համար, Խաղան  
Խանն էլ մեռաւ 1302-ին. Պարսկաղտնդ նրա յաջորդը մահ-  
մետական եղաւ և Հայաստանին էլ թշնամի ։ Թաթարաց բա-  
նակը իր հին գաշնակիցներու գեմ դարձաւ և երկիրին ճա-  
նապարհներն ու գիրքը լաւ ճանաչելով ամբողջ մի տարի տակն  
ու վրայ արաւ :

Այս գեպքերու ժամանակ, Հեթում կամ Համոզմամբ  
կամ կեղծառաւթեամբ իրա մի քանի պալատականացը հետ  
Հռովմէական եկեղեցին ընդունեց, և անկարող լինելով իր  
ազգին բարոյական և նիւթական զօրութիւնը միացնելու և ի

զործ գնելու իր գահին պաշտպանութեանը համար, կարծեց  
որ ժամանակը եկել է Հռովմայեցւոց քահանայապետին իր  
կողմը շահելու, նա, որ իր յառակ օգուտները պաշտպա-  
նելումը Հեթումից աւելի բարեբաղդ չէր: Սարակինոսներն ու  
Թիւք Անները Թաթարների օրինակից սիրտ առած, սկսան ի-  
րանք էլ արշաւել և ամբողջ քաղաքներ ու գուառներ աւերակ  
զարձնել: Հեթում երկար ժամանակ անզգոյութեան մէջ ըն-  
կղմած մնալով, զերջապէս զէնքը ճեռին առաւ և իսոսի կողմերը  
նրանց հանդիպելով: Նրանց 14,000 մարդով բաղկացած բա-  
նակը ցրուեց, որոնցից 6700 հոգին մեռան և զերի բռնուե-  
ցան: Այս յաղթանակին համբաւը մի փոքր ժամանակ այս  
ասպատակներու ամբոխը կանգնեցուց և Հայաստան այնու-  
հետեւ մի հանդստութիւն վայելելու յոյս ունեցաւ:

Հեթում, 1305 թուին երրորդ անգամ գահից վար իջա-  
նելով, նրա վրայ բաղմեցուց իր Թորոս եղբօրը որդին Լեռնը:

Լեռն Դ. իր հօրեղբօրը շատ իղից դնաց, իր թագաւոր օծ-  
ուելուց անմիջապէս յետոյ, Կղեմէս Ս-ին դեսպաններ յուղար-  
կեց, որոնք ունայն խոստմունքներով յետ գարձան, ինչպէս յա-  
ռաջ: Սուրբ Հայրը (այսինքն պապը) տեսնելով Հայաստանի  
ողորմելի վիճակը, որուն մէջ Հեթում Բ-ի և Լեռն Դ-ի ան-  
կարողութիւնն ու տղիտութիւնը գլորեցին, պահանջում էր: ոչ  
թէ միայն Հայաստաննեայց եկեղեցւոյն պարզ և յայտնի հնա-  
զանդութիւնը, այլ նաև բուն թագաւորին իրան հպատակ  
ճանաչելը սուրբ գահին:

Հայաստաննեայց եկեղեցին իր սկզբեցը անկախ էր եղել և  
ամենելին մի հաղորդակցութիւն չէր ունեցել Հռովմայական  
եկեղեցւոյն հետ: Բայց Հայաստանի արքունեաց խաչակիրնե-  
րից հետէ Ախողրոսի, Անտիոքի, Եղեսիոյ, Սիկիլիոյ և Մամա-  
ռըստանի վրայ տիրող ցեղերուն հետ խնամութիւններ անելը,  
նոյնպէս և զինուորկան դաղթականների հաստատուելը, ինչողէս  
Տաճարականաց և Առաջականաց, Հայոց աղզին և Հռովմեա-  
կան եկեղեցւոյն մէջ մերձաւորութիւններ էր յառաջ բերել:  
Չորեքտասաններորդ դարումը գտնուեցան մի քանի աշխարհա-  
կան կամ եկեղեցական Հայեր, որոնք երկու եկեղեցիները միա-  
ցընելու համար ունեցած փակաքնին յայտնեցին, մանաւանդ.

այն ժամանակ, երբ Հայկական թագաւորութիւնը՝ մահմեական տէրութիւններից պաշարուած շատ տկարացել էր և չէր կարող էլ իր յատուկ զօդութեամբն իրան պաշտպանել:

Հռոմլայի երկրորդ, երրորդ ժողովքը, 1178-ին և 1179-ին, հետեանք էր ունեցել Հայոց և Յունաց եկեղեցեայց մէջ, եթէ ոչ խկութեամբ դէժ անունով մի միութիւն : Սայ հինգերորդ ժողովքը 1307-ին, վեցերորդը 1309-ին, եօթներորդը 1312 ին, ու թներորդը 1361-ին, նմանառէս Ատանայի ժողովքն էլ 1316-ին աշխատեցան Հռովմէական և Հայաստաննեայց եկեղեցւոյն միաւորութիւնը դլուխ տանել : Բայց Հռովմայ քահանայապետը, ինչպէս որ ասած է մի երեսելի հեղինակ<sup>1</sup>, շատ ելի երկրին հետ էր զբաղած, քան թէ երկնի և եկեղեցին թողել էր պատերազմի դաշտին միջ բնակելու համար՝ ոչ վէճ, ոչ խնդիր և ոչ քննութիւն էր մտիկ անում, այլ պահանջում էր, որ Հայոց եկեղեցին յայտնի և պարզ հնազանդութիւն տնի և բոլորովին վերանորոգուի քաթոլիքական եկեղեցիից օրինակուելով :

Որչափ արտաքին վտանգները սպառնումէին Հայոց թագաւորութիւնը կործանելու, այնչափ էլ սուրբ Հայրը (պապը) իր պահանջմունքներն աւելացնումէր : Այս փառասիրութիւնն եղաւ գլխաւոր պատճառ, որ ամէն խաղաղութեան և հաշտութեան փորձերը ոչինչ հետեանք չունեցան :

Լեռն Դ. և Հեթում առաջին զոհերն եղան իրանց յիմար հաւատուրացութեան: Միութեան կուսակիցները 1307-ին սկզբումը մի ժողով արին ու որսշեցին Հայոց ծէսերը փոփոխել: Սրա համար մի անբաւականութիւն ծագեցաւ և յետոյ մի ապստամբութիւն, որով բոլոր աղդը ոտքի վրայ կանդնեցաւ, Պիլարկու Խանը, որ այն ժամանակներումը Հայաստանումն էր գտնուաւմ, այս անկարգութեանց վերջ տալու համար, սպանել տուաւ, մի ոչինչ պատճառի համար երկու թաղաւորներն ու խնամապեան էլ իրաններու հետ միասին :

Օշին իր եղբօրը Լեռնին մահն իմանալով, 1308-ին կառավարութեան սանձը ձեռին առաւ և Պիլարկուն դուրս քըշեց, որ մի քանի ժամանակից յետոյ սպանուեցաւ: Օշին ջաւագաւառ-Սէկիւր, Արեւելեսն կայսրութեան պատմութիւն, երես 502.

նադրութեամբ սկսաւ կրօնական խնդիրներով վորոված տէ-  
րութեանը մէջ կարդ և կանոն հաստատելու զրաղել։ Կիպ-  
րոսում պատահած խռովութեան մէջ, որնոր տեղի ունեցաւ  
չենրիկոս թաղաւորին և նրա եղբօր Ամարիին մէջ, երեսումէ,  
որ 0շին երկրորդին կողմը բռնեց, որ իր քեռայրն էր։ Հեն-  
րիկոս, որ այս խռովութեանց ժամանակ Հայաստան էր քաշ-  
ուել մի տարուց յետոյ Կիպրոս կղզին դարձաւ և դահընըս-  
տաւ։ Այն ժամանակ 0շինի և Հենրիկոսի մէջ մի թշնամու-  
թիւն սկսաւ, որնոր շատ տարիներ տևեց։ Կղեմէս ն. և Յով-  
հաննէս իբ. իրանց ազդեցութիւնն ի գործ զրին նրա մէջ մի  
զինադադարումանել տալու համար։ Յիտոյ Գենովացւոց միջ-  
նորդութեամբ խաղաղութիւնը հաստատուեցաւ ։ 0շին մի կող-  
մանէ պատերազմից նեղացած, որնոր ընդգէմ Կիպրոսի բայ էր  
արել, միւս կողմանէ Մալուքների ահարկու պատրաստու-  
թիւններից սարսափած, որոնց միտքն իր տէրութիւնը զրա-  
ւել էր, երկու անդամ, մինը 1314-ին և միւսը 1315-ին դես-  
պաններ ուղարկեց Ֆրանսիա Փիլիպոս Վալուային առաջը-  
գնելու արեւելեան քրիստոնէից վիճակը և նրա օդնութիւնը  
խնդրելու։ Բայց Ֆրանսիան Ֆլանտրիոյ հետ պատերազմով զբա-  
զած՝ ամեննեին մի օդնութիւն կարող չեղաւ անել։ 0շին ան-  
օդնական մնալով միմիայն իր զօրութեամբ ինչպէս որ կարող  
եղաւ իրան պաշտպանեց ու 1320-ին մեռաւ։

0շինի իր տէրութեան մէջ շինել առւած անհամար բեր-  
դերուն և եկեղեցիներուն մէջ, Տարսոնինը ամէնից երեւելին է  
երեսում ըլնի։ Այս քաղաքիս պարխաստները, որոնք արքայազն  
իշխան կոնսղանդին սկսաւ շինել 0շինի ձեռքով աւարտ-  
ուեցան 1320-ին իր թաղաւորութեան վերջին տարին, ինչ-  
պէս որ այս քաղաքիս մի եկեղեցումը սպահանուած արձա-  
նագրութիւնը ցոյց է տալի։ 0շին այս տեղ մի եկեղեցի էլ շի-  
նել տուաւ, որնոր մահմետականաց տիրապետութեան ժա-  
մանակ մզկիթ դառաւ և որնոր այսօր կոչուումէ, Քիլիսէ-  
Զամի։ որ նշանակումէ եկեղեցի-մզկիթ։

Լ ևո՞ն ն. 0շինի որդին, 0շին իշխանի խնամապետութեամբ  
գահն անցկացաւ դեռ 10 տարեկան։ Իր 21 տարուայ թա-  
գաւորութիւնը ուրիշ բան չհանել մեր առաջը, բայց միայն

մոլորու թեանց, անկարողու թեան, անգթութեան և անքաղաքաղէտ դործքերու մի խառնիխուռն տհսարան : Հայաստան, որ արդէն իր նախորդներու ժամանակ բուն Կիլիկիոյ սահմաններում էր ամփոփուել և մինչև իր հիմունքներումն անգամ սարսուել զղբուել էր, և ան Ե-ի ժամանակ դեպի կործանու մն էր զիմում արագ արագ քայլելով : Մալեք-Նազարի (Եղիպտոսի Առևլունի) տէրութիւնը, այս ժամանակումն տարածւում էր Նեղոսի եղերքներից մինչև պարսկական ծովը, իր մէջ բովանդակելով Միջագետքը: Ասորւոց երկիրը և Պաղեստինը՝ արևելքի բոլոր քրիստոնեայ երկիրները այսպէս նրա լուծին տակն էին զտնուում, բացի Հայաստանն ու Կիոլրոս կղզին, որոնք միտքը զբաւ, որ նուածել : Աւելի լաւ հասնելու համար իր նպատակին, մի զաշնաղրու թեամբ Թիմուրթաշին և Արամանին հետ կապուեցաւ, որոնց մէկը Թաթարներու մեծն էր և միւսն էլ Թիւրքմէններու, և իկոնիում էին իշխում, որնոր թաթարներն էին նու ածել, կապաղովկիում և Նվիրատ դետին մերձակայ զաւառներում :

Այս զաշնակցութեան նպատակն էր Կիլիկիայից քրիստոնէից տիրապետութիւնը ջնջել, որոնց վերջին ապաստարանն էր, և այս կերպով վերացնել այն տեղաց արևմտեան քրիստոնեայներու Երուսաղէմի տիրելու յոյսը : Այսպէս է մեղցոյց տալի Յովհաննես Իբ-ի հրովարտակը : Ուստի Հայաստան այն զոհն էր, որնոր պէտք է մորթուեր քրիստոնէութեան համար: Արևմտեան քրիստոնէից Հայաստանը պաշտպանելու համար նորէն պատրաստած խոչակրու թեան համբաւը՝ առիթուաւ զաշնակիցներին շտապով իրանց ձեռնարկութիւնը ի զործ զնելու : Թիմուրթաշ 30,000 ձիաւորով մի յարձակում արաւ Հայաստանին վրայ և 25 օր շարունակ հուր և մահ սկսեց ամեն աեղ : Փառաւոր քաշաքներ քարուքանդ եղան, աւարի առնաւեցան և կրակի տուուեցան զաշտերն ու այգիները աւերեցան և նուիրական տեղերը պղծուեցան և հաղարաւոր մատաղ տղաքներ էլ և աղջիկներ էլ զերի տարուեցան: Մի փոքր յետոյ Արաման մտաւ Հայաստան և ըստ օրինակին թաթարաց աւերն ու քանդումը շարունակեց : Հազիւ թէ Արաման աւարով բեռնաւորած Հայաստան թողել զուրս էր

գալի. Եղիպտացւոց բանակը մտաւ Հայաստան և վերջին հարութածը տուաւ ամէն բան քանզելով և կործանելով։ Եղիպտացւոց Կիլիկէումն արած աւերը, քանդն ու կոտորածը, այն աստիճան սոսկովի եղաւ, որ Հայաստանի դաշտերն ու բլուրները մի ահրելի անապատ գարձան և կրակի տուած քաղաքներուն մուխը իմաց արաւ արեւմտեան քրիստոնէից մահմետականութեան յաղթանակը արեւելեան քրիստոնէութեան վրայ։ Եղիպտացիք գաշտային Հայաստանը քարուքանգ առնելուց յետոյ եկան և Այասի առաջը բանակը դրին, որ միջին գարու Տիւրոսն էր։ Այստ մինչեւ վերջին շունչը դիմացաւ, յաղթովն զայրացած իր կորցրած անհամար մարդոցը համար այս քաղաքը պաշտօնելիս, բոլոր բնակիչքը մեռնելու կամ զերի տանելու դատապարտեց. մի մասը Կիպրոս կղզին փախաւ թաղաւորի քրիստոնէից օդնութեան համար զբկած նաւերով, միւսն էլ զնաց Կորիկոս<sup>1</sup> ապաստանեցաւ։ Հայոց երիտասարդները, տեսնելով իրանց ողորմելի թաղաւորին, որ այս վերջին վայրկեաններումն էլ կրօնական խնդիրներու հետ է ըլնում և իրանց իշխաններն էլ երկառակութեանց մէջ ընկած են, զնդեր կազմեցին իրանց բոյնն ու կրօնը պաշտղանելու համար։ Այս դնդերից առաջինն, որ 600 կտրիչ պատերազմողներով էր կազմուած, թշնամւոյն վրայ յարձակեցաւ, որ Այասից աւար և զերի վերցուցած Պիրամոս գետին ավանց վրայ կանգ էր առել և հանդարտութեամբ իր յաղթանակին էր վայելում։ Այս գունդը երեք անդամ յետ մըղուելով երեք անդամ էլի նորունց յարձակեցաւ նրանց վըրայ և այնպէս մեծ կոտորած սփռեց. որ թշնամին ոտնակոխ եղաւ և Հայաստանից դուրս վանուեցաւ 5000 մարդ կորցրնելուց յետոյ։ Միւս գունդը 200 մարդով կազմուած, մի կիրճ բռնեց, որ տեղաց 18,000 մարդով թշնամեց մի բաժին զօրք սլիտի անցկենար։ Այս 200 մարդիկը այնպէս կատաղութեամբ նրանց վրայ թափեցան. որոնցից 6000 հոգի սպանեցին իրանց զերիներն ու կողոպուտն էլ աղատելով։ Եղիպտացիք այսպէս յաղթաւելով. մի փոքր կակուացան, և նրանք, որ յառաջ Հայաստանի վրայ տիրելն էին մտածում, նրա հետ 15

տարուայ համար մի զինադատում արին : Ահաւասիկ օրոնք էին այս զինադադարման գլխաւոր պայմանները, Ա. Հայաստանը խոստանում էր Սուլթանին տարեկան 50,000 ֆիորին տուրք վճարել : Բ. Այասի մաքսի եկամտին կէսը Սուլթանին թողել, ինչպէս նաև օտարականաց վաճառուած առաջին եկամտին կէսը : Սուլթանն էլ իր կողմանէ խօսք էր տալի, Ա. Հայաստանում ոչ մի բերդ և ոչ մի տեղ իր զօրքերովը չըռնել : Բ. իր ծախքովը Այասի պարիսպներն ու նաւահանգիստը շնորհանապէս իր ուրիշ կործանած քաղաքներն էլ :

Այս զինադադարումն չկատարուած . և ո՞ն այս իրարու եւ աև եկած յարձակմունքներից նեղն ընկած . շատ անգամ իր զեսպաններովը Եւրոպից իշխաններուն էր դիմել՝ նրանցից ոզնութիւն խնդրելու համար : Արդէն Եւրոպիում 25 տարուց հետէ խորհուրդ էին անում մի նոր խաչակրութիւն կազմել Հայաստանին համար : Հեթում Կորիկոսի իշխանը, Ֆըրանսիա էր զրկուել 1307-ին այս բանիս վրայ տեղեկութիւններ տալու համար<sup>1</sup> : Ցովհաննէս Ին . պատը տեսնելով քրիստոնէութեան վերջին ծայրը հասնելը Հայաստանի մէջ . շատ ցաւեցաւ և Ֆրանսիոյ թագաւորից շտագուած՝ այս բանիս մասին Հայաստանն ազատելու համար խաչակրութիւն կազմել հրատարակեց : Բոհեմիոյ, Նաւարրայի, Արակոնի թագաւորները մեծ հանդէսով խաչակիր եղան : Եւրոպիում այս նըսպատակիս համար մեծ պատրաստութիւններ եղաւ : Փիլիպպոս Վալուային և Յովհաննէս Ին . յիշատակին յարդանք մատուցանելով, պարտական ենք ասել որ նրանց Հայաստանի համար առատապէս ցոյց տուած համակրութիւնը առանց դործքի թաց և մի նոր պատճառ դառաւ այս տխուր երկրին թըշուառութեանցը :

Եղիպտացիք զարթնելով նոր խաչակրութեան ձայնից, նորէն զէնք առին իրանց ձեռին . զինադադարումը աւրեցին և Հայաստանի վրայ ընկան : Վեռնը, ողորմելի Վեռնը, իր կրքերուն գերի եղած . իր կատաղութեան մէջ իր ամսւսինը և իր խնամակալն ուրիշ փորձառու զօրավարներու հետ ստանել

1 Տիեզերական աշխարհագրութիւն, Մալդ—Բրէոնի հատ. Ա. երես

էր : Այս բանով իր տղոն իրանից հեռացրել էր, այնպէս որ այս յետին ըուպէում ոչինչ պաշտպանութիւ չկարող եղաւ տառարատել : Թշնամին առանց մի դժուարայադթ արգելքի պատահելու Հայաստան մտաւ և իր ուղածին չափ տակնուվը արաւ և վերկացաւ զնաց աւարով և դերիով : Լեռն 1330-ին նորէն Ֆրանսիոյ թագաւորին և Սիկիոնյ թագաւորին դիմեց, որ իր աներն էր, նմանապէս և բենեդիկտոս ԳԲ-ին, որ վախանակ նրա ուղած բանակին. մի քանի պարկ ոլիւր դրկեց սովոր թեթևացնելու համար. որնոր յառաջ էր եկել աւերօւմից և քանդումից : Փիլիպպոս-դը-Վալուան 10,000 ֆլորին ոսկի դրկեց նրան: Մալէք-էլ-Նազար Մահմատ Եղիպտոսի Ոռութանը իր արշաւանքները կրկնեց 1335-ին և 1337-ին ստիպեցրուց Լեռնին խաղաղութիւն խնդրելու, որուն առաջին պայմաններն էր թէ «Հայաստանի թագաւորը խօսք պէտք է տայ սուրբ Աւետարանին և Խաչին վըայ երդում ուտելով այսուհետեւ ոչ մի հաղորդակցութիւն և բարեկամութիւն չունենալ արևմտեան քրիստոնէից հետ», խաղաղութիւնը միանգամ, որ այս կերպով կատարուեցաւ, Եղիպտացին իր բանակով գուրս եկաւ Հայաստանից 1337-ին :

Լեռն Ե. 1341-ին<sup>1</sup> մեռաւ առանց ժառանգ թողելու : Եւ Ռուբենեան տան ուղիղ շաւիլիցը նրանով բոլորովին վերջացաւ : Յովհաննէս Լուսինեան իշխանը խաղէլի սերունդը, որ Լեռն Գ-ի և Լուսինեան Ամորիի աղջիկն էր Ֆրանսիայի աղնուական, նախ Տիւրոսի իշխան եղաւ. յետոյ Կիոսկի թագաւոր, Հայաստանի թագաւոր ընտրուեցաւ : Կոնսդանդին Գ-ի անուն կրեց և միայն մի տարի թագաւորեց վաճն զի 1342-ին իր զենուորների ձեռքով սպանուեցաւ իր անկանոն վարուցը համար : Այն ժամանակ Գիւ, կամ Գիղոն, նրա եղբօրը զահը հրաւիրեցին Հայաստանի մեծամեծները :

Բենետիկոս Ժ. Հ. Միմանումինչ իրաւամբ, անշու շտ միջին դարու մթին ժամանակներից հանած, Լեռն Ե-ին Սուլթանի արած երդումից արձակել էր : Եւ կրօնի անունով նրան և նրա յաջորդներուն հետ դադանի մի հպատակութիւններէր նիւթել.

1 Սմբատ իր տարեգրութիւնը 1341-ին է վերջացնում, Լեռն Ե-ի մահուան պատմութիւնը չգիտացուիլ,

որնոր Եղիսլատաց Հոգատակ ւթիւն անելուց աւելի նախառական է, ու Եղիսլատաց իմանալով Հայաստանում անցկացածները նորունց իրանց Արարացի զօրքերովը Հայաստան մտան, որտեղ անց կացած աւելն ու կործանումը նորոգեցին, Գիդոն անկարող իր երկիրը որոշապահնելու և իրա ազդին էլ ատելի ըլելով. երկու տարուց յետոյ սպանուեցաւ : Կոնսդանդին Դ. Ռուբենի մերձաւոր ազդականը և Բաղդինի որդին, որ Հայաստանի սպառապետն էր, նրա տեղին անցկացաւ 1345-ին և մինչև 1363 թւռական թագաւորեց :

Կոնսդանդին, իր խելքի և սրտի արատուական յատկութիւններովն արժանի էր մի լաւ ժամանակ թագաւոր լիւնելու : Քրիստոնէական և ընկերական առաքինութիւններն այն ընդհանուր ապականութեան ժամանակներումը, արտաքոյ կարդի բաներ էին, երեսում : Կրօնական խռովութիւնները դադարեցնելուց, և եկեղեցւոյն ու իր արքունեաց մէջ եղած բանսարկութեանց վերջ դնելուց յետոյ, Կոնսդանդին խոհիմութեամբ սկսու ընկերութեան մէջ կարգ և իր աէրութեան մէջ ել ապահովութիւն հաստատել. երկրադործութիւնն ու վաճառականութիւնն էլ հաստատեց և իր մասնաւոր ջանքն եղաւ իր ազդին բարոյական վիճակը լաւացնել :

Այն մտածմունքն, թէ որչափ Հայաստան կանգուն կմնայ արեւման քրիստոնեայքը Պաղեստին առնելու կմտածեն, վճռել տուաւ Եղիսլատուի Սուլթանին նորունց Հայաստանին տիրելու : Առանց մի աեղ արդելքի պատահելու, Եղիսլատացիք վերկացան և եկան մինչև Այս, որու վրայ յարձակելով առ ին : Կոնսդանդին, Կիպրոսի թագաւորից և Հռոմոսի առավետներու մեջաւոր Թէոդատից օդնութիւն առնելուց յետոյ գնաց նրանց հետ պատերազմելու : Եղիսլատացիք յաղթուած պարտաւորուեցան Հայոց երկրից դուրս գնալու և Այն ժամանակ Կոնսդանդինի դեսպանները Ֆրանսիա և Անգլիա գնացին այս յաղթութեան լուրը աւետելու և մի և նոյն ժամանակ օդնութիւն խնդրելու թէ որ նորունց ըն շնամին Հայաստան մտնելու լինի : Բայց Ֆրանսիան Գրեսիի սոսկալի ճակատամարտից յետոյ իր դլիսին դարման անելու համար էր պարտական մտածել. Անգլիան էլ ուրիշ բան չէր մտածում, բայց

միայն իր յաղթութեամբը քաղած պառւղներից շահ հանել ։  
Կոնստանդին, այս աէլութիւններից օգնութիւն ունենալուց  
յոյսը կարելով. մի զօրեղ պաշտպանութիւն պատրաստելու ետե-  
ւից եղաւ իրա առանձին ունեցած զօրութեամբը ։ Կիպրոսի նա-  
տառորմիղը որնոր 4 նաւով և. 10 ձկնանուով էր կազմուած սահ-  
պեցրուց Եղիպտացիքը, որոնք եկել և Գուրկոյ քաղաքը պա-  
շտպել էին, յետ քաշուելու, և Կոնսդանդին սպաշտպանողական  
դիրքը թողելով յարձակողականն արաւ, Ամանոս սարեցից անց-  
կացաւ 1357-ին և Աղեքսանդրէտա քաղաքը Եղիպտացւոց ձե-  
ռից առաւ։ Այս յաղթութիւններն առ ժամանակ Եղիպտա-  
ցիքը կանդնեցրուց և Հայաստանն էլ մի փոքր հանդսութիւն  
գտաւ, որ տեսեց մինչև 1362 թիւը, երբ Կոնսդանդինն էլ մե-  
ռաւ։ Կոնսդանդին բնաւ ժառանդ չթողուց և իր մահուա-  
նից յետոյ երկու տարի նորէն առանց թալաւորի մնաց Հա-  
յաստան, այս անտերութեան ժամանակը Հայոց ազդին ընկե-  
րական կապերը կամաց քանդուեցան։

Երբ զլիսաւոր աղջու իշխանութիւնը վերջացաւ. բերդե-  
ռու և դղեակներու իշխաններն ու հրամանատարներն իրանք  
իրանց ինքնիշխան արին, որանից քաղաքական երկպառակու-  
թիւններն ու պատերազմները և կատարեալ անիշխանութիւնը  
սկսան։ Այս միջոցի սկասմութիւնը շատ մութ է. վասն զի  
ժամանակակից պատմազրներ չկան։ Փարիզու կայսերական  
թանգարանումը պահպանուած Ռուբեննեան թաղաւորութեան  
զրամներու մէջ երկու հատ Դրակօ կամ Դրազո անունով ստակ  
են գանու ում, որոնց վրայ Հայաստանի թաղաւոր է զրուած,  
կարծուումէ թէ սա Հայաստանի մի մասին կամբոյուրին վրայ  
թաղաւորած լինի Կոնսդանդնից յետոյ ։ Շատ հաւանական է,  
որ այն ժամանակ անկախ իշխաններ կային մանաւանդ Հայոս-  
անի հիւսիսային արևմտեան կողմումը, միջերկրական ծովուն  
և զերքներին վրայ, որ ակաց մի քանի քաշաք և բերդ Ակոն  
Եր, Կիպրոսի թաղաւոր Պետրոսին և Աղիայի, ասպետ Բո-  
ոկէրդ-դը Ռոլոսին տուաւ։ Պարսի Վիկտոր Լանդուան Հա-  
յաստանի միջին դարու զրամազիտութեան զրքին մէջ, այս  
զրամներու ճշմարիտ լինելը մերժ ումէ, որոնք ասումէ տասն  
և ութերորդ դարու մնեն շինուած։ Վիկտոր Լանդուա Հա-

յաստանի համար մի ուրիշ Պետրոս Ա. անունով թաղաւոր է տալի. որ մէկ տարի թաղաւորութիւն արել է. 1368-ից մինչև 1369: Այս կարծիքը, ինչպէս որ երեսում է Կուլլիկէլմոս-դը Մաշօյի տարեգրութենից առաջ՝ հիմնուած է այս անձի դըրամներուն մինը դանուելուն: որնոր ինքը տեսել է Առանայում Պարոն Արդայի դրամներուն մէջ: Աակայն մար պատմագրերու. այս երկու թագաւորներու և նրանց գահակալութեանց թուականին վրայ պահած խոր լութիւնը մեզ կողարտաւորացնէ այս կարծիքները իրքեւ պատմական իրողութիւն չընդունելու: Պարոն Վիկտոր Լանգլուան, որ Կոնսդանդին Գ-ի թագաւորութիւնը. փոխանակ 1345-ից մինչև 1362 դնելու. 1345-ից մինչև 1363 է դնում: կարծումէ, որ Հայաստանի գահը թափուռ է մնում 1363-ից մինչև 1368 և այս միջոց ժամանակումն է. որ Պետրոս Ա-ը թագաւորեց ասումէ. յետոյ նորունց 1369-ից մինչև 1375. մի անտէրնջութեան ժամանակ է բերում: որու միջոցին Լեռն Զ-ը գահն է բարձրացնում:

Յայանի է, որ թուականի և իրողութեան մի խառնիւխուռնութիւն կայ Պետրոս Ա-նոյն և Լեռն Գ-ի թագաւորելու մասին: Հաւանական է, որ Կիոլրոսի Պետրոս թագաւորը Հայաստանի թագաւորի անունը կրած ընի իր վրայ. և թէ առակ էլ կոլել տուած լինի Հայոց գրերով, առանց երեկք Հայաստանը տեսնելու. և նրա վրայ տիրելու: Լեռն Ե արդէն Անդիոքէտա և Սիկինոն բերդերը տուել էր Հաւոկոսի ասպետներուն և Կորիկոսի բերդն էլ Կիոլրոսի թագաւորին փոխարէն այն օգնութեան, որ մատուցել էր իրան 1337-ին Եղիպտացիքը դուրս հանելու համար: Կոնսդանդին Գ-ի մեռնելուց երկու տարի յետոյ. Լեռն Զ. Կիոլրոսի թագաւոր Պետրոսի ազդականը 1365-ին Հայաստանի թաղաւոր ընտրուեցաւ և յաջորդ տարին էլ յաղթուեցաւ: Այս ժամանակներումն է անշուշտ, որ Պետրոս, որ արդէն Հայաստանի ծովեղերքներին վրայ տիրումէր, այս երկըն թագը ձեռք բերելու համար պահանջմունքներ առաւ: Ուրիշ կերպ չկարելի ըլնում մեկնել այս ժամանակների մթին պատմութիւնն առանց սխալուելու:

Դէնը թողելով այս կասկածելի խնդիրներուն քննութիւնը և մի քանի օտարական հեղինակներու ցոյց տուած

յօւականներուն և թաղաւորներուն մէջ եղած սխալանքներին ուղղութ իւնը, իմ պատմութեան թելը սկսեմ։ Հայաստանի մեծամեծները ներքին անկարգութիւններից ճանձրացած և արտաքին վտանգներից ել սարսափած միաբանեցան իրանց մէջ և որոշեցին մի թագաւոր ունենալ։ Ընտրութիւնը Լուսինեան Վեռն Զ-ի վրոյ ընկաւ և թաղաւոր եղաւ։ Վեռն քաջ և առաքինի մարդ էր, բայց փող և զօրք չունէր։ Հայաստանին գահն ելու նրան վերջին օրհան տեսնելու։ Այն ժամանակաւոյ Հայաստանն էլ արժանի չէր իր անկախութիւնը վայելելու, արժանի էր որ օտարին լուծը կրէ։ Եղիպտացիք 1366-ին յարձակեցան։ Վեռն հազիւ կարողացաւ մի քանի մարդ հաւաքել իր դրօշտկին տակ, բայց յաղթուելով թշնամիից, որ քսան անգամ աւելի էր թուով խաղաղութիւն խնդրեց։ Հինգ տարուց յետոյ 1371-ին Եղիպտացիք նորէն յարձակեցան Հայաստանին վրոյ և Վեռն կռուին մէջ վերաւորուելով Տորոս լերան մի կրծումը քաշուեցաւ։ կատողի Եղիպտացին ամէն բան կրակի տուաւ, ամէն տեղ արիւն թափեց։ Քաղաքները եկեղեցիները, հիւանդանոցները ամէն տեղ կործանեցան։ Սարիամ թագուհին, որ մի ուրիշ ճանապարհով փախել էր, էլ իր ամուսույն վրայ ոչինչ տեղեկութիւն չէր առնում և կարծեց որ մեռած է։ Թաղուհին սյս գժրապղութիւնը շտապեց իմաց անելու. իրա ազգական Տարանդի իշխան Փիլիպոսին, որ միաբանութեամբ Եւրոպական տէրութեանց եղրիդոր Ժ.Ա. պապին։ Մոնթերայի Մարքիզ Յովհաննէսի ազգական 0թոն-դը Պունովիկ անունով մորդին։ Հայաստանի թագուհւոյն հետ ամուսնաւոլու հրառերեց։ Բայց Վեռնի անակնկալ երեսյթն այս խորհուրդը ջնջեց։ Մալեք-էլ-էշրէֆ-Շաբան Եղիպտացին։ տեսնելով Հայաստանին վերջին ծայր համելը, մի բանակ զրկեց 1374-ին, նրան վերջին հարուածը տալու։ Շատ քաղաքներ, որ արդէն հաղամ անուել, էլի առնուել կործանուել և աւարի էր առնուել զրեթէ առանց զէմ զնելու հեազանդեցան։ Թաղաւորը իր ընտանիքով կապան բերդին մէջ վասկուած։ ինն ամիս պաշարուած մնաց, բայց յետոյ սովուց նեղանալով անձնատուր եղաւ և Եղիպտան տարուեցաւ ուը անդ բանտ զրուեցաւ մինչեւ 1382։ Վեռն իր գերութե-

Նից Գամստիլիոյ Յովհաննես Թաղաւորի օդնու թեամբն աղաւակաւ, և գահիրէից Սովանիա դնաց իր բարերարից շնորհակալ լինելու : Այն տեղ իր աստիճանին վայել և իր թրշտառութեանց փոխարէն պատռով ընդունուեցաւ : Այն տեղաց երեք տարուց յետոյ Ֆրանսիա դնաց, այս տեղ էլ կարուլու Զ. նոյն պատռով Դնդունեցաւ : Սուրբ Անտոնի պալատը, Ռուրի Դիտիսիոսում, նրան տուուեցաւ մեծ թոշակով : Ֆրանսիոյ թաղաւորը նմանապէս նրան խոստացաւ, որ երբ Անդղիոյ գէմ ունեցած պատերազմը կվերջացնէ . իրան հարկաւոր եղած միջոցները կտայ իր թաղաւորութիւնը ձեռք բերելու : Վեռն՝ Աարօլու Զ.ի հետ ունեցած յաճախ խօսակցութեան մէջ, նրան այս երեկելի խօռքիրն է ասել : « Թէ արևելեան քըրիստոնէից փրկութիւնը Ֆրանսիոյ և Անդղիոյ բարեկամութենից է կախեալ » Առն Ֆրանսիոյ թաղաւորին հաւանութիւնը խնդրեց և ստացաւ Անդղիա դնալու և աշխատելու, թէ որ կարէլի է երկու կողմանէ խաղաղութիւն անել : Անդղիացւոյ աղջը մեծ համակրութեամբ ընդունեցաւ Վեռնին և խորհրդարանը հաւան կենալով նրա առաջարկութեանցը, Բուլոնիումը դեսպաններ յուղարկեց Ֆրանսիոյ դեսպաններուն հետ խաղաղութեան պայմանների վրայ խօսելու . Բայց բանակցութիւնները դադարեցան առանց մի խաղաղական հետեւանը ունենալու :

Վեռն տեսնելով, որ իր յոյսը պարագ ելու էլ իր երկիրները ձեռք բերելը մտքիցը հանեց և իր կենացը մնացածը բարեպաշտութեամբ և Աստուածալութեամբ անցկացնելու դործածեց, կրկին անդամ Սովանիա<sup>1</sup> դնաց, ուր տեղ կաւուածներ ուներ և էն տեղաց էլի եկաւ ու Ֆրանսիոյ հողին

1 Ճիշ-Գաւիդ Գառնդալէդ Պ Աւիլտիր պատմութեան մէջ Վեռնի համար ասում է, թէ երկար ժամանակ մնաց Սեկովիում և իրքեւ Մատրիչի իշխան մի կարգադութիւն արտւ 1391-ին : Պարսն-Դը-Բովարու նմանապէս երկու նոմակ հրատարակած ունի Արագոնի թաղաւոր Պետրոս Դ.ին, որնոր զրուած է 3 Սեպ. 3 Հոկ. 1380-ին, մինը Եղիպատոսի Սուլթանին եւ միւսը իր ծովակալին Վեռն Զ.ի աղատութեան համար, Այս հատուածները թիւն հետաքրքրական են Վեռնի առանձին կեանքը ճանաչելու համար, առկայն ամենիւն լոյր շեն տալ Հայաստանի պատմութեան վրայ :

վրայ մեռաւ : Աւոն Փարիզ մեռաւ 1393 Նոյնմբեր 29-ին և  
Ակղեստինեաց վանքումը թաղուեցաւ, ուր տեղաց Յեղափո-  
խութեան ժամանակ ոսկրները Սուրբ Գիոնիստուխ թաղաւ որա-  
կան դերեզմանոցը տարին : Բոլոր Փարիզ նրա թաղման վրայ  
մեծ պատիւներ տուաւ : Ժուլինալ այսպէս է խօսում այս մաշ-  
սին ։ «Հայաստանի թաղաւորը որ երկար ժամանակ մնացել  
էր Ֆրանսիում, լու և բարի վարքով իշխան և ոլարկեշտ քը-  
րիստոնեայ էր, վախճանեցաւ և գերեզման դրուեցաւ սպիտակ  
հանդերձներով : Նրա թաղմանը գաղին իշխաններ և պա-  
րոններ և ժողովուրդ : Աւոն կահ կարասիքի կողմանէ հա-  
րուստ էր, վասն զի իր դալիս շատ հարստութիւններ բերաւ  
հետր, որոնք չորս մասի բաժանեց : Մինն իր ունեցած քը-  
նական որդւոյն տուաւ, միւսը մուրացկաններին, երբորդը իր  
մարդկանցն ու սպասաւորներին և չորրորդ մասը իր տանը  
տնտեսին և վերակացուին : Աւոնի վրայ շատ ցաւեցան նրա  
բարի վարքին և անոյշ խօսքին համար :

Աւոն մեռնելիս, Անդղիոյ թաղաւոր Ռիքարտոս Բ-ին, իր  
կոտկակատարը նշանակեց Լուսինեանց Հայաստանի Ֆրանսիացի  
դերդաստանին ընկելուց յետոյ . Կիպրոսի թաղաւորները Հա-  
յաստանի իջաղաւորի անուն առ ին իրանց վրայ, որնոր մի  
դարւ չափ կրեցին : Հինգետասաններորդ դարուն մէջ, այս  
դերդաստանի ժառանգը Հայաստանի թաղաւորութիւնը վե-  
նետիկեցւոց թողուց : Յետոյ Լուսինեան ցեղից մի իշխանուհի  
Սուոյայի մի դքսի հետ ամուսնանալով, Պիէտոնի թաղաւորնե-  
րըն իրանց տիտղոսին վրայ Կիպրոսի, Երուսաղէմի և Հայաստանի  
թաղաւորի անունն էլ աւելացրին : Մի քանի ծովեղերեայ  
քաղաքներ, որք են Սկավենիա, որնոր Աւոն Բ. Ասալնջականաց  
տուաւ, ինչպէս նաև Անտիոքէտան և Սիդինոն քաղաքներն էլ  
Աւոն Ա. Հռոմեականաց տական և կորիկոսն, Կիպրոսի  
թաղաւոր Պետրոսին, մի քանի ժամանակ քրիստոնէից ձեռը  
մնացին, բայց հինգերորդ դարու վերջերումը նրանց ամէնքն  
էլ Խոլրախ Պէտ անուն Քարամանը կոչուածն առաւ որու-  
սերնդի ձեռիցն էլ Օսմանցիք առին, և այն ժամանակից սկսած  
Հայաստանը Թուրքաստանի մի գաւառ դառաւ :

Ի վերջոյ, այս երկիրը հետզհետէ Եղիպատացւոց Թիւրք-

մէններու. և թու ըքերու աիրապետութեան տակ անցկենալով,  
ասպարէղ եղաւ տգիտութենից, մոլեռանդութենից և պա-  
տերամներից յառաջ եկած ամէն տեսակ թշուառութեանց և  
աղէտքներու : Վաթունեհինդ քաղաքից և բերդից, որոնց ա-  
նունը պատմութիւնը պահպանել է, որոնք ամենքն էլ շատ քիչ  
ծաղկած. բազմամարդ և վաճառշահ քաղաքներ էին նու բե-  
նեան թագաւորութեան ժամանակ, հաղիւ տաս կամտասնու-  
հինդ հատ մնացել է, մնացածներն ու բիշ բան չեն լնծայել  
մեզ, բայց միայն տխոր աւերակներ <sup>1</sup> :

Հոյք երկար ժամանակ նգիպտացւոյ. Պարսից քուրդե-  
րու, Թաթարներու և Թիւրքմէններու և այլոց բռնութեան  
տակ հեծեցին: Մի դար սմբողջ 1233-ից մինչև 1340 մեծն  
Հայաստան մի բնդարձակ դաշտ եղաւ, ուր տեղ ջարմաղան  
Ճէլալէտափն և ուրիշ հիւսիսային Ասիոյ Վանի ալանիներն  
նահեղ պատերազմներ էին անում: Թիմուրլէնի 1387-ին Վանն  
առաւ և նրա սրածայր սորիցն ի վեր բնակիչները գլորեց :  
Սիրաստիան առաւ, որուն Հայ զօրքերը կենդանի կենդանի  
թողել տուաւ : Խակէնտէր-Քիւրոր Շահ Արմէն ասուեցաւ,  
և Հայաստանի հողն արիւնով շատեց : Առւլթան Մէհմէմմէտ  
թ. 1473 ին Սէլիմ Ա. 1514-ին և Մուրատ 1575-ին շատ ան-  
գամ Հայաստան մտան և սոսկալի պատերամն' լուլ Պարսից հետ  
իրարու ձեռից Հայաստանը քաշքշեցին : Սոսկալի սովեր, ահ-

1 Ահուսափիկ, այս շրջանիս տարիզից Սմբատին տուած ցուցակը Հա-  
յաստանի քաղաքներան եւ բերդերուն: Սիս, Տարսոն, Ատանա, Ա-  
նարդարա, Միախա կամ Մոպսուէտիա, Այաս, Հռոմելայ, Բարձր-  
քերդ, Լամրրոն, Ճէրտուս, Ճեքեր, Բաչերի, Համս, Սարւանտիկիւր,  
Հարուն, Սմանքալ, Հաճին, Անգուլպոտ, Թորանքա, Բէրդուզ, Անէ,  
Գուտ, Փորնուս, Կապան, Ճանձ, Խոտփիկ, Մաղուտ-Խաչ, Ամուտ, Թիլ,  
Թէլբաս, Վանէր, Գուպէտար, Մոլէսէն, Բուհիքս, Առւլւա, Պա-  
պարօն, Բերիկ, Պէրօկան, Սինստ, Ատարոս, Վորիկս, Լաւզատ, Ճա-  
մանկա, Ղամոս, Անամօր, Նոր-Բերդ, Անտուլ, Գուպա, Մաղաւ, Սիկ,  
Մանոլղաթ, Ալար, Լակրաւէն, Աղոլ, Կոտրատ, Մոնթաղ, Գոչ, Բէ-  
հեղնի, Ճէլքնոց, Քուառով, Աշնորտ, Մանէլ, Պէնակ, Կիրոն, Պէրէն-  
տէ, Արլաստ, Արարիսոս, Կոկսոն, Մարաչ, (հներից Գերմանիկոս) Խա-  
ռոս, Մալլոս, Կարս, Կորիկոս, Սելիվլիա, Էրմէնէք, Վահկայ, Ունի,  
(այսօք Ջէլթուն) Անթաղ, Անտիոքէտա, Սլզինոն, եւ ուրիշներ:

ո ելի կոտորածներ, քանդումն կործանումն դրոշմուած յաղթողի և յաղթվողի ճանապարհների վրոյ. Յահ Աքրաս Ատրպատականի մէջ թուրքերու ընթացքին գէ ան առնելու համար, մի սոսկալի խորհուրդ յղացաւ. այն է Երասխ դետի դաշտը մի ընդարձակ անապատ շինել, և արաւ էլ: Երեան, Նախիջեան Օրտուպատ, Աղուլիս, Զուղա բազմամարդ և վաճառաշահ քաղաքները հարիւրաւոր գիւղերով և աւաններով. 1604-ին կը բակի առուեցան: Պարսից Յահի անդութ հրամանովը, նըրանց դաշտերը, այդինուրը, արտերը բոլորն էլ կործանուեցան քանդուեցան և 25,000 չայ բնտանիք բռնադատուեցան իրանց բոյնը թողելու և գնալու Սպահանը, Շիրազը և Համադանը Լարիստանն ու Ավլանիստանն բազմացնելու. ուր տեղաց այս գաղթականները արևելեան Հնդկաստան, Չինաստան, Մալայայի կղզին, Սումատրա և Ճավա կղզիները տարածուեցան:

Տասնութեովներորդ դարու սկզբումը Հայաստան Պարսկաստանի և Տաճկաստանի մէջ բաժանուեցաւ: Արփայ-Չայը երկու ահերութեանց սահմանն եղաւ: Իուսաստանն տասնեւթերորդ դարու վերջերը, կամաց կամաց Կովկասից անցկացաւ քշեց Փաքը առ Փորք Պարսիկներին և Թուրքերին և մեծին Հայաստանի բերրի նահանդներու<sup>1</sup> վրայ տիրեց, Գանձակի (որ Ռաները Եղիսարելորու անուանեցին). Նուխիի, Շուշիի, Ասկուլիսի, Կումրիի, (Ռաներից Աղեքսանդրապոլ), Արևանին, Օրտուպատին, Աղուլիսին, Նրանց 1,250,000 բնակիչներովը, որոնց հինգ հարիւր հաղարը Հոյք են:

---

1 Գուգարք, Ուտի, Արցախ, Պալատկարան Ախոնիք, Նահանգներն ու Արտրատ՝ Վասպուրական և Տայ ո նահանդներուն էլ մեծ մասը.

## ԵՕԹՆԵԲՈՐԴ ՇՐՋԱՆ

Հայոց դաղթականութիւնը :— Հայտանի անքնակ և աւերակ դառնալը :

— Հ Յ Ա Ռ Մ Ա Ց Ք Բ —

ԶԱՐՄԱՑՔ և ուշադրութեան արժանի բան : Քանի որ Հայք բազմաստուածեան են ըլնում, իրանց ծննդական երկրին կապուած են մնում : Ոչ ուրիշ երկիր են դաղթում և ոչ էլ իրանց հայրենիքից դուրս են դնում : Ընդհակառակին Հայտաստան իրա մէջ անբաւ Հրեայ, Քանանացի, Ասորեւտանցի Հնդկաստանցի, Չինացի, Ակիւթացի, Աղիսպացի, Ասդաստանցի և ոյլ դաղթականներ է ընդունում : Հայր թէ պէտ և վաճառականութեան հետ է ըլնում, սակայն պինդ է մնում իր հայրենական հողին վրոյ : Բայց երբ քրիստոնէութիւնը Հայութան մրտանում և հաստատուումէ, նրա բնակիչների բարոյական վիճակը կարի զգալի կերպով յեղափոխուումէ : Հայոց ազգին մինչեւ այս ժամանակ ուրիշ մարդկային ցեղերու վրոյ ունեցած տուլութիւնը, ինչպէս որ ամէն անքաղաքակիրթ ազգերու բնաւորութիւնն է, աներեւոյթ է ըլնում : Հայր հասկանումէ քրիստոնէական եղբայրութեան սկզբունքը ու հեշտութեամբ աշխարհաբնակ է ըլնում, մոռանալով շուտով իր հայրենի իրեկիրը և աւելի տարագիր ըլելէ սիրում իր հայրենիքից, քանիթէ իր երկրում իրան պաշտպանելը, աշխարհիս բոլոր կողմերն իրան մի բնական հայրենիք է թուում, միայն թէ կարող ըլնի ազատօրէն իր նոր կրօնն ու հաւաքը դաւանելու կեանքը պահպանել : Քրիստոնէութեան չորրորդ դարու սկզբ

բունն էր մտել Հայաստան, վախ սուն տարի յետոյ Հայոց գաղթ  
թականութիւնն էլ սկսումէ : Մողութիւնը, որնոր հին Պարս-  
սից և Հայոց հասարակ կրօնն էր և այս երկու ազդերու ըն-  
կերական և քաղաքական շահերն իրար հետ ամուր կապովն,  
էլ Հայաստանից վերացել էր : Քրիստոնէութիւնը մոգու-  
թեան տեղը բռնելով այս կապերը խորտակել էր և Հայը Պարս-  
սից հեռացնելով արևելքի ջունաց էր մօտացրել : Շատ ան-  
գամ անօդուտ փորձեր արին Պարսից թաղաւորները Հա-  
յաստանն իր նախնեաց կրօնին դարձնելու<sup>1</sup> : Վաղարշապատ,  
Արտաշատ, Գուին, Վան, Նախիջեան և ուրիշ բազմամարդ  
քաղաքները, Շապուհ բ. և իրա նախորդները շատ անգամ  
առին չորրորդ դարումը և նրանք հիմնովին քանդելով՝ նը-  
րանց բնակիչների մի մասը կոտրեցին և մի մասն էլ ըլ-  
ուով 700,000 զերի տորոտն<sup>2</sup> բազտրիացւոց, Պարթեաց և Ա-  
րեաց աշխարհներումը: Հինդերորդ դարումը, Հայկական թա-  
գաւորութեան կործանելուց մի փոքր յետոյ, Հայաստանի և  
Պարսկաստանի մէջ մի կրօնական պատերազմ բացուեցաւ, ոք  
էր մոգութեանն ընդդէմ քրիստոնէութեան և որնոր մի դա-  
րուց աւելի քշեց, մինչեւ որ Պարսկաստանն էլ մահմետակա-  
նութեան տիրապետութեան տակն ընկաւ : 450-ից մինչեւ 550  
Հայաստան, ոչ թէ միայն իր որդւոցը թանկադին արիւնովը  
ոռողուեցաւ, այլ նաև իր բնակիչներին մեծ մասը կորցրուց  
որոնք ստիպուեցան գնալ Մազանդարան, Խորասան, Վէ յշարուր  
և Խուժաստան բնակելու :

Հայաստան, այսպէս Պարսից ձեռքով դարտակուելով իր  
բնակիչներից, յանկարծ եօթներորդ դարումը նրանց ոլես մի  
ահարկութչնութեան պատահեցաւ, այն է մահմետականու-  
թեան, որնոր Արաբիայում ծաղեցաւ : Ղեռնդ, որուն պատ-  
մութիւնը հրատարակեցինք, առումէ, երես 8, որ Արաբները  
զողթան, Նախիջեան, Տարոն և Գուին դաշտուները տռնելուց

1 Մոլոէս Խորենացի պատմութիւն Հայոց զբ. Գ. Պ. ԼԶ.

2 Մինակ Արտաշատ և Վան քաղաքներից, ըստ վկայութեան Փառու-  
տոս բիոգանդացւոյն զբ. Գ. Պ. Ծէ. եւ Թովմաս Արծրունոյն իր,  
68, 73,000 զերդաստան են դերի տռել, որոնք ամեն մինը 6 հոգիից  
հաշուելով, 458,000 հողի կանէ :

յետոյ, Հարպաւոր գերիներ տարան Արարիա և Ասորիք։ Դուինը միայն 35,000 զերի է տուել : Բուղա Արաբացւոց Աշխագորուն Եմիրը 850-ին Հայտառանի մէջ այնքան մարտիրոսներ տրաւ, որ Ներսն Հռովմայեցւոց կայսրութեան մէջ բոլոր իր տէրութեան ժամանակ կարող չէր եղել անել : Դուինը նախիջևանը, Վանի, Դարիոնս և որիշ շատ քաղաքներ բոլորովին անմարդի և անբնակ դառան, անթիւ և անհամար Հայք տարուեցան Եղիպտոս, Արարիա, Պաղեստին, Ասորիք և Բարեխաստան և այլ տեղուանք :

Այս տարագիր եղող Հայերուն բազմութիւնը պարտաւորեցուց Գրիգոր Բ. կաթուղիկոսին, որ Եղիպտոսում Ասորիքում, Պաղեստինում մի մի ետիսկոտութիւններ Հաստատէ մետասներորդ դարումը, Հայոց Հոգեւոր դաստիարակութեան Համար : Այս Հաւատաքիմ աւանդութեան նայելով, Եղիպտոսում Հաստատուած Հայոց թիւն այն ժամանակումը, 30,000-ից անց էր կենում :

Արեւելեան Յոյելը Պարսիկներից և Արաբներից ետ չմնացին ոչինչ բանումը Հայքը բռնադատելու, որ Երանց երկրից գուրս զան : Հայտառանի, Պարսից և Յունաց մէջ բաժանուելոց հետէ, որնոր աեղի ունեցաւ չորրորդ դարու վերջերումը, Յունաց կայսրներն իրանց ձեռիցն եկած ամէն հնարքներն ի դործ զրին, Հայերը Յունաց հայրենեաց հետ բնաւորելու : Կայսրները ազգային լեզուի ուսումն և պարսկահայոց կաթուղիկոսին իր բոլոր ազգին վրոյ ունեցած իշխանութիւնը բանեցնելու իրաւունքն էլ արդիլեցին<sup>1</sup> : Աւստի Հայ ազգից անհամար բազմութիւն ստիպուեցաւ 452-ից, որ ժամանակ Քաղքեղոնի ժողովն էլ եղաւ, Յունաց կրօնին հետեւիլ, սրանց թիւը միշտ աճելով աճելով էր գնում մինչև երեքտասաներորդ դար և այս Յունաց հետ միաբանող Հայերն ծանօթ են պատմութեան մէջ Հայ-Հոռոմ անունով : Գրեթէ ամէնքն էլ բուն Յունաց մէջ կորան կամ աներեան եղան : Նրանց մնացորդներն այսօր, որոնք շատ քիչուոր են Անսարիա, Ակն, Թուրութ, Երզրում և Կոսդանդնուպոլիս կրնակին և բոլորովին նոյն և մի լեզուն, նոյն և մի բարքն ու վարքը, նոյն և մի սովորութիւնն

1 Առվտէս Խորնացի, պատմոթիւն Հայոց զր. Գ. Պ. Շէ.

ներն ունին բուն Հայոց պէս, միայն յունական կրօնը կդառ  
անին և Պատրիարքից ունին կախում:

Բիւզանդիան արքունիքը չքաւականալով կրօնի հետ միաւ  
սին և Հոյկական աղղայնութիւնը ջնջելուց, ամէն հնարք  
ի գործ դրաւ այս աղդը հեռի և օտար երկիրներումը տես-  
դափոխել, օրինակի Համար, կոսդանդնուպօլիս, Մադեդոնիա,  
Նպիրոս և Պուլզարիա և ընդհանրապէս այսօրուայ Թուրքաց  
նւ բոպիումը :

Չորրորդ դարուց սկսած<sup>1</sup> ամէն անդամ, որ Պարսից կրօ-  
նամութիւնը խստանումէր քրիստոնեայ Հայոց վրայ և երբ  
Հայք չեին կարողանումիրանց Հարստահարողներին դէմքնել,  
Յունաց երկիրն էին դաղթում: Այսպիսի տեղափոխութիւնները  
շատ անդամ կրկնուեցան մինչև Յուստիանոս Բ-ի կայսրութեան  
ժամանակ: Այս կայսրը թէ իր մայրաքաղաքի աշխատա-  
ռէր բնակիչներն աւելացնելու Համար, կամ թէ Հոյաստանը  
անմարդաբնակ անելու Համար, Մէլիտինոյ Հայքը մի մասամբ  
կոսդանդնուպօլիս և մի մասամբ էլ Թրակիա վոխադրել տուաւ  
Մօրիկ, Հայաստանի ապիրախտ որդին և արեելեան կայսր:  
582-ին ըստ Սէրեսոսի<sup>1</sup>, Թրակիան Հայ դաղթականներով լքցրուց  
և որոնցից վաշտեր կազմեց Տանուքի վրայ Աւարաց դէմպատե-  
քազմելու, կոնսդանդին է, Գոսլրոնիմոս երբ ութերորդ դարումը  
կըզրումն առաւ, բարձր Հայոց զլիաւոր քաղաքը քանդելուց  
և կողովտելուց յիտոյնրա միջից Հայերն բազմութեամբ հա-  
նեց և տարաւ իր կայսրութեան այլեւայլ տեղուանիքներում  
ցըռեց<sup>2</sup>: Շապուհ Ամառունին, Արաբներու տուած նեղու-  
թենից զայրացած, մի և նոյն տարի Յունաց երկիրն անցկացաւ  
իրան հետ միասին 12,000 Հայով մի նոր դաղթական տանե-  
լով<sup>3</sup>: Վասիլի մի ուրիշ Հայկազն կայսր Յունաց, տասներորդ  
դարումը անհամար ընտանիք տանել տուաւ Թրակիա, երկիր  
գործել տալու և պատերազմ անել տալու ընդդէմ Պուլզա-  
րաց, Ռուսաց և Մաճառաց<sup>4</sup>: Այս դաղթականութիւնը,

1 Երես 83 և 89:

2 Դեւոնդ, Երես 126:

3 Նոյնը Երես 162:

4 Ստեփաննոս Ասովիկ զր. Գ. Պ. Ե.

տոսներորդ դարումը, այն տատիճան աւելացել էր, Պլուտո-  
տիումը, Թեսազոնիկում և Մագնղոնիում և իրանց ազ-  
գեցութիւննէլ այնքան մեծացել էր Պուլղարիոյ քաղաքական  
գործքերու մէջ, որ Սամուէլ Հայ իշխանն, որ Դէրջան<sup>1</sup> դա-  
ւառումն էր ծնել, Պուլղարաց թագաւոր ընտրուեցաւ<sup>2</sup> և եր-  
կար ժամանակ այս երկիրները վասիլ Բ-ի զէմ պաշտպանեց,  
անշուշտ, այս գաղթականների սերունդներն էին, որոնք այն  
քան նպաստամատոյց եղան Փրեղիրկոս կայսեր և Գերմանացի  
խաչակիրներուն, եթք 1189-ին Յունոց ձեռից<sup>3</sup> Փիլիպպէ քա-  
ղաքն առ ին :

Այս երկիրներից Հայք վենետիկ, գենովա, Պիզա, Հռովմ  
և Վաճառստան, Լիչաստան և Ռուստան անցկացան : Մի  
առանգութեամբ, որնոր զուցէ թէ Ճշմարիտ ըլնի, առուումէ,  
որ Ռուբենստան թագաւորութիւնն ընկնելուց յետոյ, բազմա-  
թիւ Հայք մինչև 30,000-ի չափ ընտանիք Կիպրոս, Հռովմու-  
ն կրետէ, կղզիներուն անցկացան և այս տեղերից Խտալիս զր-  
նացին : Յետոյ երբ Խըրըմը Օսմանցւոյ ձեռ ին է անցկենում:  
այն տեղաց դուրս եկածներն իրանց խոռնելով աւելանումն և  
Խտալիոյ վաճառաշահ քաղաքներու մէջ տարածուումն ի-  
րանց հետ մացնելով նաև այն տեղ իրանց վաճառականու-  
թիւնն ու Ճարտարութիւնը : Այս Հայերն իրանց Խտալիոյ  
առած ծառայութեան փոխարէն, որնոր իրանց գործունէու-  
թեամբն ու վաճառականութեամբը հարստացրին, մի զազա-  
նական կրօնային բռնակալութեամբ և մի մոլեգին մոլեռան-  
գութեամբ ընդունուեցան, տասնութերորդ դարու վերջերում  
և ոչ մի ընտանիք անգամ այն տեղ չէր մնացել. ամէնքն էլ  
կորել կամ աներեսյթ էին եղել : Իրանց եկեղեցիները, որոնք  
իրանց բարեպաշտութեան յիշատակարեններն են, Հռովմ, Նա-  
պոլի, Լիվորնո, Վենետիկ, գենովա Բատուա իրանց եկամանե-  
րով կանգնած մնացած են մինչև այսօր և Խտալացի կղերը

Տ Հին Քոէրքոէն քաղաքը Երզրումի մօտ :

2 Ատելիաննոս Առողիկ զր. Գ. Դ. Եֆ.

Յ Նիկէ, Խսահակ, զր. Բ. Թիւ 4. Երես 258, Պատմոթիւն քրիս-  
տոնէոթիւն Ֆէօրի Արքայի հատ. Դ. Երես 785, 786.

նրանց օրինաւոր տէրերը աներևոյթ անելուց յետոյ, տէր է եղել նրանց և ի փառ ս Աստուծոյ :

**Տեղեք կայ կարծելու.** որ Քրիստոսից յառաջ՝ Հայք կասպից ծովուն և Սև ծովուն հիւսիսային եղերքներուն վրայ վաճառատեղիներ ունեցած ըլնին Տիգրան ք.-ի և մեծին Միշրըդատայ աշխարհակալութիւններից յետոյ : Սարտրոն<sup>1</sup> խօսումէ Հայոց այս ժամանակներուն արած մեծ տռուտուրի մասին Սարմատացւոց և Աիրաքացւոց հետ, որոնք Տանալիս և Ռազ քաղաքներու մն էին բնակում Օրսիների հետ, որոնք Կասպից ծովու հիւսիսային արևելքումը բնակող ազդ էին<sup>2</sup> : Հայք այս ազդերուն Հնդկաստանի և Բարելաստանի թանկաղին ապրանքներ էին վաճառում : Այս առևտրական յարարերութիւններն աւելի զարգացում օտացան, երբ քրիստոնէութիւնը Հայոց քարողիչներու ձեռքով Աւղանիստան մտաւ, և այն տեղաց էլ Հոնաց աշխարհը : Հինդերորդ դարուն սկրդրումը Հայոց և Հոնաց մէջ մի յարձակողական և պաշտպահողական դաշնակցութիւն էլ կար<sup>3</sup> : Յաջորդ դարումը Պարսից թագաւոր Խոսրովու դէմ ապսատմբող Հայք, բազմութեամբ կովկաս սարերից անցկացան ու զնացին միացան Խաղանի կամ Հոնաց թագաւորի բանակին հետ<sup>4</sup> :

**Աղէքսանդր,** Ռուսիոյ մեծ դուքսը, որ Քիէվէր կենում, Վեհաստանի հետ պատերազմ ունենալով, 1062 թուին Կասպի Հայքը մի հաճոյական նամակով իրա օդնելու է կանչում: Վարամղին Ռուս պատմագրի խօսքին նայելով, Հայոց թիւր բաւականին մեծ է եղել †115-ին Քիէվումը, Արևլատիմիր Մոնոմախոսի թագաւորութեան ժամանակ : Հայք, բացի վաճառականութեան և զինուորական արհեսներու հետ զբաղած լինելուց, Ռուսիոյ արքունեաց ամենալաւ բժիշկներն են եղել<sup>5</sup>:

1 ԺԱ. 773 :

2 Տիեզերական աշխարհազրութիւն Մալտ Բրէօնի, հատ. Ա. եր. 111:

3 Եղիշէ. Մովսէս Խորենացի, պատմութիւն Հայոց դր. Բ. Պ. ԶԼ. ԶԼ:

4 Սէրես երես 109 :

5 Հատ. Բ. Պ. ԶԼ. Ե. երես 217 :

Հայոց եկեղեցականք, 1157 թուին, Ռուսաց մի քանի առանդապիտների դէմ Քիեվումն արած ժողովքներու մէջ մասնակից են ըյոււմ<sup>1</sup> : Պուլղար քաղաքի աւերակներու մէջ զբանուած անթիւ զերեզմանաբարերն, որնոր Պուլղարներու հին մայրաքաղաքն է Խաղանից 90 վերստ հեռի, հայկական արձանագրութիւններով վեցերորդ, իններորդ և երկոտասաններորդ դարերու թուականներն ունին իրանց վրայ, և հաստատումեն. Հայոց շատ հին ժամանակներումը այս սառուցեալ գաւառներումը դտնուելը<sup>2</sup> : Ոսկեղահ կամ Ոսկեխումը ատուած Թաթարաները, երկոտասաններորդ դարումը, մեծին Հայաստանին տիրելուց յետոյ, այն տեղաց անհամար գաղթականներ դուրս առան, որոնցմով Սարայ, որնոր Առկայ գետին բերանը քաղաք է, ինչպէս նաև Աժտերխան, Խաղան, Նեղենի նոյն գետին վրայ գտնւող քաղաքները շնացրին : Մամայ Թաթարաց խանը, որ չորեքտասաններորդ դարումը Ռուսիոյ մեծ դուքս Դեմետրին հետ պատերազմեցաւ, իր բանակին մէջ մի քանի դունդ Հայոց<sup>3</sup> զօրք ունէր. Հայ վաճառականները Մոսկուայում և Բէլկորստի թաղումն իրանց բնակատեղին ունէին, ուր անդ մարդարիտ, խնկեղէն, լեղակ, համեմանք և ուրիշ Պարսկաստանի և Հընդկաստանի ապրանքներ էին ծախում և Ռուսաստանից էլ թանգարի մուշին մուշակներ և մետաղներ էին առնում ուրիշ երկիր տանելու համար<sup>4</sup> :

Խըրըմ, դեռ երկոտասաններորդ դարումը Գենովացիք չոխած՝ Հայերով լիքն էր, որոնք շատ հին ժամանակներից հետէ մեծ Հայաստանից և փոքր Ասիայից և Պուլղարիայից հետզհետէ եկել էին : Քէվէ կամ թէոդոսիում միայն 100,000 Հայ կայ եղել, թէ որ կարող ենք հաւատալ մի պատմական յիշատակարանի, որնոր նոր Նախիջևանի եկեղեցւոյն մէջ պահուած է : Սարայի, Աժտերխանի և Խաղանի Հայերը, Թաթարներից նեղութիւն կրելով, զէնք առին իրանց ձեռին և երեքտասան-

1 Յիշատակարանաց ժողովածոյ Հայոց պատմոթեան համար, հատ. երես 283, 284 :

2 Նոյնը – երես 284, 285 :

3 Գարամզին հատ. Ե զւ. Ա. երես 64 :

4 Նոյնը – հատ. Ժ. զւ. Դ. երես 211 :

երորդ դարու վերջերում Խըլլիմ անցկացան. ուրիշ դադիմականներ էլ Սարայից եկան չորեքտասաներորդ դարու վերջերումը. Երբ որ Ոսկեգահ ասուած Թաթարներու պետութիւնը կործանեց Տիմուրլենկ : Այս Հայերը Սուտակ, Քէֆէ<sup>1</sup>, Թաման և Քարասու-պազար քաղաքներու մէջ Հաստատուեցան: Վաճառականութեամբ արտաքոյ կարգի յառաջացաւ. Խըլլիմ, որ յառաջ այնքան աղքատ էր Հարստանալով՝ Ասիոյ և Եւրոպիոյ ապրանքներու ամբարանոցնեղաւ: Երկու առաջնորդութիւն Հաստատուեցան այն տեղ Հայոց անհամար եկեղեցիները կառավարելու համար: Հայք իրանց առևտրական դործողութեան շրջանն ընդարձակելով, նմանապէս իրանց դադիմականութիւնն էլ տարածեցին. և շուտով Կալիցիումը, Մամատաստանում, Գրանս սիլվանիում, Մոլուսիում, Վալաքիում, Բուգովինում, Լիճուտանիում, Բողովիում և Բանատում Հայերով լքցուեցան: Զերնովից, Կամենէց, Ատանիսլավով, Ամբէկ, Վարշաւաղլիստոր քաղաքներն եղան Հայոց համար բնակատեղիք :

Երբ Օսմանցիք Խըլլիմն առան, Հայոց մի մասը կոտորուեցաւ, ուրիշներն էլ նրանցից փախչելու համար, զնացին իրանց աղղայնոց հետ միանալու Լեհաստան, ուր անդ իրանց թիւը մինչեւ 40,000 բանիքի հասաւ, ինչպէս ասում է նոր Կալսիջեանումը պահուած ձեռադիր վկայաբանութիւնը: Լեհաստանի իշխանները, Վեռն Գանիկլովիչ, Գոողիմիր Գ. Սիդիմունդ և Վլատիսլաւ Գ. իրանց երկրին մէջ տոեառուն ու որչեստներն յառաջ տանելու համար. Հայոց կրօնի տղատութիւնը քաղաքացիութեան իրաւունք, և իրանց համար առանձին ըստ Հայոց օրէնքին մեծուոր և զտատոր ունենալու արտօնութիւնները տուին: Հայք դործունեայ վաճառական, քաջ պատերազմող և յաջողակ դործակատար Լինելով երկուդար և կէս Լեհաստանը, իրանց ընդունած հայրենիքն երկելի արին, որնոր յառաջ այնքան աղքատ էր:

Տասներորդ դարը վախճան դրաւ Հայոց երջակութեան, Յիսուսիանց ձեռքով մի անիրաւ և անխիղճ հալածանք եղաւ.

1 Պատմութիւն Տաւրիակոյ Բոկոյ; Մետրոպոլիտ Հատ. Բ երես 176, 177.

Հայոց դէմ։ Յիսուսեանք իրանց դժօխային բանսարկութեանց շնորհիւն իրքեւ թագաւոր իշխումէին այս երկրին վրայ և Նիքոլ անուն ամբարտաւան և ամբարիշտ մարդուն մէկը սիմօնականութեան զօրութեամբ իրան Աէմաղէրկի եպիսկոպոս կարգել տուաւ բայց իր հօտն իրան մերժելով, նա գնաց Յիսուսեանց մէջ իրան պաշտպանութիւն գտաւ և մի հալածանք յարուց Ներոնի հալածանքներուն նման Հայոց վրայ երբ նրանք իրանց զբաղմանցը հետ էին խաղաղութեամբ և Եկեղեցիներն ու ուսումնարանները փակուեցան, և կեղեցականները քշուեցան և Աստուածային ողաշտօնն էլ արդիլուեցաւ, ոչ մը կրրութիւն, ոչ թաղում և ոչ հաղորդութիւն եղաւ 23 տարիի չափ։ Աեհաց կառավարութիւնը միջամտութիւն առաւ օրինաւոր կերպով այս գործուն մէջ, և իր ողորմելի հըպատակներուն իրաւունքը պաշտպանել կամեցաւ, բայց Յիսուսեանք այս ժամանակներումն իրանց զօրութեան կատարն էին հասել։ Նիքոլ Եկեղեցիներու, հիւանդանոցներու և ուրիշ հիմնարկութեանց և եկամաւաներու վրայ բացարձակ աէր եղաւ։ Շատ Հայեր պարտաւորեցան թողել այս երկիրներն ու գնուլ թուրքերից տպասանարան փնտռել, որոնք շատ աւելի մարդասէր էին քան թէ այս կողծեցեալ և իրանք իրանց քըրիստոնեայ անուանալները։ Ալքսանդրա, Հոլլանդիա, Անգլիա և Բաւիէրտ այս զաղթականներից իրանց քաղաքներումն ու նեցան, նրանցից մնացածներն հաւան կեցան իրանց Եկեղեցին ուրաննելով Աեհաստան մնալ։ Այսօր մի քանի ողորմելի մնացորդներ են երեւում, որոնց թիւը հազիւ 25 կամ 25,000-ի կհասնին Աեհաստանի բաժան բաժան լինելոց յետոյ, Հայերը Աւստրիոյ տէրութեան տակն անցկացան և իրանց հին հարստութիւններն ու արտօնութիւնները կորցրին, մանաւանդ 1848 թուի յեղափոխութենից յետոյ։

Հայոց զաղթականները որ տեղ որ հաստատուեցան Յւրոպիում և Ասիում վաճառականութեամբ և արհեստներու հետ դրադած ընելով անգամ՝ առենելին անփոյթ չեղան զիտութիւններ էլ մշտիւ, որուն ապացոյց է այն անհամար տպարաններն, որ ամէն տեղ հաստատեցին։ Վենետիկու Հայերն

առաջինն եղան իրանց մէջ 1565<sup>1</sup> թուին տրաբան Հաստատուողները : Նրանց օրինակին հետեւեցան շուտով ամէն Հայերը ուրիշ եկիրներումը . 1567-ին Կոսդանովնուպօլսումը . 1584-ին Հռովմայումը . 1616-ին Լէմբէրիումը . 1624-ին Միլանումը , 1633-ին Փարիզումը , 1640-ին Զուլֆայումը , 1660-ին Ամստերդամումը , 1673-ին Մարսելիումը , 1680-ին Լէյբուիլումը . 1690 ին Բատուայումը , 1719-ին Կալկաթայումը և Մատրասումը , 1770-ին Էջմիածնումը , 1780-ին Ս-Պէտրոպուրիումը , 1790-ին նոր Նախիջևանումը , 1793-ին Աժտերիսանումը : Այս տպաքաններու մեջ մասի հիմնարկութիւնը Ոսկան վարդապետին ենք պարտական :

**Գրանոխաւմ** հաստատուած գաղթականներն իրանց տրապարաններովն երկար ժամանակ չմնացին , որանց կորչելու մասին մի Ճիշտ աելեկութիւն չունինք : Երեւումէ , որ կամ գուրսքշուեցան . կամ թէ ոչ ստիպուեցան իրանց եկեղեցին ուրանալու , երբ Նախիջևանու հրովարտակն ետ առնուեցաւ : Մարսելի մի փողոց , որ Հայոց անունովն է կոչուում միմիայն մնացած յիշատակարանն է : Այլևայլ ժամանակներումը քրիստոնեայ Եւրոպիում հաստատուած բոլոր Հայ գաղթականներից՝ Ռուսաստանիներն են միայն օրերը անարատ ալահողները : Բայց ստիայն ելեշատ նեղութիւններ կրել են Ռուս եկեղեցականաց ողիտութենից և մոլեռանդութենից , որոնք շատ անդամ Հայոց զէմանգթութիւններ և ստիպողական գարձեր անելու վարձեր են արել : Խննովիէնտիուար<sup>2</sup> Ռուս վարդապետը , մի ժողովքի մասին է խօսում : որնոր եղել է 1157 թուին Քիէվումը Ռուս եկեղեցականներից , որուն նպատակն է եղել քննել և գատապարտել ասումէ , մի մալորեալ Մարտիրոս անուն Հայու հաւաքը : որնոր յետոյ այրել են : Անտարակոյս այսպիսի պատճառներու պէտք է տալ այնչափ հազարաւոր Հայերու առերկոյթ լինելը . որոնք երկար ժամանակից հետէ Քիէվ և նրա շրջակայքումը հաստատուել էին : Ռուսաց տերութիւնը Պարս

1 Այս տպարանը միտթարեանցը չէ , որնոր 1715-ին հիմնուեցաւ զըրեիթէ մէկ ու կէս դար յետոյ հայնուվիմէական կրօնաւորների ձևոքով :

2 Նախաշակիլ եկեղեցական պատմաթեատր , Ռուսին . հատ . Բ . եր . 1881

կաստանի և Տաճկաստանի Հայոց հետ յառաջուայ ունեցած  
յարաբերութեանց մէջ բոլորովին տարրեր քաղաքականութիւն  
բռնեց : Մինչեւ այն ժամանակ անձնախնդիր և տիրապետա-  
կան Ռուսաստանը , անշուշտ յօդուա իր հարստութեան ,  
վաճառականութեան , Ճարտարութեան և իր ապագայ աշ-  
խարհակալութեան Առիոյ մէջ , տանուվեցերորդ , տասնու-  
եօթերորդ և տասնութերորդ դարերումը Հայոց սրաշտպանն ու  
բարեկամն եղաւ : Ռուսաստան մեծ մեծ խոստմունքներ տուաւ ,  
առատ առատ թոշակներ կազեց , արտօնութիւններ շնորհեց ,  
աղնուականութեան , ասպետութեան կարգեր բաշխեց , որպէս  
զե այս ազգին համակրութիւնն իրան քաշէ :

Սպահանու Հայ վաճառականաց ընկերութիւնը 1659-ին  
Ալեքսիս Միխայէլովիչ կայսեր անդամանութերով և սուտակներով  
զարդարուած մի ոսկի աթոռ դրիեց . Հնդկաստանի և Պարսկաս-  
տանի խնկենիներով առու շեղեններով միատեղ : Այս ընծայների  
վրայ , որուն այն ժամանակ 24,443 ռուպլի արժողութիւն ևն  
տուել . Ռուսաստանի և այս ընկերութեան մէջ մի առևտրա-  
կան դաշնագրութիւնն հաստատուեցաւ :

Այն ժամանակ Հնդկաստանի և Պարսկաստանի թանկա-  
դին ապրանքները սկսան Ռուսաստան գալ պարսկային խորշով .  
Սպահանի և կասպից ծովու վրայով : Նովկորոտ , Արխանկել և  
մի փոքր յետոյ էլ Բէտրուբուրկնոր Հայ դաղթականներ ունեցան  
հաստատուած իրանց մէջ : Հայք 1686-ին մի ուրիշ առևտրա-  
կան դաշնագրութիւն արին Շուէտի հետ : 1710-ին Սարար  
Վաղելիէֆ Հայազգին առաջին եղաւ թթի ծառը անկողը թէ-  
րէկ գետի ափանցը վրայ և այն տեղ առաջին մանարանը  
հաստատողը : Մեծն Պետրոս 1711-ին Մարտի 2-ին Հրովարտա-  
կով հրաման տուաւ ծերակուտին<sup>1</sup> սպաշտպաննելու Պարսկաս-  
տանի Հայերը և նրանց ամէն կարելի եղած օդուանները ցոյց  
տալ Ռուսաստան քաշելու համար մի ուրիշ հրովարտա-  
կով էլ 1717-ին Յունուարի 27-ին տուաւած . Պետրոս Ապրօյի  
անունով մեծ և պատուաւոր վաճառական Զմիւռնիայում Տաճ-  
կաստանի Հայոց Ճամբայ էր բայց անում դէպի Ռուսաստան : Մի

1 Ցիշատականոց ժողովածոյ Հայոց սպատմութեան համար . հատոր  
Բ երես 890 .

երրորդ ծշմարիտ բան էլ<sup>1</sup>, որնոր 1718-ին է եղել, հաստատում է, որ Հայք են եղել Առևտութեանում առաջին մետաքսարանարը հաստատովները և նրանցմով Առևտութեաց կերպաս շնորհ սուվեցնողները :

Մեծին Պետրոսի իմաստուն և նախառես քաղաքականութիւնը Առևտութեանի երջանկութեան համար սնրաւ հետեւանք յառաջ բերաւ : Հազարաւոր Հայեր և Հայութ, Պարսկաստանը և Տաճկաստանը թող տուին և Առևտութեան գնացին բնակեցան և իրանց վաճառականութեամբ, արհեստներովն ու երկրագործութեամբ ճոխացրին : Առփրաս Հայտղին, 1779 ին Կատարինէ Բ.-ին մի շողուն անդամանդ ներկայացրեց արտաքոյ կարդի մեծութեամբ և ղեղեցկութեամբ, որնոր այսօր կայսերական գաւազաննն է զարդարում : Մի ուրիշ անդամանդ նոյնուղիս երեելի գնով, Պոլոս Ա. կայսեր ներկայացրեց Աբամելիք Հայտղի իշխանը :

Կատարինէ Բ.-ի ժամանակ, 1779-ին 15,000 Հայ Խըրըմից զուրս եկան գոն զետի վրայ նոր Նախիջեան և Գրիգորուս պօլիս քաղաքները հիմնեցին, որոնց մէջ Պլիաւորապէս Հայք են բնակում իրանց առանձին դատաւորովն ու մեծաւորովն : Հայ գաղթականներուն թիւը Առևտութեանի ուրիշ քաղաքաներում օր ըստ օրէ աճեցաւ : Աժտերխանի Հայքն էին այն ժամանակ մինչև 5128, Վրդլարինը մինչև 4192, Մողղոկինը մինչև 2000 և այլն : Հայք առհասարակ նաւաշինութեանն էին պարագում կառպից ծովու նաւարկութեան համար, մետաքսագործութեան և Ֆրանսիական<sup>2</sup> կերպով ողե շինելու, այդեղործութեան և թթենի, պողատու ծառեր, բրինձ մշակելու հետ էին և մանաւանդ կովկասեան սարեցւոց հետ մեծ առուտուր էին անում :

Տասնեւիններորդ դարու սկզբիցը Առևտութեանն այեւայլ ժամանակ Տաճկաստանի և Պարսկաստանի ձեռից, մեծին Հայտութեանի մի քանի նահանգները խլեց, ուստի նրանց թիւը 1828—1830 թուին նոր գաղթականներով աւելացան : Պատս

1 Նոյնը հատոր Բ., երես 146—201 :

2 Այսպէսէ ցոյց առւած կայսերական հրովարտակումը, Տես Ժողովածոյ, միշատականաց Հայոց պատմոթեան համար հատ, Բ. եր., 90 :

քեւիչ զօրասկետը երզրումից, Կարսից, Պայտղետից և Թուալ-  
րաք քալէից 90,000 Հայ դուրս հանեց : Խոյից, Սալմաստից,  
Վորմիից, Գաւրիղից և Ապքուից, որոնք Պարսիկ քաղաքներ են  
40,000 : Այս կերպով այսօր Ռուսաստանի Հայոց թիւը 550  
հազարն անցկացաւ, որոնցից 50,000 Կովկասից գեներնեն և 500,000  
էլ դէսը Հայաստան Վրաստան և Շիրւան ցըռւած : Ճիշտ չը  
գիտացու իւ Կովկաս ու արերու Հայոց թիւը, սակայն 15,000-ից առ-  
ելի չորեք է ըլնիւ Հայք այն տեղ անկախ են և Զէրքէղների  
հետ միացած Ռուսաց դէմկապանազմին :

Այս սարեցի Հայերից 1838-ին Կովկասից դուրս եկան  
800 ընտանիքի չոփի և դնացին Ռուսաց սրոշտանութեան  
տակ գուրանի մօտերը Արմաւիր քաղաքը հիմնեցին :

— — — — —

## ՀԱՅՈՑ ԱՅԺՄԵԱՆ ՎԻՃԱԿԸ

Այս հին և մեծ ազգին մնացորդները, որոնք այնքան  
քաղաքական, ընկերական և բնական աղէտներից յետոյ առ-  
քեցան տասնու չորս դարու մօտ՝ տակաւին բաւականին դիմաց-  
կուն և զօրաւոր տարերը ունին մի նոր ազգի մարմին առնե-  
լու համար : Այս ազգը արտաքին և ներքին պատերազմնեւ-  
րու աղէտալի ազդեցութեան տակ մնալով, իր մասւ որական,  
բարոյական և բնական կատարելութիւններից շատ կորցրուց,  
և ամեն աշխարհակալ իր մօլութիւններից միուը նրա ճակատին  
վրայ գրոշմեց : Այսօրուայ և յառաջուայ Հայերուն մէջ անչոփ  
մեծ զանազանութիւն կայ : Առհասարակ հին Հայր աւելի հա-  
մարձակ, աւելի քաջասիրտ, և աւելի հայրենատէր էր, մինչ-  
զեռ մի երկարաժեք դերութեան մէջ մնալով, այսօրուայ Հայր  
գրեթէ մեծ մասամբ շատ հեղ, անհոգ, անզդայ, զզոյշ վախ-  
լուկ և դէղի եսկականութիւն դիմելու հակամէտ է : Առկայն  
այս աղէլը իր նախնեաց մի քանի առաքինութիւնները դեռ ևս  
պահումէ, իր քրիստոնէական կրօնին վրայ, որ շատ հաստատ է,  
միացրած է, մեծ քաղաքներից դուրս, քրիստոնէութեան առաւ-

ջին ժամանակու այ արժանի բարքն ու վարքը : Արողոցի ճառնապարհորդները՝ նաև նրանք՝ որ իրանց նախապաշտունքներով եւ իրանց մոլեռանդութեամբը կատաղի թշնամի հանդիսացելեն այս ազգին դէմ, այս կատարելութիւնները<sup>1</sup> չեն մերժել : Հայոց անձնութացութիւնը, հիւրասիրութիւնը, հաւատարմութիւնը շատ նշանաւոր են եղել :

Այսօր Հայք վեց տէրութեանց հպատակ են : Տաճկաց, Ռուսաց, Պարսից, Աւստրիացւոց, Անդղեացւոց և Հոլլանտացւոց : Տաճկաց տէրութիւնը մեծ Հայաստանի գրեթէ մեծ մասն և ամբողջ վոքքը Հայաստանն իր ձեռին ունի 3,100,000 Հայերով : Տաճկատանի Հայք դիմուորական ծառայութենից և քաղաքական պաշտօնավարութենից զրկուած ըլելով բոլորովին երկրագործութեան, վաճառականութեան, արհեստներու հետ են զըաղած<sup>2</sup> . այնպէս, որ Ասիոյ Տաճկատանի ցամաքային գրեթէ ամբողջ առուտուրն իրանց ձեռքով է կատարուում : Դրամական ամեն գործքերը բոլորն եւ Հայոց ձեռին է դանուում : Կառավարութեան պաշտօնավարութեան դրամանոցի, վառօթարանի երկաթեղենի, մեքենաների, ջաղացքի, մետաքսի գործարաններու ամենքն եւ Հայոց ձեռքով են անօրինուում : Առլութանի ճարտարապետն է Կարտողեատ Խալֆան Նոյնոպէս Հայազգի, որ հասարակաց շինութեանց պաշտօնէի պաշտօնն է կատարուում : Կոսղանդնուազօլսոյ ամենից վարպետ ոսկերիչները, ակնազործները, փորազրիչները, որ մնադիրները, քանդակակալործները, մեքենազործները գրեթէ բոլորն եւ Հայք են : Ամենամեծ Հայերից մինն որ Տաճկատանը տեսաւ, Խաղաղ Յարութիւնն է, որ դրամանոցին գլխաւոր անօրէնն էր և Սուլթան Մահմատին էլ սիրեկանը : Խաղաղ Յարութիւնն առաղջ և ուղիղ խելքով աղնուազդած և ողորմած մարդ ըլելով իր տիրոջը լիս վին վատահութեանն արժանի եղաւ : Իր առատաձեռնութիւնը ոչ սահման և ոչ խտիր էր ճանաչում ազգի և կրօնի կողը

1 Հայր Ահօնիէ, հաճոյական և հետաքրքրական նամակներումը հատ. Ա. երես 300—301 և 324.

2 Հայք, արեւելեան ազգերի և դոցէ թէ բոլոր աշխարհի ազգերի մէջ ամենից աւելի վաճառական են : Հաճոյական և հետաքրքրական նամակները հատ. Ա. երես 435.

մանեւ, Հայ, Քաթոլիք, Յոյն, Հրեայ, Ասորի, Տաճիկ իրա ողորմածութիւնը և առատաձեռնութիւնը վայելումէին : Իրա յատակ ծախրովը թէ կոսդանդնու պօլսումն ու թէ Տաճկառանումը Յունաց և Հայոց շատ եկեղեցիներ էլ շինել տուաւ, նմանապէս և շատ ուսումնարաններ իր տղգայնոցը կը թութեան համար և որոնց համար և առատ առատ եկամտներ կապեց, բայի սրանցից որրոց համար էլ մի հիւանդանոց շենել տուաւ, Ետիւդուլէ (Կօթը աշտարակ) տառած տեղին մօտերը, զրագէտներին պաշտպանեց և պատանեկաց զաստիարակութեան համար հարկաւոր եղած մի շատ զբքեր հրատարակել տուաւ : Իր մահուան օրը ընդհանուր սղոյ օր եղաւ կոսդանդնու պօլսոյ համար, Սուլթանից սկսած մինչեւ յետին հսկատակը նրա մահուան վրայ լալիս էին : Հայոց Յունաց, Քաթոլիկաց պատրիարքներն ու Հրեաից մեծ Ռարքին իրանց ժողովրդով նրա թաղման հանդէսն էին կազմում : Խաղաղ Յարութիւնը 1835 թուին մեռաւ : Տիւղեանց գերդաստանը զրամանոցը վարումէ, Տառեանց գերդաստանը վառաթարանը \* սեղանաւորների մէջ երեելն եղածներն են, Գրիգոր և Կարապետ եղբարբ Երամեան Եղիպառի սեղանաւորները : Ալահիմերտի Օղլու, Ճեղայիրլի, Պետրոս և Գէորգ Խորառանձի Մաքսուտ, Ճանիկ, Միհար, Թընկըր և Պարտիղպան :

Երկար ժամանակ, Տաճկաստանի Հայք մի աննման տղիւտութեան մէջ ընկլիմած և մինչեւ իրանց լեզուն անդամ մառացած վերջապէս կրթութեան և ուսման հարկաւ որութիւնը զգացին \* սակայն կոսդանդնու պօլիս և Զմիւնիա միշտ, թէ եւ շոտ քիչ լուսաւորութեան նշոյն իրանց մէջ պահած ունեին որնոր իրանց արեմոքից էր դալիս և իրանց մէջ մի քանի զրագէտներ և աստուածաբաններ գտնուումէին : Կոսդանդնու պօլիս շատ անդամ, բուն Հայոց և Քաթոլիք Հայոց մէջ եղած յաւալի կրօնական կո իւներու ասպարէզն եղաւ \* այս կը ուիւները շատ անդամ Յիսուսնաններից էր վեր զալի, մինչդեռ Զմիւնիա միշտ կապուած մնաց իր հին Հայաստաննայց և կեղեցւոյն վրայ, որոնց առ ջեւ Հռավիմայ քարոզիչներու բոլոր ջանքերը խորտակուեցան :

Արտիւլ Մէծիափ վերածնիւ թադաւորութենից հետէ,

Ցա՛նկաստանի Հայք նոր նոր արտօնութեաներ են վայելում, փոքր առ փոքր զղումնեն հասարակաց կրթութեան և ուսման հարկաւորութիւնն ու լաւութիւնը : Այս վերջի տասնուշինդ տարուայ միջոցումը հարիւրի չափ աղղային դրագոցներու կանոնու իլլ տեսնուեցաւ այս տէրութեան քաղաքներու և դիւղաքաղաքներու մէջ . այս դպրոցներումը երկու սեռի երեխայք էլ քրիստոնէական, բարոյական և դրականական կրթութիւն և ուսումնեն ստանում: Միայն կոսդանդնուպօլս սումն երևունից աւելի զպրոց կայ չորս հազար հինգ հարիւր աշակերտներով և տասնուշինդի չափ էլ աղջկանց դպրոց երկու հազար աղջիկ աշակերտներով, որոնք աղջի ծախըռն են ուսում և կրթութիւն առնում և որոնց մէջ սորվացնում են Հայոց լեզուն, օտար լեզուները, աղջային պատմութիւնը, մաթէմատիքական ուսումնիքները, քրիստոնէութեան ուսումը աշխարհագրութիւն, դժագրութիւն և երգեցողութիւն: Սուրբ գիրքն ամեն տեղ զործ է ածւում, վասն զի բարոյական դաստիարակութեան հիմունքն է համարուած : Զմիւռնիոյ Հայոց ուսումնարանն, որնոր Արքոյն Սուհակայ և Արքոյն Սեաւրուայ անուններն է կրում իր վրայ, ամենից հոչակառ և ամենից մեծն է բոլոր Ցա՛նկաստանումը : Խոկ աղջկանց ուսումնարանը հիմնած է կոսդանդեանց բարեպաշտ և պատուար Ցիկինը : Եռասուֆեանց Պողոս Պէղի և իրա եղբայր Պետրոս աղայ հարուստ վաճառականի դերգաստաննը, որմէ յառաջ է եկել կոսդանդեան Ցիկինը, Զմիւռնիոյ ուսումնարանի պահպանութեան համար հարկ եղած զումարին մեծ մասը տուած է : Կոսդանդնուպօլսումը Ցիւղիանց գերդաստանն էլ նշանաւոր եղած է Հայ Քաթոլիկ աղջկանց համար առանձին մի ուսումնարան հաստատելով : Այս երկու քաղաքներից յետոյ դաշխան, երդում, Վան, Գիարակէքիր, Եղեսիա, Տրարիզոն, Թուսալժ, Կեսարիա, Պրուսա, Ամասիա, Քէօթահիա Եղեկիմիտ, (Նիկոմիտիա) Անդրիանուպօլիս, Վարնա, Թէքիրտաղ, Ատանայ, Տարսոն, Մուշ, Անթէր, Ակն, Սերաստիա, Էնկիւրիւ, և ուրիշ քաղաքներ, որոնց մէջ մէկ կամ երկու զպրոցներ կան աղայոց և աղջկանց համար :

Եղիպատումը, տեսնումնենք նրա վերածնիշ Մեհմետ:

Ալի փաշայի ժամանակը, Պողոս Պէդ Յուսուզիքը իրա արտաւքին գործոց պաշտօնեայն, որ մեծ արժանաւոր և երեելի քաղաքաղէտ մարդ էր, և մեծ ծառայութիւններ է արած Աղիալտոսին 1835 և 1840 թուերու պատերազմներին. Նմանապէս Նուպար Պէղը, որ նոյն ասպարիզումն երեելի է, երկուսն էլ ազգով և կրօնով Հայք են : Սայիտ փաշայի այժմեան պաշտօնեայն էլ Սական Պէդ անունով, մի Հայ է :

Պէտք է յուսանք, որ Ֆրանսիոյ, Անդղիոյ և Տաճկաստանի ընդդէմ հիւսիսի հսկային արած փառաւոր պատերազմից յետոյ, 1854-ից մինչև 1856 Տաճկաստանի քրիստոնեայք առաջաւրակ, և մասնաւորապէս Հայք մի նոր թուական կիայիլեն, և իրանց վիճակը քիչ շատ կլաւանայ, և իրանց մըտուորական և ընկերական կործանուած վիճակից կվերականդնին և իրանց տղիտութենից և թշուաւութենից կալքնին :

Տաճկաստանից յետոյ Ռուսաստանն է դաշի, որ տասնիններորդ գարու սկզբիցը փոքր առ փոքր Հայտոտանի մի նշանաւոր մասին 1,250,000 բնակիչներովը, որոնց 500,000 Հայքին տեր եւզաւ : 1828-ից, որ ոյս երկիրին Ռուսաց տիրապետութեան տակն ընկնելուն տարին է, իրաւ է, որ Հայոց նիւթական և ընկերական վիճակին մէջ մի կարևոր լաւութիւն եղած կայ ազգատւելով Քրդերու և Պարսից տռած նեղութիւններից և Հարստահարութիւններից, որոնց ենթարկուած են միշտ հարեան եղող երկիրներու քրիստոնեայք.

Հայոց ազ-

գային ուսումնարան, զրեթէ ամենեն չկայ Ռուսաստան, ա-  
մէն տեղ կառավարութիւնն է այս տեսակ հաստատութիւն-  
ները պահպանողը, ամբողջ Ռուսաստանու մն ուրիշ ազգային ու-  
սումնարան չենք կարող ցոյց տալ, բայց միայն Լաղարեանց  
1815-ին Մոսկուայում հաստատած և պահպանած ուսումնա-  
րանը, ուր տեղ մինչև այսօր մինչև 600 աշակերտ կրթու-  
թիւն և ուսում առած են : Նոր Նախիջևանու և Տվիլիդու-  
Հայոց ուսումնարանները նմանադէս, արտօնութիւն վայելող  
ժողովրդեան կարգին զաստիարակութիւն տալիս են :

Որուսաց Հայաստանումը, ուր Հայը հասարակաց իրաւուն-  
քից զրկուած չէ, տեսնում ենք նրա քաղաքական, ղինուորա-  
կան, պատերազմական ծովային և ամէն կարդի պաշտօնավա-  
րութեան մէջ մի Եւրոպական համբաւ ստանալու : Զօրագետ և  
իշխան Պէհրուղեանցի, իշխան Արկայնաբազուկ Արզութեանցի  
և իշխան Մագաթեանցի անունները բաւականին ծանօթ եղած  
են Եւրոպիոյ<sup>1</sup> :

Պարսկաստանը թէև Մահմետական է Տաճկաստանի նը-  
ման, բայց միշտ քրիստոնէից և Պարսից հաւասար լինելն ո-

1 Արանց միջից մի քանիսին անուններն այստեղ կը շենք, որոնք 1734 թուից այս տէրութեան մէջ մեծ մեծ պաշտօններու են հասած : Եղիազար Քրիստոնէորեան, Յովհաննէս Խուզակաշեան տռաջին Հայք են, որոնց Մեծն Պետրոս զօրապետութեան տատիճանին հասցրուց, Վերջինը հրամանառուարէր 1722-թուի պատերազմին համար առանձին Հայերից կաղմուած մի բաժին զօրաց : Եղիազար Նաղարեանց Եղիա-  
զարեանցն, այն ազնուական գերդաստանին զլուխն է, որ 1705-թը-  
ուին բնակուել է Ռուսաստանում, և անմահացրել է իրա անունը  
իրտ ազդին դաստիարակութեան համար Մոսկուայում հաստատած ու-  
սումնարանով : Աւան խան զօրապետը, Պարապազում տիրող իշխան-  
ներից մինը, որ յետոյ Ռուսաց բանակը մտաւ, Յովհաննէս Եղիազարեանց  
այժմիան խորհրդական տէրութեան, Յովհաննէս Արամէլիք Բ. Իշխան  
և զօրապետ Պեթրոպերկի եւ Գիէլի պիտարանի եւ ձմեռանոցի տնօրէն,  
Ռուսիոյ, Յորանսիոյ հետ ունեցած մեծ պատերազմումը 1812-ից մինչև

բինաց առջև ճանաչելէ : Հայոց թիւն այսօր Պարսկաստանումն այնքան մեծ չէ որքան որ էր սրանից երեսուն տարի յառաջ, Ռուսաստանը նրանց թիւը պառակտեց և նուազացրեց : Շապուհի հինգ ժամանակներում տարած գաղթականները բռնըռվին աներեցին են եղած : Այսօրուայ Պարսկաստանումը զտնուածները Շահ Աբբասի 1604-թուին Հայաստանից տարածներին մնացորդներն են : Սրանց միջից մի մասը ստիպուեցաւ իր հաւատն ուրանալու, միւս մասն էլ արևելեան շնորհաստան անցկացաւ և այն տեղից էլ ձավակղին Հիմա նրանցից միայն 150,000-ից մինչև 180,000 մնացել են ամբողջ Պարսկաստանումը . Միտաեղ առնելով և Պարսից Հայաստանին իր Մաքու, Խոյ և Սամաստ քաղաքները : Սրանց մտաւորական և ընկերական վիճակը Պարսից վիճակի նման ողորմելի է, որոնցից ամենենին չեն տարբերիլ և որոնք նրանց պէս ենթարկուած են կառավարիչներու հարստահարութեան . կաշառառութեան և անիրաւ կամեցողաւթեան : Զինուորական ասպարէզնու քաղաքական ծառ այսութիւնները Հայոց համար մատչելի ընելով նմանապէս այս տեղ էլ տեսնում ենք Հայոց երեխելի ըլելը <sup>4</sup> :

Ամբողջ Պարսկաստանումը, զուցէ թէ միմիայն մէկ ազգային ուսումնարան կայ, որնոր յիշատակելու արժանի լինի, այն է Սպահանու ուսումնարանը . Դաւրիժու, Համագանու, Թէհրանու, Խոյու, Սալմասու, Որմիայի և Մաքուի ուսում-

1814 երեւելի եղան նմանապէս Դաւիթ Դիլանեանց, Արամէլիք Ա. իշխան զօրապետը և Մէլիքեանց զօրապետը, Ռուսիոյ Տաճկաստանի հետ ունեցած կռւումը 1809-ից - 1812-ին Մանուկ բէզ իշխանը տէրութեան խորհրդական, Քրիստափոր Եղիազարեանց և նրա եղբայրն Յովհաննէսն այսօր սենեկապետ և խորհրդական են կայսրութեան, ուրիշներն էլ կան տակաւին, որոնց անունն եւ աստիճանն ինձ անկատար կերպով ծանօթ լինելուն նրանց վրայ ոչինչ չեմ խօսիլ :

1 Ահաւասիկ այն մեծ մարդկանց ցուցակը, որոնք 1810-թուից նըշանաւորութիւն են ստացել այս երկրումը, Մանուշտը խան, Խոսրով խան, Սէմի խան, Աւադ խան, Վիւլյամն խան, Յարութիւն խան, Ենաքօլօսլով խան, Դաւիթ խան և ուրիշներ էլ, որոնք նշանաւոր են եղել բանակումը, քաղաքականութեան և պաշտօնատարութեան մէջ Պարսկաստանումը :

առանները. թէոր կան, երեւելի չեն և ամենեին յիշատա-  
կելու էլ անորդան :

Աւստրիոյ Հայերը գրեթէ անեւեռյթ են եղած. եղած-  
ների միջից շատերն իրանց լեզուն և պատմութիւնն անդամ  
չեն իմանում: Մաճառստանում, բանատում և Դրանսիլվա-  
նիում ցրուած՝ բնիկ բնակիչներուն հետ խառնուելով, նրանց  
կրօնն ու լեզուն են վեր առած: Բոլոր Աւստրիոյ մէջ միմիայն  
Սուչովո քաղաքումը. Հայք տակաւին անարատ են պահած ի-  
րանց աղղային կրօնն ու լեզուն :

Անդղիական Հնդկաստանի, Սուբարայի և Ճավոյի Հայերը  
թէե սակաւաթիւ են, բայց շտորաբձր են իրանց Ռուսաստա-  
նի. Տոճկաստանի. Պարսկաստանի և Աւստրիայի աղգայիններից.  
իրանց քաղաքային, մտաւորական և բորոյական յառաջադի-  
մութեան մէջ. յարդանօք կարող ենք յիշել նրանց հայրենա-  
սիրութիւնը. նրանց քաղաքակրթութիւնը և նրանց հաստա-  
տուն և զանազան դաստիարակութիւնը :

Կառսրումայս տեսութիւնն այն կարեւոր զէպքերու պատ-  
մութեամբ, որոնք տեղի ունեցան Հայաստանումը անցկացած  
զարումը և որոնք Հայերուն վոխանակ մի կանոնաւոր զոյու-  
թիւն տալու. հեշտացրին Պարսկաստանի կործանումը և Ռու-  
սաց հաստատութիւն այս երկիրներումը: Տամնութերոդ զա-  
րուն ոկզբումը Պարապաղը, որ բերբի, Ճիս և լեռնոտ երկիր  
է Երասխ և Կուր գետերու միջումը և իրա միջաւմունի Արցախ.  
Սիւնի. Աւտի մեծին Հայաստանի երեք նահանգները. 200,000  
Հայ և 100,000 Ռուբը և Պարսիկ բնակիչ ուներ: Պարսից տի-  
քապիտութիւնն այս տեղ միայն անունով էր. Պարարաղը մի  
պարզ հայեական տերութիւն էր հինգ նահանգների բաժան-  
ուած. Զարարերդ, Գիւլիստան, Վարանդայ, Խաչէն և Տուղախ.  
ամէն մինը մի Հայ իշխանով էր կառավարուում. որոնք ասուում  
էին Մէլէք կամ Մալէք, որ արտպերէն թագաւոր է նշանա-  
կում: Գաղտնի թղթակցութիւն և պատղամատ որութիւն ըլ-  
նելուց յետոյ Բառիէրան, որ արեւելքի քրիստոնէից բարեկամն  
էր. Հայաստանն ու Վրաստանը Պարսից լուծից աղատելու  
միտքն յղացաւ: Մինաս վարդապետ և խորայէլ Օրին 1706-ին

բաւիերայի կայսրընտիրը Պեթրոսը դրկեց մէջին Պետրոսի  
զործակցութիւնը խնդրելու այս բանիս համար :

Ուռւսաց դահլիճը այս դիտաւորութեան մէջ իր ազդես-  
ցութեան և տիրապետութեան ապագայ աճեցողութիւնը տես-  
նելով, որ միշտ երեակայում էր Կովկասից անցկենալը, շատ հիա-  
ցաւ և ուրախ եղաւ : Խորայէլ Օրին 1707-թուին Պետրո-  
սուրկից իրքեւ զեսպան Հռովմէական քահանայապետ կայսրից  
Պարսկաստան դրկուեցաւ իրերու վիճակից տեղեկանալու և  
Հայաստանցւոց մտքերն էլ պատրաստելու : Խորայէլ իր դար-  
ձին իմաց արաւ կայսեր, որ բացի Վարաբաղից, Շամախին ու  
Սլնախը ոտքի վրայ էին կանգնացրել 17,000 մարդ և թէ մի  
նշանի էին սպասում ապստամբելու համար : Պետրոս միքանի  
ժամանակից յետոյ Պարսկաստան իր և զործակալ դրկեց Նա-  
ւասարդ անուն Հայը, որ առաջնոյն պէս յաջողակ մարդ էր  
և ինքն էլ պատրաստուեցաւ իր բանակին զլուխն անցկենա-  
լով, զնալ և Հայոց օպնութիւն հասնել :

Պարսկաղն իմանալով Պետրոսի գոլը դէսի Տէրրէնդան-  
կախութեան դրոշակը բաց արաւ 60,000 մարդ զէնք առա-  
ձեռին, դաւ իթ Սիւնեաց իշխանը, որ մեծ զինուօրական հանա-  
ձարով և հայրենեաց համար զլուխը զնող մարդ էր, Վրաց  
թաղաւոր գէորգ կամ Շահ Նաւազի հետ վերջին զործու-  
ղութեանց հիմունքը օրոշելուց յետոյ, 1721-թուին Տիվիսիսից  
զուրս եկաւ 40,000 մարդով և զնաց Սիւնեաց դաւառը դր-  
բաւեց և թշնամին այլևայլ տեղեր յաղթուելով, մի մասամբ  
ջնջուեցաւ, մի մասամբ էլ զուրս քշուեցաւ : Սիւնեաց նահանգն  
առ ժամանակ օտարներու լուծիցը սպասուեցաւ : Երբ Դաւ-  
-իթ Սիւնեաց երկրումն էր պատերազմ տալի թշնամւոյն, իր

1 ժողովածոյ յիշատակարանաց Հայոց պատմութեան համար, հատ. Բ.  
երես 52. 57 և 189, Զամիչեան և Զաքրչեան միսիթարանները, իրանց  
Հայոց պատմութեան մէջ, չեմ իմանում ինչ սխալ տղրիւրից քաղելով, այս  
կարիւր դէսքին պատմութեան մէջ, մնձ և ծանր զանցառութիւններ  
և սխալանքներ են արել : Մեր աղրիւրը ընդ հակառակն Հայաստանի մի  
մեծ մարդու երկու յիշատակարանից են քաղած, որ այս զործքին ման-  
րամատն իրերու վրայ տեղեակ և ժամանակակից է եղել, այս յիշատա-  
կարանից մինը 1780-թուին Սուորով Մարտաջախտին և միւսն էլ  
1790-ին Կատարինէ Բ-ին է հաղորդուած :

երկու զօրապետները, Աւան-խան Միրզու և Աւան Ռիզզալի  
ուրիշ երկու բաժին զօրքով Վարապաղը պաշտպանումէին :  
Պարսկաստանն այս միջոցումը Աւղաններու ապստամբութեամբը  
պառակտուած, որոնք 1722-թուին Շահ Հիւսէյինը դահիցն  
իջեցրին, իրան սկաշտպաններու հետն էր և վախենալուկ չեր ։  
Ակղկիները կամ Տաղիստանի լեռնականք Պուսիոյ կայսեր և  
նրա բանակի ներկայութեամբը, որ Տէրբէնդի մօտերու մն  
էր կանգնած, չհամարձակեցան արշու անքներ անելու : Ուստի  
Հայոց ուրիշ բան չեր մնում անել, բայց միայն իրանց երկա  
րու մն եղած թաթ որներն ու Պարսիկները հալածել և Սարը  
Մուստաֆա փաշային էլ դուրս հանել, որ եկել էր տիրապետելու :  
Պառսիոյ կայսեր Տէրբէնդ հասնելու լուրն առնելով Վարա  
բաղի Մէլիքները, Վրաստանի Ամանթանկ թաղաւորին հետ  
նրան գիմաւորելու գնացին 35 կամ 40,000 մարզով կուր գետի  
ափանց վրայ : Կործումէին որ կայսեր ներկայութիւնը  
այս տեղանքներում և իրան դէնքը ձեռին առած միջամբ  
տութիւնը իրանց նուածողներիցը կաղատէ, սակայն բոլորովին  
խարուեցան : Պետքու Տէրբէնդին, բաքուին և Կիրանին տիւ  
րելուց յետոյ իր մայրաքաղաքը գարձաւ, թողելով Հայերն ու  
Վարացիներն իրանց թշնամիներու ձեռին, որոնք իրանց յատուկ  
զօրութեամբը մնալով, սրնոր կարի սառին էր իրանց թրշ-  
նամիներու զօրութենից, պարտաւորեցան մի քանի տարի աւ-  
րիւնաշեղ կռիւներ անելուց յետոյ նորաւոց նրանց իշխանա-  
պետութիւնը ճանաչել ։ Առը Մուստաֆա, Գանձակի կառա-  
վարիչը, կայսեր քաշուելուցը քաջալերուելով մի յարձակում  
արտե Վրաստանի վրայ, ուր տեղ սուկալի կոտորածներ արտե-  
ոյն տեղաց իր զէնքերը Վարապաղի վրայ՝ դարձրուց, Աւան  
խան Մէլիքը, որ հրամանաւոր էր միաբանեալ իշխաններու  
բանակին, Մուստաֆա փաշային դարան լարեց, ուր տեղ 35,000  
Եւնիշէրիներով կազմուած բանակը բոլորովին կոտորուելով  
ջնջուեցաւ ։ Իսկ ինքը մահուանից փախելով Երևանի քեր-  
պումը ապաստինեցաւ, ուր տեղ շուտով էլ մի բանակ կաղմեց:  
Խակ Դաւիթ իշխանը, Աճանտն, Կապան, Զաւանտուր, Բառ  
զարերդ, Գիւնէյի և Մէղրի գաւառներին տիրելուց յետոյ, որ  
իր զլիաւոր տեղն էր, Նախիջևանի խոնին դէմ մի ճակատա-

մարտում յաղթուեցաւ : Ղարաբաղի, 1724, 1725, 1726, 1727  
և 1729 թուերում<sup>1</sup> զրկած զեսպանները թուսիոյ արքունիքից  
սգնութիւն ինչը լուց են տալի ինչ իրա աստիճանի հասած  
լինելը և Աարը Մուստաֆա փաշան անհամար թիւրքմէններով,  
Քրդերով և Թաթարներով կազմուած մի բանտկի դլուխն անց  
կացած Սիւնեաց երկիրը մտաւ և գնաց Հայիձորի առջեւ բաւ-  
նակը դրաւ, որնոր առ ժամանակեայ կառավարութեան աեւ-  
զին էր և Գաւիթ մի յաջողակ ձեռնարկութեամբ, ստիսեյրուց  
նրան բանակը վերցնել և դաշտին վրայ նրան հետ կռու ելով  
յաղթեց : Գաւիթի մեռնելուց յետոյ 1727-թուին Մխիթարն  
իր ընտիր զօրոպետներից մինը, իրա տեղի անցկացաւ և իր  
հայրենիքը պաշտպանեց մինչև 1727-թիւն, երբ մի քանի  
զաւաճաններու ձեռքով սպանուեցաւ և որոնք նորունց օսաւ-  
րին յանձնեցին իրանց հայրենիքը, որնոր տակաւին Հայոց  
թափած արիւնովն էր ուսուզուած անկախութեան համար :

Պարսկաստանը տասր տարի վատարի իշխաններու ձեռ-  
քով կառավարուելով, վերջապէս 1732-թուին իրա զլուխու-  
նեցաւ Նատիրը : Այս ահարկու պատերազմովն երկու անդամ  
Յսմանցւոց երկու բանակներին յաղթելով, մինր Եջմիածնի մօտ  
միւսը կարսու, Հայաստանի և Վրաստանի մեծ մասին վրոյ  
տիրեց : Ղարապաղի Մէլիքներուն իրան Շահաչել տալու հա-  
մար, որոնք այնչուփ քաջութեամբ իրանց հայրենիքը պաշտ-  
պանելէին, նրանց ամենաւն պարզեներ տուաւ և իրանց կոլ-  
ուածոց տէր արտւ և Այս մէլիքները, որոնք մինչև 1746-ին  
երբ Նաղրշահ մեռաւ բացարձակ տէր էին Ղարապաղի, Ճի-  
ւանշիր մեծ ցեղի զլիստուոր Փանա խանը իրանց հակառա-  
կորդ ունեցան : Շահնազար, Ղարանդայի Մէլիքու, Զարա-  
բերդի Մէլիք Աղամին և Գիւլիստանի Մէլիք Յովուէփին մէջ  
եղած զաշնակցութենից վախենալով, ինքն էլ Փանա խանին  
հետ մի բարեկամութիւն արտւ, նրան իր բնակատեղին Շու-  
շուայ բերդը և իր աղջիկն էլ կնութեան տուաւ :

Մի փոքր յետոյ ծագած կո իւը Մէլիք Շահնազարի և  
Աղամու Յովուէփ Մէլիքների մէջ երկար և աղետալի եղաւ,

1 Ժողովածոյ յիշտառկարանաց Հայոց պատմութեան համար, հատ,  
թ. երես 293, 295.

ինչպէս ամբողջ Ղարապաղու անկախութեանն համար, նոյնական է երկու կողմի պատերազմողներու համար էլ: Տասներու տարի շարունակ պատերազմելուցը սպառուելով, Աղամամ և Յովսէփ ընկճեցան իրանց հակառակորդ Շահնազարին առ ջեւ և Վրաստան քաշուեցան: Փանա խանն այն ժամանակ նրանց երկիրներուն տէր եղաւ և իր կամքը ամենուն կատարել տըռուաւ: Մի քանի տարուց յետոյ, Գանձակի խանի միջնորդութեամբ Աղամ և Յովսէփ Փանայի հետ հաշտուեցան և իրանց երկիրները մտան իրրենրա հպատակ իշխան:

Կատարինէ Բ. Խըռըմի տիրելը վերջացնելուց յետոյ, իր աչքերը զէպի Կովկասեան միւս կողմի երկիրներու վրայ զարձարուց և Վակերիանոս Զուբովի կոմսը Նորունց Տէրբէնդի, Բաքուի և Շամախիի վրայ տիրեց: Բայց այս անդամ ամենենին խնդիրը Հայաստանի կամ Վրաստանի ազատութեան վրայ չէր կամ նրանց ազգայնութիւնը կանգնելու համար: Կայսրուհին պարզապէս կամենումէր, որ Պարսից լուծին տեղ իրանը դնէ որնոր որչափ որ ծանր էր տանելը, այնչափ էլ հատատուն և կանոնաւոր էր: Մէջւում Զարարերդի Մէլիք Աղամայ որդին, Արով Գուլիստանի Մէլիք Յովսէփայ որդին, Բախդամ Տուղարի Մէլիք Աւանի որդին Ռուսիութիւն գործակալաց վառաւոր և մեծ մեծ խոստմունքներից խափուած 1787-թուին(Աղուանից) Յովհաննէս կաթուղիկոսին. Հաւատարմութեան երդման թուղթեր տուել էին: Փանա խանին որդին Խոլրահիմ խանը իմանալով Ռուսաց խորամանկութիւնը, թունաւորել տուաւ կաթուղիկոսին և այս երեք Մէլիքներուն բոլոր կալուածներն ու երկիրները քարուքանդ արաւ: Հազարաւոր Հոյիր կատաղի Պարսկին վը բէժինդիր սրի տակն ընկան: Ուրիշ հազարաւորներ էլ ստիպուեցան սոսկալի տանջանքներով քրիստոնէութիւնն ուրանալու ուրիշ շատերն էլ իրանց բոյնը թողուցին ու գնացին ապահով տեղ գտնելու, Տէրբէնդ, Աժտէրխան, Ղզլար, Շամիօր, Սըղնախ, Թիֆլիզ և Տաճկաստան:

Աղա Մահմէտ խան Պարսից թագաւորը զայրացած իտրահիմ խանին վրայ, որ մերժել էր իրան հպատակ Ճանաչելու նրան, 1795-ին Ղարապաղի վրայ յարձակեցաւ, որ երկու տարի քանդեց, աւերեց մինչև որ Եռւշուայի տիրեց, ուր տեղ և իր

դերի զմանն էլ դառաւ, վասն զի այս քաղաքին մէջ սպանուեցաւ :  
Եթ մեռնելուց մէկ տարի յառաջ Վրաստանի վըոյ էլ յարձակեաւ  
ցաւ որ բոլոր վիճակներեց, Տփխիս, մայրաքաղաքը Պարսից զինա-  
ու որներու մոլեզնութեամբ երեք օր երեք գէշեր կրակի ով-  
կիանոս զառաւ, 16,000 զերի աղջիկ և տղայ, որոնցից 4000  
Վրացի և 12,000 Հայ էին Գէհրանի հարեմները բազմացնեաւ  
լու դնացին :

Այս բանս լոելով Պաղոս Ա. հրաման մոռաւ Պօտոմքին  
զօրապետին Վարապաղին տիրելու Վրաստանն էլ մի բանակ Ռուս  
զօրքով բանուեցաւ : Այսպէս Ռուսաստանը, որ ասանութերորդ  
դարուն սկզբաւմը Վարապաղու Հայոց բարեկամն ու պաշտ-  
ուանողն էր եղել, մի և նոյն դարուն վերջերումը նրանց շնոր-  
հալի վեհապետն եղաւ : Երկու ուրիշ փորձ և ջանք, որ Շա-  
միր<sup>1</sup> և Ամիր խան<sup>2</sup> ազնուական Հայերը արին իրանց երկիրը  
կանգնելու համար, ոչ մի յաջողութիւն չունեցան, և ողոր-  
մելի Հայաստանի երեք տէրութեանց մէջ բաժանուելով ա-  
մենադառն և ամենաղաժան զերութեան մէջ մնալու դուսա-  
պարտուեցաւ :

1 Անդղիական Հայութաստանում հարուստ վաճառականն Յանութերորդ  
դարուն վերջին կեսումը, միծ պումարով Վրաստանի թագաւոր Գէորգ  
Ֆիլիպ և Հերակլ Բ Հայութան առաջի նահանգը զնեց մեծին Հայա-  
ստանութիւնութեան ազգային կառավարութեան բանը դնէ :

Ա. Ա. Ա. Ա.



